

# ՄԱՐԶԻԿ

հսլս

مارزیک

مجلة رياضية شهرية  
تصدرها جمعية الهومنتمن بيروت

marzig


SPORTS MAGAZINE

36-րդ ՏԱՐԻ 2017, ԹԻԻ 407

VOL. XXXVI N° 407

السنة السادسة والثلاثون - العدد رقم ٤٠٧

ՊԱՏՈՒԱԲԵՐ ԱՆՑԵԱԼԷՆ  
ՅԱՂԹԱԿԱՆ ԱՊԱԳԱՅ՝  
100-ԱՄԵԱԿԻ ՋԱՀՈՎ



# ԱՅՍ ԹԻԻԸ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ  
2 Մեծագոյն յաղթականը

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ  
4 Ներկաները  
4 36 տարուան պատմութիւն

ՈՂՋՈՅՆԻ ԽՕՍԸԵՐ  
6 Գիր օրհնութեան  
7 Գիր օրհնութեան եւ գնահատանքի  
8 Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան  
համահայկական 10-րդ մարզախաղերի  
մասնակիցներին  
8 Յանուն յաղթանակի  
10 Ողջոյնի խօսք  
10 Ուղերձ  
11 Միշտ հաւատարիմ մնալով ձեր կարգախօսին  
12 Մեր պարտաւորութիւնը՝ 100-ամեակի սեմին  
14 Յառաջ անասա՛ն, յառաջ անվեհե՛ր  
15 Մի՛շտ պատրաստ բարձրանալու

ՆԱԽՕՐԵԱԿԸ  
16 Մարզախաղերու ծանօթացման մամուլայ ստուլիսը  
16 10-րդ մարզախաղերու վարչական եւ մարզական  
պատասխանատուներու ժողովը  
17 Ափսո՛ս, ես այնտեղ չէի...  
18 Մարզախաղերու մասնակիցներուն յարգանքի  
տուրքը՝ Յեղասպանութեան նահատակաց  
յիշատակին

ԸՆԹԱՅՔԸ  
22 Համա-Հ.Մ.Ը.Մ.ական 10-րդ մարզախաղերը  
ազդանշանը կու տան միութեան 100-ամեակի  
յորբէլենական տօնակատարութիւններուն  
36 Հայկական բանակի զօրակցութիւն  
38 Դաստիարակչական հանդիպումները  
մարզախաղերու մասնակիցներուն  
կը ծանօթացնեն Հայաստանն ու Արցախը  
39 Խանասորի արշաւանքի եւ Լիզպոնի  
գործողութեան նուիրուած յեղափոխական  
երգերու երեկոյ  
40 Հ.Մ.Ը.Մ.ի պատուիրակութեան այցելութիւնը  
Սփիւռքի նախարարին  
41 Շնորհակալութեան եւ հրաժեշտի հանդիպում  
42 Յաղթանակի պարահանդէսը 1918...  
մասնակիցներով  
42 Երբ մարզիչը մարզիկուհիին ձեռքը  
կը խնդրէ... Կասկադի կատարին

# ՄԱՐԶԻԿ

36րդ Տարւ, ԹԻԻ 407, 128 Էջ, Մեկ՝ 8000 Լ.Ո.  
ՀՐԵՏԱՐԵՎՈՒԹԵԱՆ ԵՆԶՆՈՒԹԵ՛Ս՝ ՆՈՂԵՄԵՐ 2017-ԻՆ:

ՀԱՅ ՄԱՐՄՆԱԿՐԹԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԵԱՆ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ-

**Խմբագիր:** Վիզէն Աւագեան (vicken.avakian@homenetmen.org)

**Խմբագրական կազմ:** Գրիգորիս Պողարեան, Մարո Քէշիշեան, Սեւան Նազարեան, Տիրան Շահինեան:

**Վարչական կազմ:** Պարթիկ Կիւլպէնկեան, Արօ Մոսիկեան, Սիրվա Սաղրբեան, Յարութ Ալանաճեան, Նազօ Հապիպեան, Ռիթա Օղուլեան, Արլին Շամնասեան:

**Էջադրում եւ ընդհանուր ձեւադրում:** Արշօ Պալեան, **Կողքի պատրաստութիւն:** Y Concept International, **Գրաշարութիւն:** Շողիկ Պոյաճեան, **Տպագրութեան պատրաստութիւն:** Photogravure Paklayan, **Տպագրութիւն:** Համազգայինի «Վահէ Մէթեան» տպարան, Պէյրութ, Լիբանան:

**Քաժանորդագրութիւն:** «Մարզիկ» կը հասնի աշխարհի 25 երկիրներու քաժանորդներու: Տարեկան քաժանորդագրութեան սակ ճշդուած է՝ Լիբանան 20 \$, Միջին Արեւելեան եւ Եւրոպական երկիրներ 70 \$, Մ. Նահանգներ եւ Աւստրալիա 75 \$: Լիբանանի մէջ բերթին հարավալճանորի այս բիւիւն սակն է 8000 Լ.Ո.: **Ցրում:** «Մարզիկ»ի ցրումը Լիբանանի մէջ կը կատարուի յատուկ ցրուիչով (հեռ. 71/239209): Թերթը կարելի է սրբանալ նաեւ «Համազգային»ի գրասխանութէն: Լիբանանէն դուրս բերթը կը սրբացուի «Liban post»ի միջոցով:

«Մարզիկ» ամսաթերթ կը հրատարակուի Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան կողմէ - Հասցէ: «Սեւան» շէնք, քիւ 77 փողոց, քիւ 4 հատուած, Պուրճ Համուտ, Պէյրութ, Լիբանան

Պուրճ Համուտ, Պէյրութ, Լիբանան ☎ 9611248043, 9611260117 ✉ marzig@Homenetmen.org 📞 80486 Պուրճ Համուտ, Լիբանան

📱 44 Homenetmen - Հ.Մ.Ը.Մ. 🌐 www.Homenetmen.org

44 Համա-Հ.Մ.Ը.Մ.ական 10-րդ մարզախաղերուն փակումը՝ լաւագոյն մարզիկներու պարգեւատրումով

49 Համա-Հ.Մ.Ը.Մ.ական 10-րդ մարզախաղերու ընդհանուր արդիւնքները

#### ՄԱՐԶԱԽԱՂԵՐԸ

52 Հ.Մ.Ը.Մ. Լիբանան ֆութպոլի ախոյեան

60 Ֆութսալը կ'ունենայ համա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզախաղերու տղոց ու աղջկանց իր առաջին ախոյեանները

66 Արեւմտեան Մ. Նահանգներու երեք տղաքը համա-Հ.Մ.Ը.Մ.ական պասքէթպոլի ախոյեան վեցերորդ անգամ ըլլալով

74 Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ. կը տիրանայ պասքէթպոլի աղջկանց առաջնութեան բաժակին

80 Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի աղջիկները վոլիպոլի առաջնութեան բաժակը կը պահեն իրենց մօտ

82 Լիբանան կը վերահաստատէ աթլէթիզմի մրցումներուն իր գերակշիռ տիրապետութիւնը

90 Աթլէթիզմի մրցումները կ'որդեգրեն 4 նոր մարզածէ եւ կը հաստատեն

համա-Հ.Մ.Ը.Մ.ական 8 նոր մրցանիշ

94 Մարի Սոմաքեան եւ Միրնա Պզտիկեան 11 մրցանիշով լողի համա-Հ.Մ.Ը.Մ.ական մրցումներուն կու տան յատուկ փայլք

100 Հ.Մ.Ը.Մ. Լիբանան կը տիրանայ փինկ-փոնկի ինը մետալներէն հինգին

104 Հ.Մ.Ը.Մ.ական թենիսը կ'ունենայ իր նոր ախոյեանը՝ Էտմոն Այնճեան

106 Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ. Հրաչեայ Վարդանեանի շնորհիւ դարձեալ ճատրակի ախոյեան

#### ՊԱՏԳԱՍՆԵՐ

108 Տեսիլքի միութիւնը՝ Հ.Մ.Ը.Մ.

111 Դէպի նոր հարիւրամեակ՝ խանդավառ ու հաստատ քայլերով

#### ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ

112 «Տալը նուիրական բան է եւ ես պատրաստ եմ մինչեւ կեանքիս վերջ ազգիս ու Հ.Մ.Ը.Մ.ին տալու», «Մարզիկ»ին կ'ըսէ Սարգիս Տէր Պետրոսեան

#### ԼԱԻՎՈՅՆՆԵՐԸ

116 Համա-Հ.Մ.Ը.Մ.ական 10-րդ մարզախաղերու լաւագոյն մարզիկներն ու մարզիկուհիները

118 Համա-Հ.Մ.Ը.Մ.ական 10-րդ մարզախաղերը վերապրեցուցին բազմավաստակ

16 Հ.Մ.Ը.Մ.ականներու յիշատակը

#### ԼՈՒՍԱՆԿԱՐԶԱԿԱՆ ԱՆԴՐԱԴԱՐՁ

124 Իրաւարարներ

126 Մարզիչներ

127 Մարզիկներ

128 Համակիրներ



# ՄԵԾԱԳՈՅՆ ՅԱՂԹԱԿԱՆԸ

**Վ**արագոյրը իջաւ համա-  
Հ.Մ.Ը.Մ.ական 10-րդ  
մ ա թ գ ա խ ա ղ ե թ ու ն  
վրայ: Պատուիրակու-  
թիւններ իրենց շրջան-  
ները վերադարձան յաղթանակի ցնծու-  
թեամբ կամ... պարտութեան յուսախա-  
բութեամբ: Միջանիշներ պատմութեան  
անցան, նկարներ եւ տեսանիւթեր դիմա-  
տետրի էջերը ողողեցին:



թիւններու պատկառելի անցեալ եւ  
վաստակ ունին իրենց ետին: Հ.Մ.Ը.Մ.-  
Հ.Ա.Ս.Կ.ի տողց ու աղջկանց խումբերը,  
իրենց արդիւնքներով եւ բարձրորակ խա-  
ղարկութեամբ, գերազանցեցին բոլոր նա-  
խատեսութիւնները եւ յաջողեցան տպա-  
ւորել ու հմայել ամէնէն դժուարահաճ մար-  
զասէրները նոյնիսկ:

Տակաւին, Հ.Մ.Ը.Մ.ի ո՞ր շրջանն է, որ  
կարգապահական նուազագոյն խախ-  
տումներով կրնայ նման մարզախաղերու  
մասնակցիլ, յաղթանակ թէ պարտութիւն

Ու հիմա, ընդհանուր արժեւորման  
փորձ մը կատարելով, բնական է հարցը-  
նել, թէ ո՞վ եղաւ մարզախաղերուն մեծագոյն յաղթա-  
կանը: Շատեր կրնան դիտել տալ, որ հարցումը անտեղի  
է, որովհետեւ գլխաւոր յաղթականը, անկասկած,  
առատելագոյն թիւով մետալներ եւ բաժակներ շահած  
շրջանն է: Ուրիշներ կրնան պնդել, որ յաղթականը  
շահուած մետալներու եւ բաժակներու թիւով չի ճշդուիր,  
այլ՝ մարզական ոգիով եւ միութենական տիպար ըն-  
թացքով: Մարզախաղերուն ամէնէն օրինակելի կեց-  
ւածք ցուցաբերած շրջանը պէտք է նկատել գլխաւոր  
յաղթականը:

արձանագրել եւ երկու պարագային ալ զանոնք ըն-  
դունիլ մարզական բարձր ոգիով, շնորհատրելով  
յաղթական մրցակիցը եւ խրախուսելով պարտեալ խըմ-  
բակիցը: Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի մարզիկները օրինակելի  
էին թէ՛ դաշտերուն մէջ եւ թէ՛ դաշտերէն դուրս:

Այս հաստատումներով, անշուշտ, անտեսած չենք  
ըլլար Հ.Մ.Ը.Մ.ի մնացեալ շրջաններուն ցուցաբերած  
միութենական ոգին եւ կեցուածքը, ոչ ալ թերագնահա-  
տած կ'ըլլանք անոնց յաջողութիւնները: Սակայն, Հ.Մ.-  
Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի պարագային յատուկ շեշտադրումի  
կ'ենթարկենք զանոնք, որովհետեւ անոնց ետին կը տես-  
նենք երկար տարիներու դաստիարակչական սերտը-  
ւած աշխատանքի մը արդիւնքը:

Այս բոլորը կրնան ճիշդ ըլլալ: Սակայն, նոյնքան  
ճիշդ կրնայ ըլլալ այլ մօտեցում մը, որ կ'ըսէ, թէ համա-  
Հ.Մ.Ը.Մ.ական 10-րդ մարզախաղերուն մեծագոյն յաղ-  
թականը, անտարակոյս, Հ.Մ.Ը.Մ.ի Հայաստանի շրջ-  
անը պէտք է նկատել՝ հիմնական քանի մը պատ-  
ճառով: Արդարեւ՝ Հ.Մ.Ը.Մ.ի ո՞ր շրջանն է, որ կրնայ իր  
անդամական շարքերուն կէտը ընդհանուր զօրաշարժի  
ենթարկել համա-Հ.Մ.Ը.Մ.ական նման հսկայական նա-  
խաձեռնութիւն մը յաջողցնելու համար: Հ.Մ.Ը.Մ.-  
Հ.Ա.Ս.Կ. յաջողած էր ամրան արձակուրդի շրջանին, իր  
անդամներուն կէտը, թերեւս ալ աւելին, գործի լծել՝ դաշ-  
տերու, պանդոկներու, բացման ու փակման մեծաշուք  
հանդիսութիւններու, ընկերային տարրեր ձեռնարկնե-  
րու, յաղթանակի ճաշկերոյթի եւ առօրեայ հազարումէկ  
աշխատանքներու կազմակերպման համար:

Իսկ ի՞նչ խօսք մարզախաղերու կազմակերպչական  
աշխատանքներու ընդհանուր ընթացքին մասին, որոնք  
յատկանշուեցան իրենց կանոնաւորութեամբ, ճշդապա-  
հութեամբ եւ բժախնդրութեամբ: Պատահականութեան  
մը ծնունդը չէին կրնար ըլլալ այս բոլորը, այլ՝ բաւական  
լուրջ ծրագրումի, կազմակերպումի եւ պատրաստու-  
թեան արդիւնք, հարստացած՝ նախորդ երկու մարզա-  
խաղերու կազմակերպման փորձառութեամբ եւ կեդրո-  
նական կազմակերպիչ մարմնի լայն աջակցութեամբ:

Հ.Մ.Ը.Մ.ի ո՞ր շրջանն է, որ կրնայ այդքան մեծաթիւ  
մարզական խումբերով հանդէս գալ եւ լուրջ մրցակից  
դառնալ այնպիսի շրջաններու, որոնք փայլուն յաջողու-

ձեռնաբար, ճշմարտութեան մօտ կը թուի այն տե-  
սակէտը, որ Հ.Մ.Ը.Մ.ի Հայաստանի շրջանը կը նկատ  
համա-Հ.Մ.Ը.Մ.ական 10-րդ մարզախաղերուն իսկա-  
կան յաղթականը, ինչ որ ուրախացնող եւ գօտեպնդող  
երեւոյթ է:

Վերջին հաշուով, Հ.Մ.Ը.Մ.ի Հայաստանի շրջանը



ունի հասուն երիտասարդի տարիք: 28 տարեկան է ան: Ու եթե ան նուաճած է կազմակերպական նման մակարդակ, պատիւ եւ հպարտութիւն է այդ միութեան մեծ ընտանիքին համար, որ անցնող երեք տասնամեակներուն ոչինչ խնայեց շրջանը այս վիճակին հասցնելու համար:

Հայաստանեան թէ համահայկական չափանիշով երեւոյթ է այս, որուն դիմաց կ'արժէ կանգ առնել եւ մտածել, որ ի՞նչ ընել եւ ի՞նչպէս ընել, որպէսզի նման իրագործում մը յումպէտս չվատնուի, այլ՝ ամբողջովին ծառայէ համազգային մեր նպատակներուն:

Տարիներու երազ էր Հայաստանի մէջ տեսնել միութենական ստուար շարքեր, որոնք սկառուտական գործունէութենէ անկախ՝ ծառայէին վարչական եւ մարզական լայն գործունէութիւն: Այսօր, երբ նման կացութեան մը պայմանները հասունցած կը թուին ըլլալ, անելով պէտք է գորգուրալ այդ կառոյցին եւ անոր բաղադրիչներուն վրայ, որպէսզի 28 տարի առաջ

սկսուած աշխատանքը օրէ օր անելի ծառայի, ուռճանայ եւ զարգանայ՝ հայրենի նորահաս սերունդներու քաղաքացիական առողջ կրթութեան ի խնդիր:

Ի վերջոյ, մետալներն ու բաժակները կը հիննան եւ կը մաշին, միութենական բարոյական կեցուածքները կը ծափահարուին եւ ատեն մը ետք կրնան մոռցուիլ, բայց ինչ որ բազմահարիւր Հ.Մ.Ը.Մ.ականներու ժրջան ջանքերով կ'իրագործուի, ինչ որ միութենական արժէքներու եւ արժանիքներու հաստատման կը ծառայէ, անկասկած, ամուր ենթահող կը հանդիսանայ նորանոր իրագործումներու եւ յաջողութիւններու: Եւ այս արդէն մեծազոյն յաղթանակն է միութեան 100-ամեակի սեմին՝

100-ամեակէն ետք մեր առնելիք քայլերուն հաշուոյն, Այսօրուան եւ վաղուան մեր հայրենիքին հաշուոյն, Կազմակերպ եւ հզօր հայութեան մը կերտման հաշուոյն:

### Հ.Մ.Ը.Մ.Ի 24 ՇՐՋԱՆՆԵՐ, 108 ՄԱՍՆԱՃԻԻՂԵՐ ԵՒ ՄԻԱՒՈՐՆԵՐ

**Հայաստան:** Երեւան, Մալաթիա, Զէյթուն, Կոմիտաս, Էրէրունի, Արովեան, Զարեմցաւան, Հրազդան, Արմաիր, Էջմիածին, Մարտունի/Զօրաբար, Մարտունի/Շովինար, Կիւմրի, Վերի: **Վրաստան:** Ախալքալաք, Ախալցխա, Թիֆլիս: **Ռուսիա:** Մոսկուա: **Լիբանան:** Պէյրութ, Չահլէ, Թրիպոլի, Պուրճ Համուր, Այնճար, Ծիւնի, Անթիլիաս, Ժրպէյրէ, Պաուշրիէ, Ռաուր: **Սուրիա:** Հալէպ, Դամասկոս, Լաթաքիա, Գամիշլի, Քեսապ: **Յորդանան:** Ամման: **Պաղեստին:** Երուսաղէմ, Հայֆա, Եաֆա: **Եգիպտոս:** Գահիրէ, Աղեքսանդրիա: **Իրաք:** Պաղպար, Մուսուլ: **Քուէթ:** Քուէթ: **Կիպրոս:** Նիկոսիա: **Յունաստան:** Աթէնք, Գոթիկիս, Սելանիկ: **Անգլիա:** Լոնդոն: **Աստրիա:** Վիեննա: **Ֆրանսա:** Փարիզ, Վալալան, Մարսէյ: **Հոլանդիա:** Այլեւ, Ալքմար, Առնհեմ: **Գերմանիա:** Մյունիխ: **Շուէդ:** Սթոքհոլմ, Վեստերոս, Սուրերթելիա: **Պուլիստիա:** Սոֆիա, Ռուսէ, Փրովրիլ, Վառնա, Շումէն, Պուրկաս, Տոպրիչ: **Գանատ:** Մոնթրէալ, Համիլթըն, Թորոնթօ, Քէմպրիճ, Սէնթ Գաբրիէլ, Լաւալ: **Արեւմտեան Մ. Նահանգներ:** Լոս Անճելըս, Սան Ֆրանսիսքօ, Ֆրէզնօ, Մոնթրէալ, Փասսարիս, Կլէմպէյ, Օրէնթ Բաունթի, Սան Գերմանիո, Սան Տիէկօ, Ինըրնոյ Էմիլիոյ, Սանթա Գաբրիէլ, Էրեանթա Հոլիոյ, Պրոպէնք, Լաս Վեկաս, Ֆինիքս, Ուոլնաթ Բրիք, Նորթ Հոլիվուդ, Սաքրամենթօ: **Արեւելեան Մ. Նահանգներ:** Ուաշինկթըն, Պոսթըն, Նիւ Եորք, Նիւ Երրզի, Շիքաօ, Ֆիլադելֆիա, Տիքոնոյ, Փրովիդընս, Ֆլորիդա, Ալաբամա, Շարլոթ: **Հարաւային Ամերիկա:** Պուերթօ Սպրէ, Գոյուպա, Մոնթեվիդէօ: **Աստրալիա:** Սիդնի («Անդրանիկ»), Սիդնի («Արաք»), Սիդնի («Կամք»), Սիդնի («Արարաք»), Մելբուրն:



## ՆԵՐԿԱՆԵՐԸ

### Հ.Մ.Ը.Մ.Ի

ԿԵԴՐ. ՎԱՐՉՈՒԹԻՒՆ  
 Գառնիկ Սկրոիչեան  
 Վաչէ Նաճարեան  
 Իշխան Եղիայեան  
 Բագրատ Եսայեան  
 Օշին Փիրումեան  
 Անդո Պահարեան  
 Վիգէն Զորքեան  
 Արմանուօ Թորգոմեան

ԿԵԴՐ. ՄԱՐՁԱԿԱՆ  
 ՅԱՆՉՆԱԽՈՒՄԲ  
 Մանուէլ Մարսէլեան  
 Դաւիթ Յակոբեան  
 Մեդր Պոյաճեան  
 Տիրան Շահինեան  
 Արմանո Զիլեճեան  
 Մեակ Կարապետեան  
 Անտրէ Տատայեան  
 Վահան Համամճեան  
 Փաթիլ Եսայեան

ՄԱՐՁԱԿԱՆ ՕԺԱՆԳԱԿ  
 ՅԱՆՉՆԱԽՈՒՄԲ  
 Բաֆֆի Գատեան  
 Անիթա Տէրտէրեան  
 Վաչէ Մարգիսեան  
 Շանթ Թորիկեան  
 Արամ Աւետիսեան  
 Շանթ Աւետիսեան  
 Հրայր Եսայեան  
 Վաչէ Տէր Դուկասեան

ԳՈՐԾԱՎԱՐՈՒԹԻՒՆ  
 ԵՒ ՀԱՄԱՅԱՆՑ  
 Վերա Բարսեղեան-  
 Տէր Պողոսեան  
 Նանօր Սթամպուլեան

«ՄԱՐՁԻԿ»  
 Վիգէն Աւագեան

ՊԱՆԴՈՎՆԵՐՈՒ  
 ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ  
 Անահիտ Գոլանճեան

ԼՈՒՄԱՆԿԱՐԻՉՆԵՐ  
 Յակոբ Պէրպէրեան  
 Ասատուր Ասոյեանց  
 Սոնա Բարեղեան  
 Գեորգ Դազարեան  
 Վիգէն Մանոյեան  
 Թորոս Տէր Արթինեան  
 Գաբրիէլ Թալալքեան

ՄԱՍՆԱԿԻՑ  
 ՇՐՋԱՆՆԵՐ-ԹԻՒԵՐ  
 Արեւմտեան Մ.Ն. 192  
 Հայաստան 144  
 Լիբանան 132  
 Արեւելեան Մ.Ն. 77  
 Աւստրալիա 68  
 Գանատա 54  
 Փարիզ 46  
 Լոնտոն 42  
 Հարաւային Ամերիկա 42  
 Բուէյթ 42  
 Մուրիա 38  
 Երուսաղէմ 24  
 Մարսէյ 19  
 Գահիրէ 17  
 Վալանս 13  
 Յունաստան 9  
 Մոսկուա 7  
 Կիպրոս 3  
 Պուլկարիա 1

Հ.Մ.Ա.Կ. 22  
 Նայիրի 10

## 36 ՏԱՐՈՒԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Հ.Մ.Ը.Մ.ի երբեմնի միջ-մասնաճիւղային խաղերուն (Հալէպ, Պէյրութ, Գահիրէ) մթնոլորտը վերակենդանացնող համա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզախաղերը ունին 36 տարուան պատմութիւն:

1981-էն մինչեւ օրս կազմակերպուած են համա-Հ.Մ.Ը.Մ.ական տասը մարզախաղեր Գանատայի (1981 եւ 1993), Արեւմտեան Մ. Նահանգներու (1985), Ֆրանսայի (Վալանս, 1989), Արեւելեան Մ. Նահանգներու (1997), Լիբանանի (2001), Յունաստանի (2005) եւ Հայաստանի մէջ (2009, 2013 եւ 2017):



Սկզբնական շրջանին, մարզախաղերը յատկացուած են մէկ մարզաձեւի՝ պասքեթպոլի (1981, 1990) կամ ֆութպոլի (1985, 1993): 1993-էն ըսկսեալ, իւրաքանչիւր մարզախաղի հետ որդեգրուած է նաեւ երկրորդ մը՝ աթլետիզմ (1993-ին, ֆութպոլի հետ) եւ վոլիպոլ (1997-ին, ֆութպոլի հետ):

2001-ի 6-րդ մարզախաղերը ֆութպոլի եւ աթլետիզմի հետ առաջին անգամ ըլլալով որդեգրած են փինկ-փոնկը, իսկ 2005-ի 7-րդ մարզախաղերը՝ պասքեթպոլի եւ վոլիպոլի հետ լողը:

8-րդ, 9-րդ եւ 10-րդ մարզախաղերը որդեգրած են նոր մարզաձեւեր՝ ճատրակ (2009), թենիս (2013) եւ ֆութսալ

(2017): Այսպէս, 2009-ի 8-րդ մարզախաղերը ընդգրկած են ֆութպոլ, պասքեթպոլ, փինկ-փոնկ, ճատրակ եւ լող: 9-րդ մարզախաղերը իրենց յայտագիրին վրայ ունեցած են ութը մարզաձեւեր. ֆութպոլ, պասքեթպոլ (կրսսեր, երէց), վոլիպոլ (աղջիկներ), փինկ-փոնկ, թենիս, ճատրակ, լող եւ աթլետիզմ: 10-րդ եւ վերջին մարզախաղերը ընդգրկեցին 36 տարուան պատմութեան ամէնէն մեծ թիւով մարզաձեւերը՝ 9 մարզաձեւ. նախորդ մարզախաղերու 8 մարզաձեւերու կողքին աւելցաւ ֆութսալը՝ տղոց ու աղջկանց բաժիններով:

Մասնակցութեան պատկերը եւս:

փոփոխութիւն կրած է համա-Հ.Մ.-Ը.Մ.ական մարզախաղէ մարզախաղ, յատկապէս վերջին տասնամեակին արձանագրելով մասնակից շրջաններու թիւի մեծ աճ:

Արդարեւ, առաջին մարզախաղերուն մասնակցած են 8 շրջաններ (1981), 2-րդ մարզախաղերուն՝ 7 շրջաններ (1985), 3-րդ մարզախաղերուն՝ 9 շրջաններ (1990), 4-րդ մարզախաղերուն՝ 7 շրջաններ (1993), 5-րդ մարզախաղերուն՝ 9 շրջաններ (1997), 6-րդ մարզախաղերուն՝ 10 շրջաններ (2001), 7-րդ մարզախաղերուն՝ 7 շրջաններ եւ Թեհրանի Հ.Մ.Ա.Կ.ը (2005), 8-րդ մարզախաղերուն՝ 14 շրջաններ եւ Թեհրանի Հ.Մ.Ա.Կ.ը (2009), 9-րդ մարզախաղերուն՝ 16 շրջաններ եւ Թեհրանի Հ.Մ.Ա.Կ.ը (2013), իսկ վերջին մարզախաղերուն՝ 19 շրջաններ եւ Թեհրանի Հ.Մ.Ա.Կ.ն ու «Նայիրի» միութիւնը:



# ԳԻՐ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից հայրական Մեր սերն ու օրհնությունն ենք յղում Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միության 10-րդ մարզախաղերի կազմակերպիչներին ու բոլոր մասնակիցներին:

Գոհունակությամբ է Հայրապետիս համար, որ Միության գովարժան նախաշեռնությունը հայրենի մեր երկրում է համախմբել երիտասարդ հայորդիներիդ աշխարհի չորս ծագերից: Այս օրերին Գուր ի ցոյց պիտի դնէք ձեր մարզական կարողությունները եւ յաղթելու ձեր կամքն ու ոգին՝ սպորտային մեծ ու գեղեցիկ փոխ պարգևելով ինքներդ ձեզ եւ հայրենաբնակ մեր ժողովրդին:

Միքելի գաւակներ Մեր, մարզախաղերը հրաշալի առիթ են ձեզ համար նաեւ շփուելու ձեր հասակակիցների հետ, ճանաչելու մեր երկիրը, մեր հոգևոր ու մշակութային հարուստ ժառանգությունը, որպէս ուխտատուր աղօթելու Սուրբ Էջմիածնում, Խոր Վիրապում, Գեղարդավանքում եւ մեր միւս սրբավայրերում, որոնց խնկաբոյր կամարների ներքոյ դարեր շարունակ իրենց հայցն ու աղօթքն են առ Աստուած բարչրացրել մեր հայրերը: Մենք ի խորոց սրտի մաղթում ենք, որ Հայրենիքում անցկացրած օրերի գեղեցիկ փառարությունները անջնջելի մնան ձեր հոգիներում եւ ձեր սրտերն առ յաւէտ կապեն մեր երկրին ու հայրենական մեր արժէքներին:

Հայրապետական Մեր օրհնությունն ու բարչր գնահատանքն ենք բերում Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միության Կեդրոնական Վարչության անդամներին եւ մարզախաղերի կազմակերպման աշխատանքներում ջանքեր բերած բոլոր հայորդիներին: Միության գործունէութեանը մաղթում ենք նոր յաջողություններ ու չեռքբերումներ Տիրոջ բարեխնամ օրհնութեան ներքոյ:

Թող Տէրն Ամենակալ առաքապէս օրհնի մեր ժողովրդի գաւակներին ի հայրենիս եւ ի սփիռս աշխարհի:

Շնորհք Տեսնն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ եւ ընդ ամենեսեանդ ամէն:

Օրհնութեամբ՝  
ԳԱՐԵԳԻՆ Բ.ԿԱԹՈՂԻԿՈՍ  
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ





# ԳԻՐ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ ԱՌ Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆՆ 10-ՐԴ ՄԱՐՉԱԽԱՂԵՐՈՒՆ ԱՌԹԻԻ ԵՐԵՒԱՆ, 20 ՅՈՒԼԻՍ 2017

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Անթիլիասի Մայրավանքէն հայրապետական օրհնութեամբ, քրիստոնէական ջերմ սիրով ու ազգային վառ ապրումներով կ'ողջունենք Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան մեծ ընտանիքը: Ահա, 10-րդ անգամ ըլլալով տեղի կ'ունենան Հ.Մ.Ը.Մ.Ի մարզախաղերը Հայաստանի մայրաքաղաք Երևանի մէջ: Արդարեւ, մարզախաղերը սրանչեւի առիթներ են գործնապէս արտայայտելու Հ.Մ.Ը.Մ.Ի անդամներուն մարզական շնորհքները: Անոնք միաժամանակ յայտուկ առիթներ են Հ.Մ.Ը.Մ.Ի անդամ-անդամուհիներուն միասին ըլլալու եւ վերանորոգելու իրենց հաւաքական ուխտը՝ Հ.Մ.Ը.Մ.Ի **մասերով ծառայելու** մեր ազգի ու հայրենիքի գերագոյն իդշերուն ու երազներուն:

**Անցնող** հարիւր տարիներու ընթացքին Հ.Մ.Ը.Մ.ը իր աշխարհացրիսի կառոյցներով ու անդամներով եղաւ տիրական ներկայութիւն **սոր ժողովուրդի** կեանքէն ներս: Մեր ժողովուրդին ու եկեղեցւոյ բարոյական, մշակութային ու ազգային արժէքներու զանաւարանը ու դպրոցը դարձաւ Հ.Մ.Ը.Մ.ը: Ազգին ու հայրենիքին պատկանելիութեան խոր գիտակցութեամբ եւ այդ պատկանելիութիւնը յանձնառու ծառայութեան վերածելու նախանշախնդրութեամբ, Հ.Մ.Ը.Մ.ը կարեւոր ներդրում բերաւ մեր ժողովուրդին Հայաստանէն, Արցախէն եւ Սփիւռքի գաղութներէն ներս:

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը միշտ գնահատողը եղած է մեր ժողովուրդի կեանքէն ներս գործող բոլոր միութիւններու շարքին նաեւ Հ.Մ.Ը.Մ.ին: Իր առաքելութեան 100-ամեակի սեմին, վստահ ենք որ Հ.Մ.Ը.Մ.ը պիտի վերանորոգէ իր հաւաքական ուխտը՝ հաւաքարիւմ մնալու Հայաստանի առաւել ծաղիման, Արցախի անկախութեան առաւել ամրապնդման, Սփիւռքի առաւել կազմակերպման եւ պահանջարկի պայքարին առաւել զօրացման:

Ահա ա՛յս սպասումով, ջերմօրէն կ'ողջունենք Հ.Մ.Ը.Մ.ը: Կ'ողջունենք մարզախաղերու բոլոր մասնակիցները եւ կ'աղօթենք առ Բարձրեայն Աստուած, որ միշտ զօրեղ եւ կենսունակ պահէ համահայկական այս մեծ միութիւնը:

Հայրական ջերմ սիրով եւ հայրապետական օրհնութեամբ,

Աղօթարար՝  
ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ  
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

## ՀԱՅ ՄԱՐՄՆԱԿՐԹԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ 10-ՐԴ ՄԱՐԶԱԽԱՂԵՐԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ

Մրտանց ողջունում են Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միության բոլոր անդամներին եւ Հ.Մ.Ը.Մ.ի համահայկական 10-րդ յոբելեանական մարզախաղերի մասնակիցներին:

Խորհրդանշական է, որ արդէն երրորդ անգամ անընդմէջ Մայր Հայրենիքում անցկացուող այս մարզախաղերը, որոնք միաւորում են տարբեր աշխարհամասերում ապրող հայ սկաւտներին՝ կազմակերպւում են Հայաստանի Առաջին Հանրապետութեան հռչակման եւ Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրման մէկ դարեայ տարելիցների նախօրէին:

Մարզական փառատօները կոչուած են բարեկամութիւն հաստատելու ժողովուրդների միջեւ: Բայց Հայոց Յեղասպանութեան դժնդակ տարիներին հիմնուած Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնն ընտրեց ոչ միայն այդ, այլեւ հայ ժողովրդի՝ պատմական ճակատագրի բերումով աշխարհով մէկ սփռուած հատուածներին միաւորելով հայապահպանութեան գործին անգնահատելի նպաստ բերելու դժուարին ուղին, եւ հանդիսանալով մարզական առաջին համահայկական կազմակերպութիւնը, արդէն մէկ հարիւրամեակ, հաւատարիմ իր «Քարճրացի՛ր-բարճրացրու» կարգախօսին, պատուով է կատարում ստանձնած դժուարին յանձնառութիւնը:

Սկաւտական գաղափարախօսութիւնն ու դաւանած նպատակները՝ մարմնակրթութիւնը, հայրենաճանաչողութիւնն ու հայրենապաշտութիւնն առաւել քան հարազատ են հայ զինուորին: Եւ այսօր, Հ.Մ.Ը.Մ.ն իր ծրագ-

րերն իրականացնելով Հայաստանում ու Արցախում, ոչ միայն նպաստում է ֆիզիքապէս ու գաղափարապէս կոփուած սերունդների դաստիարակմանը եւ հայրենապահպանութեան դիրքերում անասան կանգնած հայկական բանակի հետագայ հզօրացմանը, այլեւ նորովի է իմաստաւորում Հայոց Յեղասպանութեան ժամանակ զոհուած Շաւարշ Քրիսեանի ու իր գաղափարակիցների, նրանց գործը շարունակած նուիրեալների, ինչպէս նաեւ Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը Մայր Հայրենիքում վերահաստատելու նախաձեռնողներից՝ 1991 թուականի Գեկտեմբերի 26-ին Արցախի Հասանապատ գիւղի պաշտպանութեան մարտերում զոհուած Վարդան Բախշեանի պայծառ յիշատակը:

Վստահ են, որ Հայրենիքում անցկացուող Հ.Մ.Ը.Մ.ի 10-րդ համահայկական մարզախաղերը նոր կամուրջ կը դառնան Հայաստանի, Արցախի ու Սփիւռքի միջեւ, եւ իրենց մեծ նպաստը կը բերեն ոգով ու մարմնով կոփուած նոր սերունդ դաստիարակելու միջոցով ամենատարբեր մարտահրաւերներին դիմագրաւելու եւ մեր ազգային նըպատակներն իրականութիւն դարձնելու սուրբ գործին:

Մաղթում են Չեզ յաջողութիւններ եւ ամենայն բարիք:

Յարգանքով՝  
ՎԻԳԷՆ ՍԱՐԳՍԵԱՆ  
Հ.Հանրապետութեան  
Պաշտպանութեան Նախարար



## ՅԱՆՈՒՆ ՅԱՂԹԱՆԱԿԻ

*Մեծ սիրով ողջունում ենք համա-Հ.Մ.Ը.Մ.ական 10-րդ մարզախաղերին մասնակցող Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքի մարզիկներին, մարզիչներին եւ պատրասխանապուններին:*

*3-րդ անգամ լինելով, քաղաքամայր Երեւանը հիւրընկալում է մեր մեծ ընտանիքի Սփիւռքի քոյրերին եւ եղբայրներին, որոնք Կոզորուելով հայրենի հողի շնչով հաւաքարիմ մնալով Հ.Մ.Ը.Մ.ի նշանաբանին «Քարճրացի՛ր-բարճրացրու»-ին, 10 օրերի ընթացքում մրցելու են յանուն յաղթանակի, յանուն արդարութեան, յանուն միասնութեան:*

*Վստահ ենք, որ մեր կազմակերպութեան 100-ամեակի շնին, Սփիւռք-Հայրենիք այս միասնական մեծ հաւաքը նպաստելու է միութենական կապուածութեանը եւ հայրենասիրութեան յիմունանը, որի արդիւնքում բոլորս վերադառնալով մեր շարքեր առաւել մեծ ոգեւորութեամբ պիտի շարունակենք մեր ուղին:*

Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.Ի  
ՎԱՐՉՈՒԹԻՒՆ





# ՈՂՁՈՅՆԻ ԽՕՍՔ

Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միության յարգարժան անդամներ, Սիրով շնորհաւորում եմ բոլորիդ Համա-Հ.Մ.Բ.Մ.ական 10-րդ մարզախաղերին մասնակցելու կապակցութեամբ:

Ուրախ եմ, որ Հայաստանի Հանրապետութիւնում տարեց տարի աւելի շատ համահայկական մարզական միջոցառումներ են կազմակերպւում, որոնց թւում իր հաստատուն տեղն ունեն նաեւ համա-Հ.Մ.Բ.Մ.ական մարզախաղերը:

Ամբարը մայր հայրենիքում են հաւաքուելու աշխարհի տարբեր ծայրերում բնակուող բազմաթիւ հայ երիտասարդներ, որոնց համար Հայաստանում անցկացրած ժամանակը ո՛չ միայն մարզական ստուգատես է լինելու, այլեւ կարող է դառնալ նաեւ հայրենիքի ճանաչողութեան, հասակակիցների հետ ընկերանալու ու կապեր հաստատելու լաւ հնարաւորութիւն:

Չնայած այս խաղերի հայապահպան եւ ճանաչողական մեծ նշանակութեանը՝ ես կարեւոր եմ համարում նաեւ մասնակիցների մարզական արդիւնքները: Այդ իսկ պատճառով յաջողութիւն եւ անձնական մարզական ցուցանիշների աւելացում եմ մաղթում բոլոր մասնակիցներին:

Կը հանդիպենք 2017 թուականի Յուլիսի 20-ին Երեւանում:

Յարգանքով  
ՀՐԱԶԵԱՅ ՌՈՍՏՈՄԵԱՆ  
Հ.Հանրապետութեան Սպորտի եւ  
Երիտասարդութեան  
Հարցերի Նախարար

## ՈՒՂԵՐԶ

Հայ մշակութային «Արարատ» կազմակերպութիւնը բարձր է գնահատում՝ աւանդոյթ դարձած Հ.Մ.Բ.Մ.ական մրցախաղերի կազմակերպումը: Կազմակերպութեան մեծ ընտանիքի անունից մեր շնորհապարտ երախտագիտութիւնն ենք յայտնում մեզ ընդձեռնած մասնակցութեան առիթի համար:

Կազմակերպման առաջին օրերից սկսած, մարզամշակութային միութիւնները իրենց իւրայատուկ ձեռագիրն են դրոշմել հայոց պատմութեան իրականութեան էջերում: Միութիւնները՝ եկեղեցիների ու դպրոցների հետ միասին համալրել են ընտանիքներին ու սատարել են հայկական օճախի շէնսցմանն ու յարատեւումին:

Բարեբանութեամբ ենք յիշատակում հայ մարզիկ-մարզիկուհիների թողած հետքը սպորտի բնագաւառում, գրանցելով աշխարհի առաջնութեան մէջ բազմաթիւ ախոյեաններ: Հայ մարզիկները միշտ էլ աչքի են ընկել իրենց բացառիկ տաղանդի, ջանասիրութեան ու հայրենասիրութեան շնորհիւ:

Ատակ սերնդին մարզական դաստիարակութեան գործունէութեան ուղում, անառարկելի ներգործութիւնն ունին Հ.Մ.Բ.Մ.ական մրցախաղերը, որոնց շնորհիւ՝ աշխարհում հայահոծ շրջանների մարզիկ-մարզիկուհիներին հնարաւորութիւն է տրուում համախմբուելու եւ իւրայատուկ հայկական շունչ ու ոգի ներշնչող մթնոլորտում, մարզական առողջ մրցակցութեան շնորհիւ, միմիանց հետ հարազատանալու՝

ստեղծելով ընկերական անկեղծ եւ յարատեւող յարաբերութիւններ:

Մրցախաղերին մրցակցելու համար պահանջւում է աշխատանք, օրինապահութիւն եւ հաւատք սեփական ունակութիւնների նկատմամբ. մրցախաղերին միաւորում են ուժեղ, խիզախ եւ մարզասէր ազգակիցները, որը արդէն իրենց է վիճակւում գլխաւոր մրցանակը, ներկայութեան համար:

Անհուն բերկրանքով ենք դիմաւորում Միութեանը 10-րդ մրցախաղերը եւ որպէս Իրանում աշխատանք ծաւալող Չեր գործակիցը՝ հպարտ ենք որ հայ ժողովրդի իրականութեան մէջ կան ու աշխատում են նման բազմափորձ ու գործունէայ հայապահպանման կենտրոններ:

Վստահ ենք, որ հաւատարիմ Չեր անուանակոչմանը, նմոյշ պիտի հանդիսանաք միւսներին ու շարունակէք դաստիարակել սերունդ՝ որը կառչած պիտի մնայ իր ազգային սկզբունքներին ու հեռանկարներին:

Կազմակերպութեան անունից մաղթում ենք կազմակերպիչ մարմնիդ եւ մասնակից մարզիկներին՝ կանաչ ճանապարհ դէպի նորանոր գագաթներ, բարձրագոյն ձեռքբերումներով:

Փառք ու պատիւ Չեզ:

Յարգանքով  
ՀԱՅ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ «ԱՐԱՐԱՏ»  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ  
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ



## ՄԻՇՏ ՀԱՒԱՏԱՐԻՄ ՄՆԱԼՈՎ ՉԵՐ ԿԱՐԳԱԽՕՍԻՆ

Սիրելի՛ Հ.Մ.Ը.Մ.ականներ,

Շնորհաւորում ենք Ձեզ Հ.Մ.Ը.Մ.ի յոբելեանական 10-րդ մարզախաղերի առթիւ: Հերթական անգամ Չեր կազմակերպութիւնը Հայրենիքում համախմբել է հայ երիտասարդներին, մարզիկներին ու իր համակիրներին՝ աշխարհի աւելի քան 20 երկրներից: Յատկանշական է, որ այս մարզախաղերով մեկնարկում է համահայկական ամենամեծաթիւ երիտասարդական կազմակերպութեան՝ Հ.Մ.Ը.Մ.ի ստեղծման 100-ամեակի միջոցառումների շարքը:

Հ.Մ.Ը.Մ.ի մէկ դարեայ պատմութիւնը անբաժանելի մասն է մեր ժողովրդի վերջին հարիւրամեակի ողբերգական, բայց նաեւ հերոսական պատմութեան: Մեծ Եղեռնին զոհ գնացած մշակութային, քաղաքական, հասարակական գործիչների շարքում էին նաեւ մեր նորագոյն պատմութեան մէջ հայկական սկաւտական եւ մարզական շարժումների երախտաւորները: Հայաստանի Առաջին Հանրապետութեան ստեղծումը Հ.Մ.Ը.Մ.ի ծնունդն ապահովեց: Հ.Մ.Ը.Մ.ը անգնահատելի դերակատարութիւն է ունեցել Սփիւքի գաղթածախների կազմակերպման գործում՝ կատարելով բոլոր նուիրեալ հայորդիների հոգում վառ պահուող պետականութեան, երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարարութեան դերը: Եւ պատահական չէ, որ առաջին իսկ առիթի դէպքում Հայրենիքում անթերում Հ.Մ.Ը.Մ.ական գաղափարը պէտք է յառնէր եւ Հ.Մ.Ը.Մ.ը իր կազմակերպական ներկայութիւնը յայտարարէր նորանկախ Հայաստանում:

Սիրելի՛ եղբայրներ եւ քոյրեր,

Վերջին երեք մարզախաղերի անցկացումը Հայրենիքում արտայայտում է մեր բոլորի համոզումը. միայն ազատ, անկախ, միացեալ եւ հզօր Հայաստանի Հանրապետութիւնը կարող է լինել հայ ժողովրդի յարստեւման երաշխիքը: Եւ որպէս Հ.Մ.Ը.Մ.ական մարզիկ կամ ըսկաւտ, աշխարհի որ երկրում էլ ապրելիս լինէք, ձեր պարտականութիւնն ու նպատակը պէտք է լինի ուժերի ներածին չափով զօրավիզ լինել Հայրենիքի հզօրացմանն ու զարգացմանը՝ միշտ հաւատարիմ մնալով Չեր կարգախօսին՝ «Քարճրացի՛ր-քարճրացրո՛ւ»-ին:

Հ.Յ.Գ. ԲԻԻԲՕ

**ՄԵՐ ՊԱՐՏԱԲՈՐՈՒԹՅՆԸ 100-ԱՄԵԱԿԻ ՄԵՄԵՆ**

Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միությունը, ահաուսիկ, ճակատագրաց կանգնած է պատմութեան շառաւիղին «այսօր» կոչուած բարձունքին վրայ:

Ան հպարտ է իր անշուէր միութենականներու փառանգի 100-ամեայ նուաճումներով:

Հպարտ է հայրենիքի եւ աշխարհասփիռ 108 մասնաճիւղերու վարչութիւններու եւ անդամներու ծով իրագործումներով:

Հպարտ է միութեան հիմնադիրներու երազը իրականացնող կարգապահ սկաուտներով եւ խմբապետներով:

Հպարտ է մրցակիշեր արշանագրող մարզիկներու բաժակներու եւ մեդալներու հաւաքածոներով:

Եւ մանաւանդ՝ հպարտ է դար մը շարունակ հայութեան գոյապայքարին առիշ հասցնելու իր նուիրումին համար:

Համա-Հ.Մ.Բ.Մ.ական 10-րդ մարզախաղերու խարոյկը վառող ջահը պարզ ողիմպիական կրակ մը չէ: Անոր

լուցկէրու ջերմութեան հետ մեզի կը հասնի Հայկեան սլաքիկ տղեղին ազպարարենչութիւնը, Վարդանանց քաջարիներու աննկուն կամքն ու հաւապը, 1.5 միլիոն նահապահ սուրբերու յարակ պարգաւը, միութեան հիմնադիրներու փեսայանին փայլը եւ Արցախեան գոյամարտի հերոսներուն վճռակամութիւնը:

Պարտաւոր ենք 100-ամեակի սեմին հաւաքարիմ մեր «Բարչրացի-բարչրացուր» նշանաբանին, այս խորիմաստ ջահին ջերմութիւնը հարազատօրէն փոխանցել յառաջիկայ սերունդներուն: Պարտաւոր ենք նորանոր հորիզոններ որոնելով միութեան գործունէութիւնը ընդարշակել եւ ծաղկեցնել:

Սիրելի՛ մարզիկներ, մրցեցէ՛ք մարզական ոգիով եւ հպարտօրէն, լիցքաւորուած 100 տարուան միութենականներու վասպակաշատ նուիրումով, 26.000 անդամ հաշուող հզօր միութեան պարկանեղիութեան պայծառքով եւ նուաճումներ արշանագրելու հասպարարութեամբ:

Հ.Մ.Բ.Մ.Ի  
ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՆ



# ՅԱՌԱՉ ԱՆՍԱՍԱՆ, ՅԱՌԱՉ ԱՆՎԵՀԵՐ

Համազգային Հայ Կրթական և Մշակութային Միության Կեդրոնական Վարչությունը կ'ողջունե համա-Հ.Մ.-Ը.Մ.ական 10-րդ խաղերու անցկացումը համայն հայության մայրաքաղաք Երևանի մէջ:

Հարիւրամեակի սեմին կանգնած Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը, իր առոյգ և բազմաճիւղ գործունէութեամբ, հայրենիքէն ներս թէ դուրս կը հանդիսանայ հայապահպանման ու հայակերտման ամբողջ մը: Այնտեղ է, որ Հ.Մ.Ը.Մ.ի շարքերուն միացող հայ մանուկը, պատանին և մարզիկը կը թրծուին հայութեամբ: Գարձեալ այնտեղ է, որ Մ. Իշխանի բառերով, Հ.Մ.Ը.Մ.ականը կը գտնէ «խաժամուժին մէջ օտար կորսնցուցած իր հոգին»:

Բազմաճապար անդամներով և հարիւր անլի մասնա-

ճիւղերով, սկաուտական թէ մարզական շարքերով կենսունակ այս կազմակերպութիւնը, այս նախաձեռնութեամբ ի մի կը բերէ բազմաճապար մարզիկներ ու մարզիկուհիներ, որոնք մրցակցութենէ անդին, հայրենական հողէն պիտի ստանան հայկական աւիւն և խանդ:

Բարի երթ համա-Հ.Մ.Ը.Մ.ական 10-րդ խաղերուն և յաջողութիւն Հ.Մ.Ը.Մ.ական մարզիկներուն, նոր մրցանիշներ հաստատելու առընթեր լիանալու հայութեամբ, մեր ազգը տանելու համար յառաջ անսասան, յառաջ անվեհեր:

ՀԱՄԱՉՊԱՅԻՆ ՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ  
ԵՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ  
ԿԵՂՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ





# ՄԻՇՏ ՊԱՏՐԱՍ ԲԱՐՉՐԱՆԱԼՈՒ

Մեծ հաճոյքով է որ կ'ողջունենք Հ.Մ.Ը.Մ.ի 10-րդ մարզախաղերը, որոնք տեղի կ'ունենան հայրենի հարազատ հողի վրայ, Հայաստանի լուսագեղ երկիրքին տակ, Հ.Մ.Ը.Մ.ի աշխարհացրի մարզիկներու համախումբ մասնակցութեամբ:

Հայոց աննախընթաց եղեռնապատումը, 20-րդ դարու առաջին Յեղասպանութեան որպէս հետեւանք, անհամար այրիներու եւ որբերու անպատասպար ու սովահար բազմութիւններուն ծանր իրականութեան ի դիմաց, հայու կամքով ու կորովով վերջ գտաւ բանալով նոր էջ մը դէպի լուսաւոր ապագայ:

Շնորհիւ նուիրեալ անհատներու եւ կազմակերպութիւններու աննկուն ճիգերուն, ժամանակաւորապէս զգեսնուած հայութիւնը վերականգնեցաւ իւրացնելով բարձրանալու եւ բարձրացնելու հրաշագործ սկզբունքը:

Այսպէս է որ - ինչպէս հայ արիներու եւ արեւոյշներու

հին քայլերգներէն մէկը կ'ըսէ. Որք կորիւններ քար ու սարի, ձեզ աւազներ եղան ոստան. ծովերն արեան հայ աշխարհի՝ մկրտութեան աւազան... այդ որք կորիւնները, Հ.Մ.Ը.Մ.ի հարազատ ծոցին մէջ դարձան առիծանման արիներ եւ արեւոյշներ, միշտ պատրաստ բարձրանալու եւ բարձրացնելու հայրենի թէ սփիւքեան մեր ժողովուրդի ազգային գիտակցութեան մակարդակն ու ապագան:

Միշտ մնալով ձեր կողքին, Հայ Օգնութեան Միութիւնը, իր բոլոր միաւորներով, որպէս հարազատ քոյր, կու գայ մաղթելու յաջող եւ արդիւնաւետ 10-րդ մարզախաղեր՝ հայ մարզիկի ասպետական խիզախութեամբ ու ոգիով բարձրանալով ու բարձրացնելով մեզ բոլոր:

Ընկերական ամենաջերմ բարեկներով՝

ՀԱՅ ՕԳՆՈՒԹԵԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ  
ԿԵԳՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ



# ՄԱՐԶԱԽԱՂԵՐՈՒ ԾԱՆՕԹ-ԱՅՄԱՆ ՄԱՄԼՈՅ ԱՍՈՒԼԻՍԸ



մարզախաղեր, 20-29 Հուլիսի 2017թ., Հայաստան  
men Games, July 20-29 2017, Armenia

Համա-Հ.Մ.Ը.Մ.ական 10-րդ մարզախաղերու բացումն օր մը առաջ, Ուրբաթ, 21 Յուլիսի առաւօտեան ժամը 11-ին, մարզախաղերու կազմակերպիչ մարմինը «Մարիոթ» պանդոկին մէջ կազմակերպուած մամուլյ ասուլիսով մը հայրենի լրատուամիջոցներուն ներկայացուց մարզախաղերուն յայտագիրը, նպատակը եւ կարեւորութիւնը՝ Հ.Մ.Ը.Մ.ի կեանքին մէջ: Ասուլիսին խօսքեր արտասանեցին եւ թղթակիցներու հարցումներուն պատասխանեցին Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Վիգէն Քորթեան, մարզախաղերու կազմակերպիչ յանձնախումբի ատենապետ եղբ. Մանուէլ Մարսէլեան եւ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի վարչութեան ատենապետ եղբ. Գալիթ Յակոբեան:

## 10-ՐԴ ՄԱՐԶԱԽԱՂԵՐՈՒ ՎԱՐՉԱԿԱՆ ԵՒ ՄԱՐԶԱԿԱՆ ԴԱՏԱՄԽԱՆԱՏՈՒՆԵՐՈՒ ԺՈՂՈՎԸ

Հինգշաբթի, 20 Յուլիսի երեկոյեան, Երեւանի «Մարիոթ» պանդոկի «Տրդատ երկրորդ» սրահին մէջ տեղի ունեցաւ համա-Հ.Մ.Ը.Մ.ական 10-րդ մարզախաղերու մասնակից շրջաններու վարչական եւ մարզական պատասխանատուներու ժողովը:

Ժողովին սկիզբը ներկաները վայրկեան մը յոտնկայս լուծութեամբ յարգեցին

յիշատակը վերջին չորս տարիներուն մահացած Հ.Մ.Ը.Մ.ական վեթերան մարզիկներուն: Ապա, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան բարի գալուստ մաղթեց մարզախաղերու մասնակից պատուիրակութիւններու ներկայացուցիչներուն եւ ըսաւ, որ համա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզախաղերը սովորական մրցումներ չեն, ուր յաղթողներ եւ պարտուողներ ըլլան: Համա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզախաղերը միջոց են Հ.Մ.Ը.Մ.ի մարզական բանակին անդամները քով-քովի բերելու եւ միութեանական առողջ միջնորդութիւն մէջ, մէկ ընտանիքի պատկանելիութեան զգացումը ապրելու համար: Այս երրորդ մարզախաղերն են, որոնք Հայաստանի մէջ կը կատարուին, ինչ որ առիթը կը ստեղծէ, որ Հ.Մ.Ը.Մ.ականներ իրարու քով գալու առընթեր, հայրենիք գան, ազգային իրենց արժէքներուն ծանօթանան, ազգային իրենց ինքնութիւնն ու դիմադիւծը ամրապնդեն եւ շրջաններ վերադարձին հայրենիքի սէրն ու կապուածութիւնը փոխանցեն իրենց շրջապատին, ըսաւ Մկրտիչեան:

Շարունակելով, եղբ. Մկրտիչեան յայտնեց, որ համա-Հ.Մ.Ը.Մ.ական այս մարզախաղերը նուիրուած են միու-

թեան 100-ամեակին: Մարզախաղերը ունին Հ.Մ.Ը.Մ.ական նախագահ, Հ.Մ.Ը.Մ.ական մեկենասներ՝ որոնք կը հովանաւորեն 16 վաստակաշատ Հ.Մ.Ը.Մ.ականներու յիշատակին նուիրուած բաժակներ եւ իւրաքանչիւր մարզախաղի Հ.Մ.Ը.Մ.ական մասնագէտ պատասխանատու մը: Հետեւաբար, չեչտեց ան, այս մարզախաղերը պիտի ըլլան 100-ամեայ Հ.Մ.Ը.Մ.ի մարզական ուժին եւ կարողութիւններուն ներկայացման լաւագոյն առիթը:

Այնուհետեւ խօսք առաւ համա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզախաղերու կազմակերպիչ մարմնի ատենապետ եղբ. Մանուէլ Մարսէլեան (Արեւմտեան Մ.Ն.) եւ ընդհանուր դիմորդ մէջ փոխանցեց մարզախաղերուն կազմակերպչական ընդհանուր ընթացքը: Քոյր Փաթիլ Եսայեան (Լիբանան) մանրամասնօրէն ներկայացուց մարզախաղերու կողքին նրկատի առնուած յայտագիրները (դաստիարակչական հանդիպումներ, զօրանոց այցելութիւններ, բացման եւ փակման հանդիսութիւններ, ընկերային երեկոներ եւ այլն): Խօսքեր արտասանեցին նաեւ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի վարչութեան անդամ եղբայրներ Պերճ Թիւֆէնկեան (Հայաստան) եւ Արմանո Քիլէճեան (Արեւմտեան Մ.Ն.): Թիւֆէնկեան կա-





տարեց մարզիկներու եւ մարզադաշտերու կապուած անմիջական փոխանցումներ, իսկ Քիլշճեան ներկայացուց այս առիթով ստեղծուած բժիշկային հեռաձայնի յատուկ ծրագիրը, որուն շնորհիւ մասնակիցները, պատասխանատուներն ու աշխարհասփիւռ համակիրները վայրկեանը-վայրկեանին կրնան հետեւիլ մարզախաղերու լուրերուն եւ արդիւնքներուն:

Աւարտին, խօսքեր արտասանեցին 9 մարզաձեւերու պատասխանատուները եւ ներկաներուն փոխանցեցին իւրաքանչիւր մարզաձեւի գլխաւոր օրէնքները: Անոնք նաեւ յիշեցուցին համա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզախաղերու կանոնները եւ շեշտեցին, որ մարզախաղերը միութեան հայելին են, հետեւաբար, իրենց կազմակերպուածութեամբ եւ յաջողութեամբ անոնք Հ.Մ.Ը.Մ.ի մարզական հարուստ փորձառութեան լաւագոյն վկայութիւնը կը հանդիսանան:



...ԿԻՇ ԿԱՏՂԱՅՈՒՄՆ ԴՆԱՓՈՒ

**Լոնյոն նստած միայնակ,  
Գրմացր պատկերասփիւռի,  
Թափօրը չէր կը դիպէի:**

**Գրօշներով եռագոյն,  
Գրօշներով գոյնզգոյն,  
Լիբանանէն Ամերիկա,  
Անգլիայէն Գանապա,  
Չեր ուրնաչայնը կ'առնէի:**

**Ափս՛ ու, ես այնպեղ չէի...**

**Գո՛րք, դեսպաններ Սփիւռքի,  
Քայ մարզիկներ հայրենիքի,  
Արեւելքէն Արեւմուտք,  
Ծննդավայրերը չէր փարբեր,  
Քայց հայրենի փունը՝ մէկ,  
Չեր երգն ու պարը՝ մէկ,  
Չեր յոյսն ու կամքը՝ մէկ:**

**Ափս՛ ու, ես այնպեղ չէի...**

**1000-է աւելի  
Արի մարզիկներ Հ.Մ.Ը.Մ.ի,  
Յառա՛ ջ, յառաջ անասան,  
Գէպի հայաստան...**

**Այո, ես այնպեղ չէի,  
Քայց, ես չեզի հեպ էի...**

**Հ. ՎԱՐԳԱՆԵԱՆ  
Լոնյոն**





## ՄԱՐԶԱՆԱՂԵՐՈՒ ՄԱՄՆԱԿԻՑՆԵՐՈՒՄ ՅԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔԸ՝ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՆԱՀԱՏԱԿԱՑ ՅԻՇԱՏԱԿԻՆ

**Մ**արզախաղերու առաջին օրը, Հինգշաբթի, 20 Յուլիսի երեկոյան ժամը 7-ին, համա-Հ.Մ.Ը.Մ.ական 10-րդ մարզախաղերու մասնակիցները, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբայրներու առաջնորդութեամբ, այցելեցին Ծիծեռնակաբերդի յուշամահամալիր եւ յարգանքի իրենց տուրքը մատուցեցին Մեծ Եղեռնի նահատակաց յիշատակին:

Ծիծեռնակաբերդ հասնելով, Հ.Մ.Ը.Մ.ի մարզիկ-մարզիկները կարգապահ ու տպաւորիչ շարքերով քալեցին մինչեւ անմար կրակի յուշակոթողը: Մուտքին, Հ.Մ.Ը.Մ.ի ընտանիքին անունով, Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան զետեղեց յարգանքի ծաղիկասակ մը:

Յուշակոթողին մէջ, Մինաս Աբղ-Հախլերտեան Տէրունական աղօթքով եւ յատուկ շարականներով ոգեկոչեց յիշատակը «Վասն հաւատոյ եւ վասն հայրենեաց» ինկած մեր մէկուկէս միլիոն նահատակ սուրբերուն: Ապա, մարզա-

խաղերու մասնակիցներէն եղբ. Յակոբ Թուրուշեան (Հարաւային Ամերիկայէն) եւ քոյր Մեղրիկ Եագուպեան (Սուրիայէն) Հ.Մ.Ը.Մ.ական նորահաս սերունդին յանձնառութիւնն ու պահանջատիրութիւնը արտայայտող խօսքեր փոխանցեցին ներկաներուն:

Աւարտին, քոյր Իգապէլ Մարգարեան (Աւստրալիայէն) կատարեց «Տէր ողորմեա»ն, որմէ ետք հնչեց Հ.Մ.Ը.Մ.ի քայլերգ «Յառաջ նահատակ»ը:

Աւարտին, քոյր Իգապէլ Մարգարեան (Աւստրալիայէն) կատարեց «Տէր ողորմեա»ն, որմէ ետք հնչեց Հ.Մ.Ը.Մ.ի քայլերգ «Յառաջ նահատակ»ը:











# 22

Յուլիսի երեկոյեան, Երեւանի «Հանրապետութեան» հրապարակին վրայ կատարուած շքեղ տողանցքով եւ պաշտօնական հանդիսութեամբ բացումը կատարուեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի 100-ամեակի յօրհանակաւ տարուան տօնակատարութիւններուն, որոնք պիտի երկարին մինչեւ 2018-ի աւարտ:

Տողանցքն ու հանդիսութիւնը կատարուեցան համա-Հ.Մ.Ը.Մ.ական 10-րդ մարզախաղերուն առիթով, որոնք 19 շրջաններէ եւ թեհրանի «Արարատ» ու «Նայիրի» միութիւններէն Հայաստան համախմբեցին 1250 մարզիկ-մարզիկուհիներ, իրաւարարներ, մարզական պատասխանատուներ, ծնողներ ու բարեկամներ:

## ՏՈՂԱՆՑՔԻ ՆԱԽՕՐԵԱԿԻՆ

10-րդ մարզախաղերու տողանցքի եւ բացման հանդիսութեան նախօրեակին, 22 Յուլիսի յետմիջօրէին, մասնակիցները հաւաքուեցան Երեւանի պետական օփերայի «Արամ Խաչատուրեան»ի անւան սրահը, ուր ծանօթացան մարզախաղերու կազմակերպիչ մարմնի անդամներուն, մարզախաղերու օրէնքներուն եւ Հ.Մ.Ը.Մ.ական տիպար մարզիկի բարոյական յատկանիշներուն: Անոնք դիտեցին նաեւ Հ.Մ.Ը.Մ.ը եւ անոր մարզական շարժումը ծանօթացրնող տեսանիւթ մը: Ներկաներուն ողջոյնի խօսք ուղղեց Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Արման-տօ Թորգոմեան:

Ապա, մարզախաղերու մասնակից 21

շրջանները ներկայացնող մարզիկ-մարզիկուհիներ ուղղուեցան Միժեռնակաբերդի Եղեռնի նահատակաց յուշահամալիր, որուն անմար կրակէն վառեցին մարզախաղերուն ջահը եւ փոխն ի փոխ վազելով, Միժեռնակաբերդէն փոխադրեցին մինչեւ «Հանրապետութեան» հրապարակ: Միժեռնակաբերդի մէջ, ջահակիր մարզիկ-մարզիկուհիներուն իր խօսքը փոխանցեց Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Վիզէն Քորթեան:

## ՏՈՂԱՆՑՔԸ

Հ.Մ.Ը.Մ.ի «մարզական բանակ»ին սպասուած տողանցքը սկսաւ երեկոյեան ժամը 7.15-ին եւ երկարեցաւ օփերայի «Ազատութեան» հրապարակէն մինչեւ «Հանրապետութեան» հրապարակ: Տողանցքը առաջնորդեցին Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի շեփորախումբը (գեղարուեստական ղեկավար՝ Տարօն Տէր Գրիգորեան, ղեկավար՝ Գրիգոր Գունճեան), Հայաստանի, Հ.Մ.Ը.Մ.ի, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի եւ 100-ամեակի դրօշակակիրները եւ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի ըսկառտական պատուոյ խումբի անդամները:

Տողանցողները, պատուիրակութիւններու այբուբենական կարգով եւ լման կազմով «Հանրապետութեան» հրապարակ հասան եւ իրենց վերապահուած տեղերը զբաղեցին հրապարակը լեցուցած բազմահազար ժողովուրդի քաջախրական ծափերով:


## ՊԱՇՏՏՈՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆԸ

Տողանցքի աւարտին, երեկոյեան ժամը 8-ին, Հայաստանի եւ Հ.Մ.Ը.Մ.ի



ԵՐԵՒԱՆԻ «ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ» ՀՐԱՊԱՐԱԿԻՆ ՎՐԱՅ  
ԿԱՏԱՐՈՒԱԾ ՇՔԵՂ ՏՈՂԱՆՑՔՈՎ ՈՒ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՄԲ՝

# ՀԱՄԱ-Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ 10-ՐԴ ՄԱՐԶԱԽԱՂԵՐԸ ԱԶԳԱՆՇԱՆԸ ԿՈՒ ՏԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ 100-ԱՄԵԱԿԻ ՅՈՐԲԵԼԵՆԱԿԱՆ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ





քայլերգներով ընթացք առաւ 10-րդ մարզախաղերու բացման պաշտօնական հանդիսութիւնը, որուն հետ ազդանշանը տրուեցաւ միութեան 100-ամեակի յրեկեակնական տօնակատարութիւններուն:

Հանդիսութիւնը իրենց ներկայութեամբ պատուեցին Ամենայն Հայոց եւ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսներու ներկայացուցիչները՝ Վարդան Եպս. Նաւասարդեան եւ Պետրոս Վրդ. Մանուէլեան, Սփիւռքի նախարար Հրանոյշ Յակոբեան, Հայաստանի մարմնամարզի եւ երիտասարդական հարցերու փոխ նախարար Գարրիէլ Ղազարեան, պաշտպանութեան փոխ նախարար, Արտակ Ջաքարեան, Հ.Յ.Դ. Բիւրոյի քաղաքական ներկայացուցիչ Արմէն Ռուստամեան, Բիւրոյի նախկին անդամ Մարիօ Նալպանտեան, Հ.Յ.Դ. Հայաստանի Գերագոյն Մարմնի ներկայացուցիչ Աղւան Վարդանեան, Հայաստանի մէջ Լիբանանի եւ Եգիպտոսի դեսպանները, քորէական ազգային սկաուտութիւնը ներկայացնող բազմանդամ պատուիրակութիւն մը, մարզախաղերու նախագահ տէր եւ տիկ. Սարգիս եւ Ալիս Տէր Պետրոսեաններ, Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան ներկայ եւ նախկին անդամներ, Հ.Մ.Ը.Մ-ի Շրջանային եւ Մեկուսի վարչութիւններու ատենապետներ եւ հայրենի հիւրեր:

Հանդիսութեան առաջին խօսքը արտասանեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի ներկայացուցիչ Վարդան Եպս. Նաւասարդեան, որ ընթերցեց Գարեգին Բ. Կաթողիկոսին ողջոյնի գիրը: Իր գերին



մէջ, Գարեգին Բ. նկատել կու տար, որ մարզախաղերը Հ.Մ.Ը.Մ.ական մարզիկներուն համար առիթ են ծանօթանալու իրենց հասակակիցներուն, ճանչնալու հայրենիքը եւ մեր հոգեւոր ու մշակութային հարուստ ժառանգութիւնը: Գարեգին Բ. կը մտախօսէր, որ հայրենիքի մէջ ապրուած գեղեցիկ օրերու տպաւորութիւնները անջնջելի մը նան բոլոր մասնակիցներու հոգիներուն մէջ եւ անոնք յաւէտ ապրին մեր երկրին ու անոր հայրենական արժէքներով (գիրք կարդալ էջ 6):

Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան ներկայացուցիչ Պետրոս Վրդ. Մանուէլեան կարգաց Արամ Ա. Կաթողիկոսին օրհնութեան գիրը: Արամ Ա. Կաթողիկոս իր գիրով կը հաստատէր, որ անցնող հարիւր տարիներուն Հ.Մ.Ը.Մ.ը իր աշխարհացրիւ կառույցներով ու անդամներով եղաւ տիրական ներկայութիւն մեր ժողովուրդի կեանքին մէջ: Մեր ժողովուրդին ու եկեղեցւոյ բարոյական, մշակութային ու ազգային արժէքներու գանձարանը եւ դարձեալ Հ.Մ.Ը.Մ.ը: Ազգին ու հայրենիքին պատկանելիութեան խոր գիտակցութեամբ եւ այդ պատկանելիութիւնը յանձնառու ծառայութեան վերածելու նախանձախնդրութեամբ, Հ.Մ.Ը.Մ.ը կարեւոր ներդրում բերաւ մեր ժողովուրդին՝ Հայաստանէն, Արցախէն եւ սփիւռքի գաղութներուն մէջ:

Արամ Ա. Կաթողիկոս կը նշէր նաեւ, որ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութիւնը միշտ զնահատողը եղած է մեր ժողովուրդի կեանքին մէջ գործող բո-





լոր միութիւններու շարքին նաեւ Հ.Մ.-Ը.Մ.ին: Իր առաքելութեան 100-ամեակի սեմին, վստահ ենք, որ Հ.Մ.Ը.Մ.ը պիտի վերանորոգէ իր հաւաքական ուխտը՝ հաւատարիմ մնալու Հայաստանի առաւել ծաղկման, Արցախի անկախութեան առաւել ամրապնդման, սփիւռքի առաւել կազմակերպման եւ պահանջատիրական պայքարին առաւել զօրացման (խօսքին ամբողջութիւնը կարդալ էջ 7):

Ապա, մարզախաղերու հիւրընկալ շրջանի՝ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի ողջոյնի խօսքը փոխանցեց շրջանի ատենապետ եղբ. Դաւիթ Յակոբեան: Ան ըսաւ, որ Հայաստանի Ա. Հանրապետութեան եւ Հ.Մ.Ը.Մ.ի 100-ամեակին առիթով կատարուող 10-րդ մարզախաղերը կը վկայեն, որ միութիւնը մէկ դարէ ի վեր չէ դաւաճանած իր առաքելութեան եւ սկզբունքներուն՝ ըլլալով ամուր, յաջողած եւ ազնիւ գաղափարի ծառայող կառույց: Կառույց, որ միասնական մէկ բռունցք է: Կառույց, որ կը համախմբէ Հայ երիտասարդութիւնը՝ անկախ անոր ապրած վայրէն: Կառույց, որ բոլորը կը համախմբէ հայրենիքի գաղափարի շուրջ:

Համա-Հ.Մ.Ը.Մ.ական 10-րդ մարզախաղերու կազմակերպիչ մարմնին անունով խօսք առաւ մարմնի ատենապետ եղբ. Մանուէլ Մարսէլեան եւ ըսաւ, որ նման մարզախաղերու կազմակերպման նպատակը մարզախաղերը չեն միայն, այլ՝ հայրենի հողին վրայ մեր երիտասարդութիւնը քով-քովի բերելը եւ միասնաբար հայրենիքը վայելելը



մարզական եւ Հ.Մ.Ը.Մ.ական առողջ միջնորդի մէջ:

Ներկաներուն իր սրտի խօսքը փոխանցեց համա-Հ.Մ.Ը.Մ.ական 10-րդ մարզախաղերու նախագահ, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան նախկին անդամ եղբ. Սարգիս Տէր Պետրոսեան: Ան ըսաւ, որ Հ.Մ.Ը.Մ.ը միշտ երիտասարդ այն միութիւնն է, որ իր անդամներուն կը փոխանցէ ազգային դաստիարակութիւն, հայրենասիրութիւն եւ մէկ ազգի պատկանելիութեան գիտակցութիւն: Հ.Մ.Ը.Մ.ը չծերացող միութիւն է, որովհետեւ անոր շարքերը տեւաբար կը նորոգուին երիտասարդական խանդով եւ աւելնով: Երիտասարդութիւնն է մեր ներկան եւ ապագան: Ան է որ այս միութիւնը պիտի առաջնորդէ իր երկրորդ 100-ամեակին, ընդգծեց եղբ. Տէր Պետրոսեան:



Յաջորդ խօսքը արտասանեց Հ.Յ.Դ. Բիւրոյի քաղաքական ներկայացուցիչ Արմէն Ռուստամեան: Ան Հ.Յ.Դ. Բիւրոյի անունով ողջունեց համա-Հ.Մ.Ը.Մ.ական 10-րդ մարզախաղերու մասնակիցները եւ ըսաւ, որ այս մարզախաղերը լաւ առիթ են արժեւորելու մեր ամէնէն տարածուն եւ ամէնէն փորձառու երիտասարդական կառույցին դերն ու առաքելութիւնը մեր կեանքին մէջ:

Ինչպէս 100 տարի առաջ,- նշեց Ռուստամեան,- նաեւ այսօր Հ.Մ.Ը.Մ.ը կարեւոր առաքելութիւն ունի համաշխարհայնացած մեր ընկերութեան մէջ, ուր երիտասարդութիւնը կը գիմագրուէ գայթակղեցուցիչ օտար հոսանքներու եւ գաղափարներու զոհը դառնալու





մնայուն վտանգը: Հ.Մ.Լ.Մ-ը կը հանդիսանայ այն փրկարար ուժը, որ բոլորը կառչած կը պահէ իրենց արմատներուն, աւանդութիւններուն, սովորութիւններուն, ազգային ու պետական մեր նպատակներուն:

Շարունակելով, Ռուստամեան հաստատեց, որ Հ.Մ.Լ.Մ-ը այսօր պէտք է օրինակ դառնայ երիտասարդական մեր բոլոր կառույցներուն: Հ.Մ.Լ.Մ-ական մարզիկն ու մարզիկուհին պէտք է շարունակողները ըլլան այն ժառանգութեան, զոր իրենց փոխանցուած է միութեան հիմնադիրներուն եւ անոնց գործը շարունակած նուիրեալ սերունդներուն կողմէ: Այսօր, որեւէ ժամանակէ աւելի, անհրաժեշտ է միութենական յանձնառութիւն ունենալ, որովհետեւ մենք ազգովին լուրջ մարտահրաւէրներ կը դիմադրուենք, ըսաւ ան: Ռուստամեան նշեց նաեւ, որ այսօր որքան որ մեզի անհրաժեշտ է ֆիզիքայէս ամուր երիտասարդութիւն, նոյնքան եւ աւելի անհրաժեշտ է ոգեղէն ամրութեամբ հզօր երիտասարդութիւն:

Իր խօսքը ներկայ Հ.Մ.Լ.Մ-ականներուն

րուն ուղղելով, Ռուստամեան ըսաւ՝ ձեր կարգախօսին համաձայն, դուք միշտ պիտի ձգտիք որ հայ մարդը բարձրանայ եւ իր բարձրացնէ նաեւ իր ազգակիցը, որպէսզի բոլորս միասին բարձրացնենք պատիւն ու յարգանքը մեր երկրին նկատմամբ, բարձր պահելու համար մեր յաղթական դրօշը, հասնելու համար մեր երազած ազատ, անկախ ու միացեալ Հայաստանին:


Խօսք առաւ նաեւ Սփիւռքի նախարար Հրանոյշ Յակոբեան: Ան յայտնեց, որ «Հանրապետութեան» հրապարակին վրայ կը թեւածէ հպարտութիւն, խանդավառութիւն, ոգեւորութիւն եւ սէր: Դուք հպարտութեամբ այստեղ կանգնած՝ կը խորհրդանշէք մեր ազգին միասնութիւնն ու միակամութիւնը 2800 տարեկան դարձող մեր մայրաքաղաքի սրտին մէջ: Երեւանը մեր հոգեւոր մայրաքաղաքն է, որ այսօր մագնիսի նման իրեն կը քաշէ աշխարհասփիւռ հայութիւնը, աւելցուց ան:

Յակոբեան խորհրդանշական գտաւ մարզախաղերու ջահին Միծեռնակաբերդէն բոցավառումը եւ ըսաւ, որ մեր

սուրբ նահատակներու յիշատակը յաւերժացնող յուշահամալիրէն բերուած ջահով այս պահուն կը բոցավառին մեր հոգիներն ու սրտերը, որպէսզի մենք գործենք յանուն Հայաստանի, յանուն հայութեան եւ յանուն հայ մարդուն:

100 տարի առաջ Հ.Մ.Լ.Մ-ի հիմնադիրները ցանեցին միութեան սերմերը, որոնք հասունցան, զօրացան եւ 100 տարուան փորձութիւններուն դիմացան, շեշտեց Յակոբեան: Ապա, ան ըսաւ, որ եթէ պատմութեան անիւր 100 տարին անգամ մը շրջադարձ կը կատարէ, ուրեմն Հ.Մ.Լ.Մ-ը այսօր կանգնած է այդ շրջադարձի դիմաց: 100 տարուան իմաստութեամբ եւ փորձառութեամբ միութեան 1000-ամեակը դիմաւորելու համար երիտասարդական աւիւնով եւ խենթութեամբ յառաջ ընթացէք, յաղորդութիւններ նուաճեցէք, մրցունակ մասնագէտներ դարձէք եւ մնացէք հզօր, ուժեղ հայեր, թելադրեց Յակոբեան:


Այնուհետեւ, պաշտօնական հանդիսութեան եզրափակիչ խօսքը արտասանեց Հ.Մ.Լ.Մ-ի Կեդրոնական Վարչու-



Թեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան: Ան ըսաւ, որ Հ.Մ.Ը.Մ.ի պատմութեան մեծագոյն մարզախաղերն են, որ այսօր ընթացք կ'առնեն անկախ Հայաստանի դրօշին առաջնորդութեամբ, հայրենի պետութեան լայն աջակցութեամբ եւ Սփիւռքի նախարարութեան անվերապահ օժանդակութեամբ: Մարզախաղերը կը նախագահեն Սիտնիէին, բազմավաստակ Հ.Մ.Ը.Մ.ական տէր եւ տիկ. Սարգիս եւ Ալյա Տէր Պետրոսեաններ, որոնք իշխանական նուիրատուութեամբ մը կարելի կը դարձնեն այս մարզախաղերուն կազմակերպումը Հայաստանի մէջ:


Եղբ. Մկրտիչեան հաստատեց, որ այս մարզախաղերուն, 10 օրեր շարունակ, Հ.Մ.Ը.Մ.ական մարզիկ-մարզիկուհիներ պիտի մրցին 9 մարզաձեւերու մէջ, պիտի յաղթեն ու պարտուին, սակայն բոլորը պիտի շահին հայրենի հողին վրայ ըլլալու, հայրենիքով ապրելու եւ հայրենիքով զօրանալու մեծ ուժը: Հայրենիքը պիտի վերագտնէ իր հարազատ զաւակները, իսկ զաւակները պիտի գտնեն այն հայրենիքը, որ Հ.Մ.Ը.Մ.ա-











կան իրենց դաստիարակութեամբ, իրենց մտքերուն եւ հոգիներուն մէջ է արդէն, իրենց ամէնօրեայ ապրումներուն եւ զգացումներուն մէջն է անպայման:

Եղբ. Մկրտիչեան նաեւ դիտել տուաւ, որ 108 մասնաճիւղերու միութիւնն է Հ.Մ.Ը.Մ.ը: Ան ունի նման մարզախաղեր կազմակերպելու 100 տարուան կենսափորձ: Պոլսոյ ողիմպիականներէն մինչեւ Միջին Արեւելքի երբեմնի միջ-մասնաճիւղային խաղեր, հասնելու համար 1981-ին ընթացք առած այս մարզախաղերը Հ.Մ.Ը.Մ.ին ապահոված են հայ մարզական կեանքին յառաջատար միութիւնը ըլլալու իրաւունքը:

Այս մարզախաղերը ո՛չ միայն մեծագոյնն են Հ.Մ.Ը.Մ.ի պատմութեան մէջ, այլեւ՝ ամէնէն յիշատակելին են ցարդ կատարուած բոլոր մարզախաղերու շարքին, - ընդգծեց ան, - որովհետեւ այսօր, 10-րդ այս մարզախաղերու բացումով, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը բացումը կը կատարէ միութեան 100-ամեակի յոբելեանական տարուան: Բացման այս հանդիսութենէն սկսեալ եւ մինչեւ 2018 թուականի աւարտ, Հ.Մ.Ը.Մ. արժանավայել շուքով կը նշէ իր հիմնադրութեան 100-ամեակը, որ կը զուգադիպի Հայաստանի Առաջին Հանրապետութեան ստեղծման 100-ամեակին: Հ.Մ.Ը.Մ. եւ Առաջին Հանրա-



պետությունն հոգեհարազատներ են: Հ.Մ.Ը.Մ. 100 տարի կրած ու պահպանած է ազգային այն արժեքները, որոնք դարբնուած են Հայաստանի Առաջին Հանրապետութեամբ:

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետը յայտնեց, որ Հ.Մ.Ը.Մ.ի մարզական բանակը 10 օրեր շարունակ ազնիւ մրցակցութեան եւ արդար խաղի լաւագոյն օրինակները պիտի տայ մարզասէր մեր հանրութեան: Հ.Մ.Ը.Մ.ական տղաքն ու աղջիկները անհատական թէ՛ խմբային իրենց յաջողութիւններով պիտի բարձրանան եւ իրենց հետ հայրենիքն է որ պիտի բարձրացնեն ամուր, պայծառ եւ շէն-

շող Հայաստանի մը տեսիլքով (խօսքին ամբողջութիւնը կարդալ էջ 108):

**10-ՐԴ ՄԱՐԶԱԽԱՂԵՐՈՒ ՋԱՀԻՆ ԲԱՅԱՎԱՌՈՒՄԸ**

Խօսքերու ավարտին, ներկաները ողջունեցին Միծեռնակաբերդէն մինչեւ «Հանրապետութեան» հրապարակ փոխնի փոխ ջահը փոխադրած 21 մարզիկ-մարզիկուհիները, առաջնորդութեամբ ծանրամարտի Եւրոպայի եւ աշխարհի ախոյեան Նազիկ Աւդալեանի: Ջահը հասաւ ջահավառութեան պատուանդան, ուր բազմահազար ներկաներու ծափող ջոյներով եւ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետին

հանդիսաւոր յայտարարութեամբ բողոքաւորեցաւ ան՝ ազդանշանը տուաւ թէ՛ 10-րդ մարզախաղերու եւ թէ՛ միութեան 100-ամեակի տօնակատարութիւններուն պաշտօնական բացման:

Տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.ական մարզիկի երգում, զոր կատարեց Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի մարզիկներէն եղբ. Անդրանիկ Սարգիսեան:

Ապա, մինչեւ հանդիսութեան համերգային յայտագիրին անցումը տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.ը եւ մարզական անոր շարժումը ծանօթացնող տեսանիւթի մը ցուցադրութիւնը:

**ՀԱՄԵՐԳԱՅԻՆ ՅԱՅՏԱԳԻՐԸ ԵՒ ՀՐԱՎԱՌՈՒԹԻՒՆԸ**

Երեկոյեան ժամը 9-ին սկսաւ հանդիսութեան համերգային բաժինը, ուր ժողովրդային, ազգային-հայրենասիրական երգերով ելոյթ ունեցան հայրենի երգիչ-երգչուհիներ՝ Ռուբէն Սասունցի, Աննա Խաչատրեան, Նարեկ Բաւէեան, Սոնա Շահգեղեան, Արսէն Գրիգորեան, Նարէ Գէորգեան, Վարդան Պատալեան, Անահիտ Շահպազեան, Էրիկ Կարապետեան, Արաբօ եւ Ներսիկ Իսպիրեաններ, Կէպի Կալոյեան, Նարինէ Դովլաթեան եւ Սոֆի Մխէեան:

Համերգային յայտագիրը փակուեցաւ Երեւանի երկինքը զեղեցկօրէն զարդարող հրավառութեամբ:







# ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ ԶՕՐԱԿՑՈՒԹԻՒՆ

**Հ**ամա-Հ.Մ.Ը.Մ.ական 10-րդ մարզախաղերու դաստիարակչական ծրագիրներու ծիրէն ներս, Ուրբաթ, 21 Յուլիսի առաւօտեան ժամը 10-ին, մարզախաղերու մասնակից պատուիրակութիւններէն մաս մը, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբայրներ Իշխան Եղիայեանի, Արմանտո Թորգոմեանի եւ «Մարզիկ» պաշտօնաթերթի խմբագիր Վիգէն Աւագեանի գլխաւորութեամբ, այցելեց հայկական բանակի Նուպարաշէնի զօրամասը:

Շուրջ 300 մարզիկ-մարզիկուհիներէ բաղկացած պատուիրակութիւնը շրջեցաւ զօրամասին գանազան բաժինները, ծանօթացաւ հայ զինուորի առօրեային, զինուորական նախապատրաստութիւններուն եւ օգտագործած գէնք ու զրահին՝ թեթեւ, կիսածանր եւ ծանր, մինչեւ «T72» տիպի հրասայլեր:

Հայութեան «կամաւոր բանակի»

անդամները զրուցեցին զօրամասի զինուորներուն հետ եւ իրենց գնահատանքն ու զօրակցութիւնը յայտնեցին հայրենիքի պաշտպանութեան նուիրական գործին իրենց ի գործ դրած մեծ գոհողութիւններուն համար:

Այցելութեան վերջին մասով, մարզիկ-մարզիկուհիները հաւաքուեցան զօրամասին հրապարակը, ուր հրամանատարի տեղակալ, գնդապետ Յակոբ Աւետեան խրախուսական խօսք մը ուղղեց այցելուներուն: Ան ըսաւ, որ նման այցելութիւններ կը գօտեպնդեն հայ զինուորը եւ զգացնել կու տան, որ ան իր թիկունքին ունի ոչ միայն Հայաստանի երեք միլիոն ժողովուրդը, այլ՝ աշխարհի 10 միլիոն համայն հայութիւնը: Հայ զինուորը իր մարտունակութեամբ եւ կազմակերպութեամբ կարեւորագոյն երաշխիքն է մեր հայրենիքի հզօ-

րութեան եւ մեր ժողովուրդի անվտանգութեան ապահովման, նշեց ան:

Խօսք առաւ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Իշխան Եղիայեան: Ան յայտնեց, որ հայկական քաջարի բանակը ազգային մեր հպարտութիւնն է եւ արժանապատուութիւնը: Հ.Մ.Ը.Մ.ի աշխարհասփիւռ 108 մասնաճիւղերը պէտք է նկատել հայկական բանակին մէկկական զօրամասերը, ուր Հ.Մ.Ը.Մ.ականներ կը սորվին ծառայել իրենց ժողովուրդին եւ հայրենիքին:

Յաջորդեց յիշատակի նուէրներու փոխանցումը: Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Արմանտո Թորգոմեան հրաւիրեց պատուիրակու-





Թիւններու ներկայացուցիչները Հ.Մ.-Լ.Մ.ի կողմէ մարզական իրեր նուիրելու հայկական բանակին: Այս առիթով եղբ. Թորգոմեան շեշտեց, որ իւրաքանչիւր Հ.Մ.-Լ.Մ.ականի մէջ բանակային մը կայ: Հ.Մ.-Լ.Մ.ի «կամաւոր բանակը» միշտ եղած է ու պիտի մնայ ազգային բանակի կողքին, որովհետեւ ազգային արժէքները սրբութիւններ են Հ.Մ.-Լ.Մ.ական սերունդներուն համար:

**«ՎԱԶԳԷՆ ՍԱՐԳՍԵԱՆԻ ԱՆՈՒԱՆ ՍՊԱՅԻՑ ՎԱՐՎԱՐԱՆ» ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ**

Յաջորդ օր, Շաբաթ, 22 Յուլիսի առաւօտեան, մարզախաղերու մասնա-



կից մարզիկ-մարզիկուհիներու այլ պատուիրակութիւնը մը, շուրջ 200 հոգիէ բաղկացած, այցելեց «Վազգէն Սարգսեանի անուան սպայից վարժարան» եւ ծանօթացաւ հայկական բանակի ապագայ ղեկավարութիւնը պատ-

րաստող հիմնարկին: Հ.Մ.-Լ.Մ.ականներ շրջեցան վարժարանին զանազան բաժանմունքները, ծանօթացան հիմնարկին կրթական ծրագիրներուն եւ յիշատակի նուէրներ յանձնելէ ետք հրաժեշտ տուին վարժարանին:





# ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ ՄԱՐԶԱԽԱՂԵՐՈՒ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐՈՒՆ ԿԸ ԾԱՆՕԹԱՑՆԵՆ ՀԱՅԱՍՏԱՆՆ ՈՒ ԱՐՑԱԽԸ ԵՒ ԿԸ ՔՆՆԱՐԿԵՆ ՄԵՐՕՐԵԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԵԱՆ ԱԻԵԼԻ ՀԱՍԱՆԵԼԻ ԴԱՌՆԱԼՈՒ ԿԱՐԵԼԻՈՒԹԻՒՆՆԵՐԸ

**Հ**ամա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզախաղերը ունեցան նաև իրենց դաստիարակչական յայտագիրները: Մարզախաղերու մասնակիցներէն խումբ մը մասնակցեցաւ «Վերադարձ Հայաստան» («Repatriation Armenia») կազմակերպութիւնը ծանօթացնող դաստիարակչական հանդիպումին, ուր աշխարհի չորս ծագերէն եկած մարզիկ-մարզիկուհիներ տեղեկացան, թէ ի՞նչպէս կարելի է կամաւոր ծառայութիւններ կատարել Հայաստանի զանազան շրջաններու տարբեր բնագաւառներուն մէջ:

### «ԴԻՊԻ ՀԱՅՔ»

Մարզախաղերու մասնակիցներէն այլ խումբ մը ծանօթացաւ «Դէպի Հայք» կազմակերպութեան աշխատանքներուն:

### «ԱՐՅԱԽԻ ՄԷՋ ԶԱՐԳԱՅՄԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐ»

Արցախը եւս իր տեղի ունեցաւ մար-

զախաղերու դաստիարակչական ծրագիրներուն մէջ: «Թիւֆէնկճեան» հիմնարկի տնօրէն Րաֆֆի Տուտազլեան Հ.Մ.Ը.Մ.ական մարզիկ-մարզիկուհիներուն ներկայացուց հիմնարկին ծաւալած աշխատանքները Արցախի մէջ: Ան խօսեցաւ նաև Արցախի զարգացման հեռանկարներուն եւ երիտասարդութենէն սպասուած դերակատարութեան մասին:

### «Հ.Մ.Ը.Մ.Ը ԵՒ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԻՒՆԸ»

Դաստիարակչական ծրագիրներու շարքին, ուշագրաւ եղաւ «Հ.Մ.Ը.Մ.ը եւ երիտասարդութիւնը» նիւթով զրոյց-քննարկումը, զոր վարեցին Անգլիայէն եղբ. Անտոն Ծատայեան եւ Լիբանանէն քոյր Փաթիլ Եսայեան: Անոնք զրոյցի մասնակիցներուն ներկայացուցին շարք մը հարցադրումներ, որոնց պատասխաններուն շուրջ կատարեցին միտքերու եւ առաջարկներու օգտակար փոխանակումներ:





# ԽԱՆԱՍՈՐԻ ԱՐՇԱՒԱՆՔԻ ԵՒ ԼԻԶՊՈՆԻ ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԵՐԳԵՐՈՒ ԵՐԵԿՈՅ

**Ե**րեքշաբթի, 25 Յուլիսի երեկոյեան, Համա-Հ.Մ.-Ը.Մ.ական 10-րդ մարզախաղերու մասնակիցները յեղափոխական երգերու երեկոյով մը նշեցին Խանասորի արշաւանքին 120-ամեակը եւ Լիզպոնի գործողութեան 34-ամեակը:

Երեկոյին բացումը կատարեց եւ ներկաները ողջունեց Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի վարչութեան փոխ ատենապետ եղբ. Ժիրայր Պէօճէքեան: Ան ըսաւ, որ Խանասորի արշաւանքը մեր ժողովուրդին տուաւ նախաձեռնութեան ոգիի, մարտունակութեան եւ հայրութեան թշնամիները պատժելու լաւագոյն օրինակը: Խանասորը ներշնչումի աղբիւր հանդիսացաւ սերունդներու: Խանասորի օրի-



նակով Լիզպոնի անձնագոհ Հինգ տղաքը եւս տուին նախաձեռնութեան, մարտունակութեան եւ Հայ Դատի դէմ բարձրացած լուրթեան պատը քանդե-



լու օրինակը: Լիզպոնը,- նշեց Պէօճէքեան,- իր կարգին ներշնչումի օրինակ ծառայեց Արցախեան ազատամարտի հերոսներուն, որոնք կուռի դաշտ մեկնեցան Խանասորի եւ Լիզպոնի հերոսներուն հետեւողութեամբ:

Եղբ. Պէօճէքեան իր խօսքին մէջ յիշեց նաեւ Արցախեան քառօրեայ պատերազմի հերոսներն ու նահատակները, որոնք արժանի են իւրաքանչիւր Հ.Մ.-Ը.Մ.ականի յարգանքին եւ գնահատանքին: Հ.Մ.Ը.Մ.ը սոսկ մարմնակրթական միութիւն չէ,- շեշտեց եղբ. Պէօճէքեան,- ան ազգային-հայրենասիրական դաստիարակութիւն ջամբող կազմակերպութիւն է, որուն բովէն ելած են եղբայր Վարդան Բախշեանի եւ Վիգէն Զաքարեանի նման նուիրեալներ:

Բացման խօսքէն ետք, ներկայ 1000 մարզիկ-մարզիկուհիները ազգային-յեղափոխական երգերով ոգեկոչեցին մեր հին ու նոր բոլոր նահատակներուն յիշատակը: Այնուհետեւ, երգիչներ Սուրէն Աճէմեան եւ Գէորգ Հաճեան ներկաներուն խանդավառութիւնը գագաթնակէտին հասցուցին Խանասորի արշաւանքին եւ Լիզպոնի նուիրուած բազմաթիւ երգերով: Այս առիթով հնչեց նաեւ նահատակ Վարդան Բախշեանի նուիրուած նոր երգ մը:





## Հ.Մ.Ը.Մ.Ի ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԵԱՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ ՍՓԻՒՌՔԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ

Հինգշաբթի, 27 Յուլիսի կէսօրին, համա-Հ.Մ.-Ը.Մ.-ական մարզախաղերու աւիթով Երեւան գտնուող Հ.Մ.Ը.Մ.ի պատասխանատուներու պատուիրակութիւն մը այցելեց Սփիւռքի նախարարութիւն եւ ընդունուեցաւ նախարար Հրանոյշ Յակոբեանի կողմէ: Պատուիրակութեան մաս կազմեցին Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբայրներ՝ Գառնիկ Մկրտիչեան, Վաչէ Նաճարեան, Իշխան Եղիայեան, Օշին Փիրումեան, Բազրատ Եսայեան, Անդրանիկ Պահարեան, Վիգէն Քորթեան, Արմանտօ Թորգոմեան, «Մարզիկ» պաշտօնաթերթի խմբագիր Վիգէն Աւագեան եւ 10-րդ մարզախաղերու կազմակերպիչ յանձնախումբի ատենապետ եղբ. Մանուէլ Մարսէլեան:

Հ.Մ.Ը.Մ.ի պատուիրակութիւնը ողջունելով, նախարար Յակոբեան շեշտեց նման մարզախաղերու Հայաստանի մէջ կազմակերպման կարեւորութիւնը: Ան ըսաւ, որ նման նախաձեռնութիւնները կը նպաստեն նոր սերունդի հայրենաճանաչութեան, մարզական մրցակցութեան ոգիի զարգացման եւ ցանցային կապերու հաստատման: Բազմահարիւր պատանիներ ու երիտասարդներ ծանօթութիւններ կը հաստատեն իրարու

հետ, նաեւ՝ հայրենի իրենց հասակակիցներուն հետ, ինչ որ դրական եւ օգտակար քայլ է:

Նախարար Յակոբեան իր գոհունակութիւնը յայտնեց տարուէ տարի մարզախաղերու մասնակիցներու եւ շրջաններու թիւերուն աճին համար եւ նկատել տուաւ, որ Սփիւռքի նախարարութիւնը միշտ եղած է ու պիտի մնայ Հ.Մ.Ը.Մ.ի կողքին, մանաւանդ որ յառաջիկայ տարի միութիւնը կը պատրաստուի ձեռնարկներու շարքով մը հայրենիքի մէջ տօնելու իր հիմնադրութեան 100-ամեակը:

Իր կարգին, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան Սփիւռքի նախարարութեան ճամբով շնորհակալութիւն յայտնեց հայրենի պետութեան, որ ճիշդ չինայեց միութեան 10-րդ մարզախաղերու յաջողութեան համար: Ան նկատել տուաւ, որ Հ.Մ.Ը.Մ.ի եւ Սփիւռքի նախարարութեան միջեւ ստորագրուած գործակցութեան յուշագիրը, որ չորս տարուան կեանք ունի, թեւակոխած է գործնականացման փուլ եւ կը խոստանայ յառաջիկային աւելի արդիւնաւորուիլ ու զարգանալ:





Եղբ․ Մկրտիչեան նաև յայտնեց, որ Համա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզախաղերուն նպատակը միայն մարզական չէ, մարզականը միջոց է, գլխաւոր նպատակը հայապահպանումն է, հայ երիտասարդները Հայաստան բերելը, փոխադարձ կապեր մշակելը եւ Հայաստան-Սփիւռք գործակցութեան զարգացումն է:

Այցելութեան աւարտին, առ ի գնահատանք «Համա-Հ.Մ.Ը.Մ.ական 10-րդ մարզախաղերու բարձր մակարդակով կազմակերպման», նախարար Յակոբեան Սփիւռքի նախարարութեան պատուոյ գերերով պարգևատրեց Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը եւ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի վարչութիւնը: Նոյն առիթով, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը մարզախաղերու յուշանուէր յանձնեց նախարար Հրանտշ Յակոբեանին:

**... ՆԱԵՒ ՄԱՐՄՆԱՄԱՐԶԻ ԵՒ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՀԱՐՑԵՐՈՒ ՆԱԽԱՐԱՐԻՆ**

Հ.Մ.Ը.Մ.ի պատուիրակութիւնը այցելեց նաև Հայաստանի մարմնամարզի



եւ երիտասարդական հարցերու նախարար, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի երկար տարիներու անդամ Հրաչեայ Ռոստոմեանին:

Նախարար Ռոստոմեան Հ.Մ.Ը.Մ.ի ներկայացուցիչներուն յայտնեց, որ 10 տարի է ի վեր Համա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզախաղերը արդէն իրենց կարեւոր տեղը ունին Հայաստանի մարզական կեանքին մէջ: Ան նչեց, որ պետական որոշումով, նախարարութիւնը բոլոր ձեւի դիւրութիւններ կ'ընծայէ մարզախաղերու հեզասահ ընթացքին ապահովման համար:

Հ.Մ.Ը.Մ.ի անունով նախարար Ռոստոմեանին շնորհակալութեան խօսք յայտնեց Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ․ Գառնիկ Մկրտիչեան: Ան նչեց, որ Ռոստոմեանի գլխաւորած նախարարութիւնը եւ Հայաստանի մարզական Ֆետերասիոնները, ինչպէս անցեալին, այս մարզախաղերուն եւս եղան Հ.Մ.Ը.Մ.ի կողքին՝ կարելի դարձրելով այսքան մեծաթիւ մասնակցութեամբ մարզախաղերու կանոնաւոր կազմակերպումը: Նախարարութիւնը սիրով տրամադրեց մարզադաշտեր, իրաւարարներ եւ մարզական պատասխանատուներ, որոնք կատարեցին շնորհակալ գործ:

Այցելութեան աւարտին, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը հայրենի նախարարը պատուեց մարզախաղերու ոսկէ մետալով:

**ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԵՒ ՀՐԱԺԵՇՏԻ ՀԱՆԴԻՊՈՒՄ**

Համա-Հ.Մ.Ը.Մ.ական 10-րդ մարզախաղերու աւարտին, Երկուշաբթի, 28 Յուլիսի յետմիջօրէին, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը «Մարիոք» պանդոկի սրահներէն մէկուն մէջ կազմակերպեց շնորհակալութեան եւ հրաժեշտի հանդիպում մը, որուն հրաւիրուեցան մարզախաղերու նախագահը, բարերարները, կազմակերպիչ յանձնախումբի անդամները եւ Կեդրոնական Վարչութեան գրասենեակի անհնակազմը: Ներկայ եղաւ նաև հիւրաբար Երեւան գտնուող, Լիբանանի հայկական երեսփոխանական պլոքի ներկայացուցիչ Յակոբ Բագրատունի:

Հանդիպումին խօսք առաւ եւ հաւաքական աշխատանքի արդիւնաւէտութեան մասին արտայայտուեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ․ Գառնիկ Մկրտիչեան: Ան նչեց, որ առանց նուիրեալ Հ.Մ.Ը.Մ.ականներու նիւթական եւ բարոյական աջակցութեան կարելի պիտի չըլլար մարզախաղերը յաջողութեամբ պատել: Եղբ․ Մկրտիչեան յայտնի շնորհակալութիւն յայտնեց մարզախաղերու նախագահ եղբ․ Սարգիս Տէր Պետրոսեանին, որ հաւաքատուր միութեանական մը ըլլալու կողքին առաջաջեռն նուիրապատ մըն է:


Եղբ․ Մկրտիչեան յայտնեց, որ ի փարբերութիւն նախորդ մարզախաղերուն, այս անգամ





նախագահն ու նուիրապրունե-  
րը Հ.Մ.Բ.Մ.ական եղբայրներ  
էին: Ան յայտուկ յիշարակու-  
թեան արժանացուց Հ.Մ.Բ.Մ.ի  
Կեդրոնական Վարչութեան  
նախկին անդամ եղբ. Հրաչ Սի-  
սեռեանը, որ երկրորդ անգամ  
ըլլալով մեծագումար նուիրա-  
պրուութիւն կը կատարէ մար-  
զախաղերու լաւագոյն 16 մար-  
զիկ-մարզիկուհիներուն՝ վաս-  
տակաշար միութեանականնե-  
րու անունով բաժակներ փրա-  
մադրելու համար:

Իր խօսքին աւարտին, եղբ.  
Սկրիպիչեան մարզախաղերու  
ոսկի մեդալներով պարուեց  
նախագահ եղբ. Սարգիս Տէր  
Պետրոսեանն ու բարերար եղ-  
բայրները: Ան նաեւ յայտուկ  
յուշանուէրներ յանձնեց մար-  
զախաղերու կազմակերպման  
գրասենեկային եւ քարոզչա-  
կան աշխատանքները գլխաւո-  
րած՝ Կեդրոնական Վարչու-  
թեան գործավար քոյր Վերա  
Բարսեղեան-Տէր Պողոսեանին  
եւ «Մարզիկ»ի խմբագիր եղբ.  
Վիգէն Աւագեանին:



## ԵՐԲ ՄԱՐԶԻՉԸ ՄԱՐԶԻԿՈՒՀԻՆ ՉԵՌՔԸ ԿԸ ԽՆԴԻԷ... ԿԱՍԿԱԴԻ ԿԱՏԱՐԻՆ

Համա-Հ.Մ.Բ.Մ.ական 10-  
րդ մարզախաղերը ունեցան  
իրենց բախարաւոր զոյգը...

Մարզախաղերու ընթացք  
առնելէն երկու օր ետք, 24  
Յուլիսի երեկոյեան, Հ.Մ.

Բ.Մ.ի Աւարայիոյ պատերապոյի խումբի մարզիչ եղբ.  
Նարեկ Միքայէլեան, Երեւանի կեդրոնը, Կասկադի կա-  
տարին, ամուսնութեան անսպասելի առաջարկ մը ներ-  
կայացուց իր շրջանի մարզիկուհիներէն քոյր Սթեֆանի

Խանճեանին, վերջինին ծնողքին ներկայութեան:

Նարեկ եւ Սթեֆանի իրարու ծանօթներ էին որոշ  
ժամանակէ մը ի վեր, սակայն նման առաջարկ, անկաս-  
կած, գեղեցիկ անակնկալ մըն էր Սթեֆանիին եւ ծնող-  
քին համար:

Ծնողքին հաւանութեամբ, Սթեֆանի չմերժեց Նարե-  
կին առաջարկը եւ մարզախաղերը իրենց ամէնէն ան-  
միջական արդիւնքը փոյին հայկական, Հ.Մ.Բ.Մ.ական  
հարազատ բոյնի մը կազմութեամբ:

Մեր խնդակցութիւնները բախարաւոր զոյգին:



# ՅԱՂԹԱՆԱԿԻ ՊԱՐԱՀԱՆԴԵՍԸ 1918... ՄԱՍՆԱԿԻ ՑՆԵՐՈՎ

**Ն**ախորդ մարզախաղերու նման, համա-Հ.Մ.Լ.Մ.ական 10-րդ մարզախաղերը եւս ունեցան յաղթանակի իրենց պարահանդէսը, որ տեղի ունեցաւ Աբովեանի «Փարաւոն» ճաշարանին մէջ, ներկայութեամբ 1918 Հ.Մ.Լ.Մ.ականներու, բարեկամներու, Սփիւռքէն ժամանած ծնողներու եւ հիւրերու:

Յաղթանակի ճաշկերոյթին ներկայ եղան համա-Հ.Մ.Լ.Մ.ական 10-րդ մարզախաղերու նախագահ Սարգիս Տէր Պետրոսեան, Հ.Մ.Լ.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան եւ Կեդրոնական Վարչութեան անդամ եղբայրներ՝ Բագրատ Եսայեան, Օշին Փիրումեան, Վաչէ Նա-

ճարեան, Իշխան Եղիայեան, Անդօ Պահարեան, Վիգէն Քորթեան, Հ.Յ.Դ. Բիւրոյի ներկայացուցի Հրանդ Մարգարեան, Հ.Յ.Դ. Բիւրոյի նախկին անդամ Մարիօ Նալպանտեան, Շիրակի մարզպետ, Հ.Մ.Լ.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի վարչութեան նախկին ատենապետ Արթիւր Խաչատրեան, Հ.Մ.Լ.Մ.ի Կեդրոնական Վարչութեան նախկին անդամներ եւ Հ.Մ.Լ.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի վարչութեան անդամներ:

Յատկանշական էր ճաշկերոյթին մասնակիցներու թիւը, որ գոլգոզիպոլթեամբ մը կը ներկայացնէր 100-ամեակի իր տօնակատարութիւններուն պատրաստուող միութեան հիմնադրութեան թուականը: Տոմսերը սպառած էին ճաշկերոյթէն քանի մը օր առաջ եւ

շատեր գրկուած էին համա-Հ.Մ.Լ.Մ.ական այս եզակի տօնախմբութեան մը թնորտէն:

Ճաշկերոյթին Հ.Մ.Լ.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի վարչութեան եւ Հ.Մ.Լ.Մ.ի Կեդրոնական Վարչութեան կողմէ խօսքեր արտասանեցին եղբայրներ Դաւիթ Յակոբեան եւ Բագրատ Եսայեան: Անոնք գնահատեցին աւելի քան 1000 մասնակիցներով յաջող մարզախաղեր կատարելու իրագործումը եւ բարի երթ մաղթեցին հիւր պատուիրակութիւններուն՝ չորս տարի ետք դարձեալ տեսնուելու խոստումով:

Խօսքերէն ետք, ճաշկերոյթը խանդավառեցին Սփիւռքէն եւ Հայաստանէն խումբ մը երգիչներ: Ներկաները երկար ժամեր երգեցին, պարեցին, ցնծացին եւ Հ.Մ.Լ.Մ.ական քէֆ կատարեցին՝ շրջանակներ կազմած, խմբանկարներ եւ սելֆի նկարներ նկարուելով:

Ստեղծուած խանդավառ մթնոլորտին մէջ, ներկաները նուիրատուութիւններ կատարեցին Հ.Մ.Լ.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի աշխատանքներուն ի նպաստ:

Խանդավառութիւնը իր գագաթնակէտին հասաւ Ներսիկ եւ Արաբօ Իսպիրեաններու ազգային-յեզափոխական երգերով, որոնք աւելի եւս ոգեւորեցին Հ.Մ.Լ.Մ.ական ներկայ երիտասարդութիւնը: Հայաստանի ու Հ.Յ.Դ. Դաշնակցութեան դրօշները պարզած՝ երիտասարդներ հայութեան անկեղծ զինուորները ըլլալու ուխտը կատարեցին, վաղ թէ՛ ուշ Արարատի գագաթը նուաճելու խոստումը տուին եւ իրարու հրաժեշտ տուին անմոռանալի յուշերով եւ յիշատակներով:

# ՀԱՄԱ-Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ 10-ՐԴ ՄԱՐԶԱԽԱՂԵՐՈՒՆ ՓԱԿՈՒՄԸ` ԼԱԲԱԳՈՅՆ ՄԱՐԶԻԿՆԵՐՈՒ ՊԱՐԳԵՒԱՏՐՈՒՄՈՎ

**ԵՂԲ. ՔՈՒԻՆԹ ՔԵՄՆԻՑ  
ՄԱՐԶԱԽԱՂԵՐՈՒ «ՏԻՊԱՐ ՄԱՐԶԻԿ»,  
ԻՍԿ Հ.Մ.Ը.Մ. ԳԱՆԱՏԱ՝  
«ՏԻՊԱՐ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆ»**

**29** Յուլիսի յետմիջօրեին, Երեւանի «Միքա» մարզական համալիրին վրայ կատարուած պասքեթպոլի եւ ֆուլթպոլի աւարտական մրցումներով իրենց աւարտին հասան համա-Հ.Մ.Ը.Մ.ական 10-րդ մարզախաղերը: Աւարտական մրցումները

կանխեցին 3-րդ եւ 4-րդ դիրքերու ճշգրտման մրցումները: Ախոյեաններու յտակացումէն ետք, մարզական համալիրի պասքեթպոլի դաշտին վրայ տեղի ունեցաւ փակման հանդիսաւոր արարողութիւն՝ մարզախաղերու մասնակից պատուիրակութիւններու տողանցքով, մրցանակաբաշխութեամբ եւ իւրաքանչիւր մար-



զաճեւի լաւագոյն մարզիկի ընտրութեամբ: Հանդիսութեան Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անունով եղբ. Իշխան Եղիայեան շնորհակալութեան խօսք յայտնեց մարզախաղերու յաջողութեան մեծապէս նպաստած հայրենի իշխանութիւններուն, հիւրընկալ շրջանի՝ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի վարչութեան, մարզախաղերու նախագահ եղբ. Սարգիս եւ քոյր Ալիս Տէր Պետրոսեաններուն, բոլոր բարերարներուն եւ բարեկամներուն: Ան ըսաւ, որ համա-Հ.Մ.Ը.Մ.ական 10-րդ մարզախաղերու իրագործումով Հ.Մ.Ը.Մ. 100-ամեակ կ'ուղղուի աւելի քան երեք խանդավառ ու հաստատ կամքով, միշտ հաւատարիմ մնալով իր նշանաբանին՝ «Բարձրացիր-բարձրացուր»ին (խօսքին ամբողջութիւնը կարդալ էջ 110):

Խօսք առաւ նաեւ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի վարչութեան ատենապետ եղբ.



Դաւիթ Յակոբեան եւ ողջունեց աշխարհի 21 երկիրներէն հայրենիք համախմբուած Հ.Մ.Ը.Մ-ական մարզիկներն ու մարզիկուհիները՝ յուսարով որ անոնք իրենց երկիրները կը վերադառնան միութենական անմոռանալի յուշերով եւ ազգային բարձր տրամադրութիւններով: Այս առիթով, եղբ. Յակոբեան զնահատեց Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի 80 հոգինոց կամաւորներու խումբը, որ 10 օրեր շարունակ կազմակերպչական մեղաւջան աշխատանք կատարեց՝ մարզախաղերու յաջողութեան համար:

Փակման հանդիսութեան առաջին անգամ ըլլալով հնչեց Հ.Մ.Ը.Մ-ի 100-ամեակի քայլերգը (խօսք՝ Ներսէս Լիպարեանի, երաժշտ.՝ Վահրամ Էմմիեանի, կատարողութիւն՝ Գառնիկ Սարգիսեանի):





Արդարեւ, Հ.Մ.Ը.Մ. Լիբանան տիրացաւ Ֆութպոլի ախոյեանութեան տիտղոսին, իսկ Արեւմտեան Մ. Նահանգներ՝ Ֆութպոլի կրտսերներու տիտղոսին:

Պատգեթպոլի պարագային, մեծագոյն անակնկալը եղաւ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.-Ս.Կ-ի աղջկանց խումբին առաջնութեան տիրացումը, այլապէս երէց տղոց, կրտսեր տղոց եւ աղջկանց տիտղոսներուն տիրացան Հ.Մ.Ը.Մ-ի Արեւմտեան Մ. Նահանգներու խումբերը:

Փինկ-փոնկի տղոց ու աղջկանց ախոյեան հանդիսացան Հ.Մ.Ը.Մ. Լիբանանէն եղբ. Աւօ Մունջօղեան եւ քոյր Լարա Քէչէպաշեան: Ճատրակի մրցումներուն առաջին եւ երկրորդ հանդիսացան Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.-Ս.Կ-էն եղբ. Հրաչեայ Վարդանեան եւ եղբ. Ռազմիկ Առաքելեան: Լիբանանէն եղբ. Հրայր Պրունսուզեան տիրացաւ պրոնզ մետալի:

Թենիսի մրցումներուն, առաջին երեք դիրքերը գրաւեցին Հ.Մ.Ը.Մ-ի Արեւմտեան Մ. Նահանգներու, Կիպրոսի եւ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.-Ս.Կ-ի մարզիկները:

Լողի տղոց մրցումներուն, Թեհրանի Հ.Մ.Ա.Կ-ը տիրացաւ 20 մետալի, Արեւմտեան Մ. Նահանգներ՝ 9 մետալի, Լիբանան՝ 7 մետալի եւ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.-Ս.Կ.՝ 6 մետալի: Լիբանանէն եղբ. Սեւակ Տէմիրճեան խլեց 4 ոսկի եւ 3 արծաթ մետալ: Աղջկանց մրցումներուն, Արեւմտեան Մ. Նահանգներ տիրացաւ 8 մետալի, Կիպրոս 7, Սուրիա եւ Հ.Մ.Ա.Կ.՝ 6 մետալի, Լիբանան եւ Հ.Ա.-Ս.Կ.՝ 4 մետալի: Կիպրոսէն քոյր Մարի Սոմաքեան-Ճիորճիու խլեց 7 ոսկի մետալ, իսկ Սուրիայէն քոյր Միրնա Պզտիկեան՝ 4 ոսկի եւ 2 արծաթ մետալ:



**ՄԱՐԶԱԽԱՂՆԵՐՈՒ ԱՆՈՅՆԱՆՆԵՐԸ**

Համա-ՀՄ.Ը.Մ-ական 10-րդ մարզախաղերու ախոյեաններուն յտակացու-

մը դիւրին չեղաւ: 10 օրուան մրցակցութենէ ետք, աւարտական սպասուած մրցումները եղան հետաքրքրական եւ անակնկալներով լեցուն:







Փակման հանդիսութեան յայտարարուեցան իւրաքանչիւր մարզածելի լաւագոյն մարզիկին եւ մարզիկուհիին անունները, որոնք ստացան վաստակաշատ Հ.Մ.Ը.Մ.ականներու անունով հետեւեալ բաժակները.-

- Պասքեթպոլի երէց տղոց լաւագոյն մարզիկ («Վարդգէս Ալահայտոյեան բաժակ»)- եղբ. Արամ Թարգիպաշեան, Արեւմտեան Մ. Ն.:

- Պասքեթպոլի կրտսեր տղոց լաւագոյն մարզիկ («Դանիէլ Դանիէլեան բաժակ»)- եղբ. Ալէքս Իսկէնտէրեան, Արեւմտեան Մ. Ն.:

- Պասքեթպոլի երէց աղջկանց լաւագոյն մարզիկ («Վահրամ Դանիէլեան բաժակ»)- քոյր Սոֆիա Տէմիրճեան, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.:

- Պասքեթպոլի կրտսեր աղջկանց լաւագոյն մարզիկ («Սիւրմանթօ Կարապետեան բաժակ»)- քոյր Ալին Օվաննէսեան, Արեւմտեան Մ. Ն.:



- Ֆութպոլի լաւագոյն մարզիկ («Վիգէն Զաքարեան բաժակ»)- եղբ. Տիրան Պէպէքեան, Արեւմտեան Մ. Ն.:

- Վոլիպոլի աղջկանց լաւագոյն մար-

զիկ («Յովհաննէս Պայթարեան բաժակ»)- քոյր Անի Ստեփանեան, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.:

- Թենիսի լաւագոյն մարզիկ («Վար-





ղան Բախչեան բաժակ»)- եղբ. Էտմոն Այնէճեան, Կիպրոս:

- Փինկ-փոնկի լաւագոյն մարզիկ («Յովհաննէս Հինգլեան բաժակ»)- քոյր Լարա Քէչեպաշեան, Լիբանան:

- Աթլէթի տղոց լաւագոյն մարզիկ («Բիւզանդ թորիկեան բաժակ»)- եղբ. Սերժ Չոլաքեան, Լիբանան:

- Աթլէթի աղջկանց լաւագոյն մարզիկ («Վահան Չերազ բաժակ»)- քոյր Լուի Թաշճեան, Լիբանան:

- Լոդի տղոց լաւագոյն մարզիկ («Շաւարշ Քրիսեան բաժակ»)- եղբ. Սեւան Ղարապէյքի, Հ.Մ.Ա.Կ.:

- Լոդի աղջկանց լաւագոյն մարզիկ («Տիգրան Ոսկունի բաժակ»)- քոյր Մարի Սոմաքեան-ձիորճիու, Կիպրոս:

- Ճատրակի տղոց լաւագոյն մարզիկ («Գրիգոր Յակոբեան բաժակ»)- եղբ. Հրաչեայ Վարդանեան, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.:

- Ֆուլթալի տղոց լաւագոյն մարզիկ («Նշան Թիւսիւզեան բաժակ»)- եղբ. Աւօ Տոնպուրեան, Լիբանան:

- Ֆուլթալի աղջկանց լաւագոյն մարզիկ («Արմէն Տէրիմէնճեան բաժակ»)- քոյր Պայծառ Ասատրեան, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.:

- Համա-Հ.Մ.Ը.Մ.ական 10-րդ մարզախաղերու տիպար մարզիկ («Միհրան Շիմշիրեան բաժակ»)- եղբ. Քուրինթ Քեմնից, Արեւմտեան Մ. Ն.:

Լաւագոյն մարզիկներու մրցանակաբաշխութենէն ետք, փակման հանդիսութեան կատարուեցաւ իւրաքանչիւր մարզաձեւի լաւագոյն երեք խումբերու եւ մարզախաղերու տիպար պատուիրակութեան պարգեւատրում (ախոյեաններու ցանկը տեսնել առանձին):

# ՀԱՄԱ-Հ.Մ.Բ.Մ.ԱԿԱՆ 10-ՐԳ ՄԱՐԶԱԽԱՂԵՐՈՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՐԴԻՒՆՔՆԵՐԸ



ՀԱՄԱ-Հ.Մ.Բ.Մ.ԱԿԱՆ 10-ՐԳ ՄԱՐԶԱԽԱՂԵՐՈՒ  
ՊԱՐԶԱԽԱՂԵՐՈՒ ՄԱՐԶԱԽԱՂԵՐՈՒ ՄԱՐԶԱԽԱՂԵՐՈՒ  
ՎՈՐՄԱՅ ԵՎ ԱՐԴԻՒՆՔՆԵՐԸ 2017

Կ'արժէ նշել, որ համա-Հ.Մ.Բ.Մ.ական 10-րդ մարզախաղերու «Տիպար պայտիբակութեան բաժակ»-ի մարժանացաւ Հ.Մ.Բ.Մ.ի Գ-անապայի շրջանը:

## ՓԻՆԿ-ՓՈՆԿ

1. Լիբանան
2. Հ.Մ.Ա.Կ.
3. Արեւմտեան Մ. Ն.

## ԹԵՆԻՍ

1. Արեւմտեան Մ. Ն.
2. Կիպրոս
3. Հ.Մ.Բ.Մ.-Հ.Մ.Ա.Կ.

## ԱԹԼԷԹ

1. Լիբանան
2. Արեւմտեան Մ. Ն.
3. Հ.Մ.Ա.Կ.

## ԼՈՂ

1. Հ.Մ.Ա.Կ.
2. Արեւմտեան Մ. Ն.
3. Կիպրոս

## ՃԱՏՐԱԿ

1. Հ.Մ.Բ.Մ.-Հ.Մ.Ա.Կ.
2. Լիբանան
3. Երուսաղէմ

## ՖՈՒԹՍԱԼ

1. Հ.Մ.Բ.Մ.-Հ.Մ.Ա.Կ.
2. Լիբանան
3. Հարաւային Ամերիկա

## ՎՈՒԻՊՈՒ

1. Հ.Մ.Բ.Մ.-Հ.Մ.Ա.Կ.
2. Արեւմտեան Մ.Ն.

## ՖՈՒԹՊՈՒԼ

1. Արեւմտեան Մ. Ն.
2. Լիբանան
3. Հ.Մ.Բ.Մ.-Հ.Մ.Ա.Կ.

## ՊԱՍՔԵԹՊՈՒԼ

1. Արեւմտեան Մ. Ն.
2. Հ.Մ.Բ.Մ.-Հ.Մ.Ա.Կ.
3. Հ.Մ.Ա.Կ.





ՖՈՒԹՊՈՒԼԻ ՆՈՐՈՒԹԻՒՆԸ՝  
ԿՐՏՍԵՐՆԵՐՈՒ ՄՐՑԱՇԱՐՔԸ



# Հ.Մ.Ը.Մ. ԼԻԲԱՆԱՆ ՖՈՒԹՊՈՒԼԻ ԱՄՈՅԵԱՆ

- Հ.Մ.Ը.Մ.-ՖՐԱՆՍԻ ՅԱՌԱՋԱՊԱՀ ԽԱԺԱԿ ՄԻՆԱՆԵԱՆ  
ՀԱՄԱ-Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ՄԱՐԶԱԽԱՂԵՐՈՒ  
ՊԱՏՄՈՒԹԵԱՆ Կ'ԱՆՑՆԻ ՅԱԶՈՐՊԱԿԱՆ  
ԵՐԿՈՒ ՄԱՐԶԱԽԱՂԻ ՆՇԱՆԱԿԵԼՈՎ 14 ԿՈԼ  
-Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ՇՐՉԱՆԸ ԿՐՏՍԵՐՆԵՐՈՒ ԱՄՈՅԵԱՆ



**Հ**ամա-Հ.Մ.Լ.Մ.ական 10-րդ մարզախաղերու մեծագոյն անակնկալը արձանագրուեցան Ֆուլթպոլի մրցումներուն, կրբ տիտղոսին գլխաւոր թեկնածուները՝ Արեւմտեան Մ. Նահանգներ (1985-ի, 1993-ի եւ 2009-ի ախոյեան) եւ Հ.Մ.Լ.Մ.-Ֆրանս (2013-ի՝ նախորդ մարզախաղերու ախոյեան) չչաջողեցան տիրանալ բաժակին: Լիբանան, իր պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով, արժանացաւ առաջնութեան եւ բաժակին:

Ֆուլթպոլի մրցումներուն մասնակցեցան 9 խումբեր՝ բաժնուած երկու խմբակի: Առաջին խմբակին մաս կազմեցին Հ.Մ.Լ.Մ.-Ֆրանս, Երուսաղէմ, Գանատա, Լոնտոն եւ Հարաւային Ամերիկա, մինչ Բ. խմբակը բաղկացաւ հե-

տեւալներէն՝ Արեւմտեան Մ. Նահանգներ, Լիբանան, Քուէյթ եւ Արեւելեան Մ. Նահանգներ:

Առաջին խմբակին մէջ մրցակցութիւնը սահմանափակուեցաւ Հ.Մ.Լ.Մ.-Ֆրանսի եւ Գանատայի խումբերուն միջեւ: Նախորդ մարզախաղերու Ֆուլթպոլի ախոյեանները Ա. հանգրուանի մրցումներուն եղան անսխալ: Անոնք յաղթանակով աւարտեցին իրենց երեք

մրցումները եւ ապահովեցին կարելի վեց կէտերէն վեցը: Իրենց ետին, Գանատա չորս կէտով գրաւեց խմբակին երկրորդ դիրքը:

Երկրորդ խմբակին մէջ, Արեւմտեան Մ. Նահանգներ եւ Լիբանան կատարեցին երկուքական մրցումներ եւ մէկական յաղթանակով ու մէկ հաւասարութեամբ ապահովեցին նոյնքան կէտեր, սակայն Արեւմտեան Մ. Նահանգներ իր



**ՖՈՒԹՊՈՒԼԻ  
ՀԱՍԱ-Հ.Մ.Լ.Մ.ԱԿԱՆ  
ՆԱԽՈՐԴ ԱԽՈՅԵԱՆՆԵՐԸ**  
1985- Արեւմտեան Մ. Ն.  
1993- Արեւմտեան Մ. Ն.  
2001- Սուրիա  
2009- Արեւմտեան Մ. Ն.  
2013- Հ.Մ.Լ.Մ.-Ֆրանս







## ԵՐԵՅՆԵՐՈՒ ՄՐՑՈՒՄՆԵՐՈՒ 58 ԿՈԼԵՐՈՒՆ ՅԵՂԻՆԱԿՆԵՐԸ

Ութը կոլ նշանակեց Խաժակ Սինանեան (Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանս)։

Չորսական կոլ նշանակեցին Սերժ Չաքրրեան (Լիբանան) եւ Գօգօ Աւետիսեան (Լիբանան)։

Երեքական կոլ նշանակեցին Յակոբ Սահակեան (Երուսաղէմ), Սամիր Եագուպեան (Երուսաղէմ), Վազգէն Յինտոյեան (Երուսաղէմ), Սերժ Օսկեան (Լիբանան) եւ Աւետիս Յարութիւնեան (Արեւմտեան Մ. Ն.)։

Երկուքական կոլ նշանակեցին Սերժ Պիտոյեան (Երուսաղէմ), Սերժ Թոփալեան (Գանատա), Ալպրիք Թահմազեան (Արեւմտեան Մ. Ն.) եւ Արամ Փանոսեան (Արեւմտեան Մ. Ն.)։

Մէկական կոլ նշանակեցին Կինօ Եագուպեան (Երուսաղէմ), Ջոհրապ Տէմիրճեան (Երուսաղէմ), Աբրահամ Գոլոյեան (Գանատա), Գրիգոր Յարութիւնեան (Գանատա), Սեւակ Եկտիպաշեան (Գանատա), Սեւակ Քոսիքեան (Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանս), Շանթ Քերթէշեան (Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանս), ըՍտեփան Յուրմուզեան (Հ.Մ.-Ը.Մ.-Ֆրանս), Յակոբ Նաճարեան (Լիբանան), Յարութ Մունջօղլեան (Լիբանան), Գեորգ Օհանեան (Լիբանան), Աբրահամ Աբիկեան (Քուէյթ), Շանթ Մարութեան (Արեւելեան Մ. Ն.), Սարգիս Նաճարեան (իր խումբին դարպասէն ներս, Արեւելեան Մ. Ն.), Էտկար Տամատեան (Արեւելեան Մ. Ն.), Ալէքքօ Իսկէնտերեան (Արեւելեան Մ. Ն.), Վահագն Մանոյեան (Արեւմտեան Մ. Ն.), Ռոպէրթ Մարտիրոսեան (Արեւմրտեան Մ. Ն.) եւ Տիրան Պէպէքեան (Արեւմտեան Մ. Ն.)։



լաւ կոլ-էվըրէյճին չնորհիւ դասուեցաւ խմբակին առաջինը։

Կիսաւարտականը իրարու դէմ հանեց մէկ կողմէ Արեւմտեան Մ. Նահանգներու եւ Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի խումբերը, իսկ միւս կողմէ՝ Լիբանանն ու Երուսաղէմը։ Յաղթանակը ժպտեցաւ Արեւմտեան Մ. Նահանգներու եւ Լիբանանի խումբերուն, որոնք աւարտականին իրարու դէմ ճակատեցան... 40 աստիճան օդի տաքութեան աննպաստ պայմաններուն մէջ։ Մարզիչ Ստեփան Պաղտասարեանի տղաքը, սակայն, դիմացան տաքին, Արեւմտեանի տղոց շարունակական յարձակումներուն եւ երկու հակայարձակումի ընթացքին, Գօգօ

Աւետիսեանի եւ Սերժ Չաքրրեանի կողերուն չնորհիւ յաջողեցան մարզախաղերու պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով բաժակը տանիլ Լիբանան։

Մրցումներու աւարտին, թէեւ լաւագոյն ֆուլթայոլիստի տիտղոսին եւ «Վիզէն Չաքարեան» բաժակին արժանացաւ Արեւմտեան Մ. Նահանգներու շրջանէն Տիրան Պէպէքեան, սակայն իր մասին ամէնէն աւելի խօսիլ տուաւ Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսէն իրաժակ Սինանեան, որ 5 մրցումի ընթացքին նշանակեց 8 կոլ (նախորդ մարզախաղերուն 8 կոլ նշանակած էր Արեւմտեան Մ. Նահանգներու շրջանէն Ռոպէրթ Մարտիրոսեան)։ Լիբանանէն Գօգօ Աւետիսեանի հետ,



Մինանեան գրաւեց 10-րդ մարզախաղերու «ումբարկու»ներու ցանկին առաջին դիրքը (ցանկը տեսնել առանձին): Խաժակ նախորդ մարզախաղերուն եւս փայլած էր՝ 6 կողով իր խումբը առաջնորդելով առաջնութեան տիտղոսին: 8 կողի նշանակումով ան համա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզախաղերու պատմութեան մէջ մուտք գործեց լայն դռնէն, որովհետեւ յաջորդական երկու մարզախաղի ընթացքին ան նշանակեց 14 կող, ինչ որ դժուար թէ գերազանցուի մօտիկ ապագային:

Ստորեւ՝ Ա. խմբակի մրցումներուն ընդհանուր արդիւնքները.-

- Գանատա-Հարաւային Ամերիկա 4-0
- Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանս-Լոնտոն 2-0
- Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանս-Գանատա 5-1
- Երուսաղէմ-Հարաւային Ամերիկա 10-0
- Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանս-Երուսաղէմ 3-0



Գանատա-Լոնտոն 7-0

**ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԱՍԱԽՈՐՈՒՄ**

- 1. Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանս 6 կէտ

- 2. Գանատա 4 կէտ
- 3. Երուսաղէմ 2 կէտ
- 4. Լոնտոն 0 կէտ
- 5. Հարաւային Ամերիկա 0 կէտ



# ԿՐՏԱԵՐՆԵՐՈՒ ՄՐՑՈՒՄՆԵՐՈՒ 51 ԿՈՒՆԵՐՈՒ ՐԵՂԻՆԱԿՆԵՐԸ

**Վեց կողմ** նշանակեց կրկն Քեչիշեան (Արեւմտեան Մ. Ն.):

**Հինգակյան կողմ** նշանակեցին Սեւակ Աւետիսեան (Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ) եւ Յովհաննէս Մինասեան (Քուէյթ):

**Չորս կողմ** նշանակեց Դրո Աւետեան (Արեւմտեան Մ. Ն.):

**Երեքակյան կողմ** նշանակեցին Կարո Օհաննէսեան (Լիբանան) եւ Սամուէլ Սամուէլեան (Քուէյթ):

**Երկուքակյան կողմ** նշանակեցին Արմանտ Աղէկեան (Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ), Մանօ Միքայէլեան (Լիբանան), Յովիկ Եթերեան (Գանատա) եւ Փաթրիք Պէկեան (Արեւմտեան Մ. Ն.):

**Մէկակյան կողմ** նշանակեցին Ռաֆիկ Շաքարեան (Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ), Ռոպէրթ Սանամեան (Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ), Արամայիս Աբրահամեան (Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ), Միքայէլ Միրզոյեան (Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ), Կերի Լէփէճեան (Լիբանան), Յովսէփ Գլընճեան (Լիբանան), Միքայէլ ճէհիզեան (Լիբանան), Միքայէլ Սարտիրոսեան (Արեւմտեան Մ. Ն.), Շէն Պարոնեան (Արեւմտեան Մ. Ն.), Ռազմիկ Մաքասճեան (Արեւմտեան Մ. Ն.), Արմէն Սելջոնեան (Գանատա), Քրիս Այնթապլեան (Արեւմտեան Մ. Ն.), Կրէկ Քեչիշեան (Արեւմտեան Մ. Ն.), Ալէք Փիլիպոսեան (Արեւմտեան Մ. Ն.), Յարութ Օքճեան (Քուէյթ), Յակոբ Արապեան (Քուէյթ) եւ Արմանտ Սամուէլեան (Արեւմտեան Մ. Ն.):

*Ստորեւ՝ Բ-խմբակին արդիւնքները.-*  
Լիբանան-Արեւելեան Մ. Ն. 4-1  
Արեւմտեան Մ. Ն.-Քուէյթ 7-0  
Լիբանան-Արեւմտեան Մ. Ն. 0-0  
Արեւելեան Մ. Ն.-Քուէյթ 2-1

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԱՍԱԻՈՐՈՒՄ

1. Արեւմտեան Մ. Ն. 3 կէտ
2. Լիբանան 3 կէտ
3. Արեւելեան Մ. Ն. 2 կէտ
4. Քուէյթ 0 կէտ

### ԿԻՍԱԻԱՐՏԱԿԱՆ

Արեւմտեան Մ. Ն.-Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսա 1-0

Լիբանան-Երուսաղէմ 3-0

### Յ-ՐԴ Կ-ՐԴ ԴԻՐՔԻ ՄՐՑՈՒՄ

Երուսաղէմ-Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսա 3-1

### ԱԻԱՐՏԱԿԱՆ

Լիբանան-Արեւմտեան Մ. Ն. 2-0

Կ'արժէ նշել, որ այս մարզախաղերուն կողերու թիւը եղաւ բաւական առատ: 14 մրցումի ընթացքին նշանակեցան 58 կողեր (միջին հաշուով 4.14 կող իւրաքանչիւր մրցումի ընթացքին): 9-րդ մարզախաղերուն, 24 մրցումի ընթացքին նշանակուած էին 55 կողեր (միջին հաշուով 2.29 կող), իսկ 8-րդ մարզախաղերուն, 16 մրցումի ընթացքին՝ 39 կողեր (միջին հաշուով 2.43 կող): Իբրեւ կողերու միջին թիւ, 6-րդ մարզախաղերու կողերուն թիւը մնաց անգերազանցելի (2001-ին՝ 16 մրցումի ընթացքին նշա-



նակուած էին 70 կողեր, միջին հաշուով 4.37 կող իւրաքանչիւր մրցումի ընթացքին):

Այս մարզախաղերուն երեք մրցումի ընթացքին նշանակուեցան... 24 կողեր, երբ Երուսաղէմ 10-0 արդիւնքով յաղթեց Հարաւային Ամերիկայի խումբին, իսկ Գանատա եւ Արեւմտեան Մ. Նա-





հանգներ 7-0 արդիւնքով պարտութեան մասնեցին Լոնտոնն ու Քուէյթը: Առաւելագոյն թիւով կոլեր նշանակեցին Երուսաղէմի (13 կոլ) եւ Գանատայի խումբերը (12 կոլ), իսկ առաւելագոյն թիւով կոլերը ստացան Հարաւային Ամերիկայի (14 կոլ), Քուէյթի եւ Լոնտոնի խումբերը (9-ական կոլ): Երկու խումբ խաղերուն հրաժեշտ տուաւ առանց որեւէ կոլ նշանակելու (Հարաւային Ամերիկա եւ Լոնտոն): Ախոյեան Լիբանան չորս մրցումի ընթացքին նշանակեց 9 կոլ եւ ստացաւ միայն մէկ կոլ:

**Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԿԱԶՄԸ  
ԿՐՏՍԵՐՆԵՐՈՒ ԱԽՈՅԵԱՆ**

Համա-Հ.Մ.Ը.Մ. ական 10-րդ մարզախաղերու նորութիւններէն եղաւ Ֆուլթոլլի կրտսերներու մրցաշարքը, որ նախաճաշակ մը տուաւ չորս տարի ետք տեղի ունենայիք Ֆուլթոլլի երէցներու մրցաշարքին մասին:

Այս մարզախաղերուն կրտսերներու խումբով ներկայացած էին հինգ շրջաններ՝ Գանատա, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ., Քուէյթ, Լիբանան եւ Արեւմտեան Մ. Նահանգներ: Կը սպասուէր, որ Լիբա-

նան եւ Արեւմտեան Մ. Նահանգներ ըլլային տիտղոսին գլխաւոր թեկնածուները: Լիբանանի փոխարէն Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի անակնկալ խումբն է, որ մինչեւ աւարտական հասաւ եւ Արեւմտեան Մ. Նահանգներու խումբին դէմ ճակատեցաւ ու... պարտուեցաւ: Արեւմտեան Մ. Նահանգներու շրջանը երէցներու իր խումբին պարտութիւնը հատուցեց կրտսերներու խումբին առաջնութեան տիրացումով: Չորս մրցումի ընթացքին Արեւմտեան Մ. Նահանգներու կրտսերները նշանակեցին 13 կոլեր: Կրէկ Քէչիշեան, առանձինն, նշանակեց վեց կոլ եւ հանդիսացաւ մրցաշարքին լաւագոյն կոլ-սքորըրը (բոլոր կոլերու հեղինակներուն անուանները տեսնել առանձին):

Հետաքրքրական է նշել, որ Ֆուլթոլլի կրտսերներու մրցումները երէցներու մրցումներէն աւելի կոլաւատ եղան: 10 մրցումի ընթացքին նշանակուեցան 51 կոլեր (միջին հաշուով 5.1 կոլ իւրաքանչիւր մրցումի ընթացքին): Ամէնէն աւելի կոլեր նշանակեցին Լիբանանի (15 կոլ) եւ Արեւմտեան Մ. Նահանգներու խումբերը (13 կոլ), իսկ ամէնէն աւելի կոլեր

ստացան Քուէյթի (21 կոլ) եւ Գանատայի խումբերը (16 կոլ):

Նոյնքան հետաքրքրական է աւելցնել, որ կրտսերներու կարգ մը մրցումներու իրաւարարութիւնը կատարեցին... փափուկ սեռի ներկայացուցիչներ:

Ստորեւ՝ մրցումներուն ընդհանուր արդիւնքները.-

- Արեւմտեան Մ. Ն.-Քուէյթ 5-1
- Լիբանան-Գանատա 6-2
- Քուէյթ-Գանատա 3-3
- Արեւմտեան Մ. Ն.-Հ.Մ.Ը.Մ.-  
Հ.Ա.Ս.Կ. 2-1

- Լիբանան-Քուէյթ 7-4
- Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.-Գանատա 7-1

- ԿԻՍԱԻԱՐՏԱԿԱՆ
- Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.-Լիբանան 2-1
- Արեւմտեան Մ. Ն.-Քուէյթ 5-0

- 3-ՐԴ 4-ՐԴ ԴԻՐՔԻ ՄՐՑՈՒՄ
- Լիբանան-Քուէյթ 1-0

- ԱԻԱՐՏԱԿԱՆ
- Արեւմտեան Մ. Ն.-Հ.Մ.Ը.Մ.-  
Հ.Ա.Ս.Կ. 1-0



# ՖՈՒԹՍԱԼԸ Կ՛ՈՒՆԵՆԱՅ ՀԱՄԱ-Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ՄԱՐՁԱԽՍԱՂԵՐՈՒ ՏՂՈՑ ՈՒ ԱՂՁԿԱՆՑ ԻՐ ԱՌԱՋԻՆ ԱԽՈՅԵԱՆՆԵՐԸ

- ԼԻԲԱՆԱՆ ՏՂՈՑ, ԻՄԿ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.  
ԱՂՁԿԱՆՑ ՏԻՏՂՈՍՍԱԿԻՐՆԵՐ

**Ց** ութսայր եղաւ համա-  
Հ.Մ.Ը.Մ.ական 10-րդ  
մ ա ր զ ա խ ա ղ ե ր ու  
գլխատր նորութիւնը,  
որ ապահովեց տղոց ու  
աղջկանց 13 խումբերու մասնակցու-  
թիւնն եւ մարզասէրներու լայն հե-  
տաքրքրութիւն: Լիբանան եւ Հ.Մ.Ը.Մ.-  
Հ.Ա.Ս.Կ. մրցումներուն ներկայացան  
երկուքական խումբերով եւ յաջողեցան  
մէկական ներկայացուցիչ հասցնել մին-  
չեւ աւարտական եւ բաժակի տիրացման  
հանգրուան: Այսպէս, Պուրճ Համուտը  
ներկայացնող Լիբանանի տղոց Բ.  
խումբը եւ Երեւանի ներկայացուցիչ  
Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի աղջկանց Բ. խում-  
բը հանդիսացան համա-Հ.Մ.Ը.Մ.ական  
մարզախաղերու պատմութեան ֆուլթ-  
սալի առաջին ախոյեանները:

Տղոց մրցումներուն մասնակցեցան 9  
խումբեր՝ բաժնուած երկու խմբակի: Ա.  
խմբակին մաս կազմեցին Լիբանան (Բ.,  
Պուրճ Համուտ), Հարաւային Ամերիկա,  
Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ. եւ Արեւմտեան Մ.  
Ն., մինչ Բ. խմբակը բաղկացաւ հետեւ-

եայներէն՝ Վալանս, Սուրիա, Մարսէյ,  
Լիբանան (Ա., Պէյրութ) եւ «Նայիրի»  
(Թեհրան):

Ա. խմբակին մէջ արձանագրուեցան  
հետեւեալ արդիւնքները.-

Լիբանան (Բ.)-Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ. 4-3

Արեւմտեան Մ. Ն.-Հ.Մ.Ը.Մ.-  
Հ.Ա.Ս.Կ. 3-3

Լիբանան (Բ.)-Հարաւային Ամերիկա 2-1

Հարաւային Ամերիկա-Հ.Մ.Ը.Մ.-  
Հ.Ա.Ս.Կ. 2-0

Լիբանան (Բ.)-Արեւմտեան Մ.Ն. 9-5

Արեւմտեան Մ.Ն.-Հարաւային  
Ամերիկա 2-2

Լիբանան (Բ.)-Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ. 4-3

Հետեւաբար, խմբակին ընդհանուր  
դասաւորումը պարզեց հետեւեալ պատ-  
կերը.-

1. Լիբանան (Բ.) 8 կէտ
2. Հարաւային Ամերիկա 3 կէտ
3. Արեւմտեան Մ. Ն. 2 կէտ
4. Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ. 1 կէտ

Բ. խմբակին մէջ, մրցակցութիւնը  
չափազանց սուր եղաւ Թեհրանի «Նայի-  
րի» միութեան եւ Վալանսի նորակազմ  
խումբին միջեւ: Արդիւնքները պարզե-  
ցին հետեւեալ պատկերը.-

Վալանս-Մարսէյ 2-0

«Նայիրի»-Սուրիա 5-1

Մարսէյ-Լիբանան (Ա.) 1-0

Վալանս-Սուրիա 7-1

Լիբանան-«Նայիրի» 2-1

Մարսէյ-Սուրիա 3-0

«Նայիրի»-Վալանս 5-1

Լիբանան (Ա.)-Սուրիա 3-0

Վալանս-Մարսէյ 2-0

«Նայիրի»-Սուրիա 5-1

Հետեւաբար, ընդհանուր դասաւոր-  
ումը կատարուեցաւ հետեւեալ ձեւով.-

1. «Նայիրի» 6 կէտ
  2. Վալանս 6 կէտ
  3. Մարսէյ 4 կէտ
  4. Լիբանան 4 կէտ
  5. Սուրիա 0 կէտ
- Կիսաւարտական մրցումները իրա-  
րու դէմ հանեցին Լիբանանի Բ. խումբը



եւ Թեհրանի «Նայիրի»-ն մէկ կողմէ եւ Հարաւային Ամերիկայի կազմն ու Լիբանանի Ա. խումբը միւս կողմէ: Արդիւնքները պարզեցին հետեւեալը.-

Լիբանան (Բ.)-«Նայիրի» 6-2

Հարաւային Ամերիկա-Լիբանան (Ա.) 3-1

3-րդ եւ 4-րդ դիրքի մրցումին ճակատեցան Թեհրանի «Նայիրի»-ն եւ Լիբանանի Ա. խումբը: «Նայիրի» յաղթեց 7-1 արդիւնքով:

Աւարտականին, Լիբանանի Բ. խումբը 4-2 արդիւնքով պարտութեան մատնեց Հարաւային Ամերիկայի կազմը եւ դարձաւ տիրոջ սակիր:

Փութսայի աղջկանց մրցումներուն մասնակցեցաւ երեք շրջանէ չորս խումբ.- Աւստրալիա, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ. (Ա., Արթիկ), Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ. (Բ., Երեւան) եւ Արեւմտեան Մ. Ն.: Հոս Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի Ա. խումբը առաջին հանգրուանին անխնայ եղաւ իր խմբակիցներուն նկատմամբ եւ երեք մրցումի ընթացքին նշանակեց 36











կոլ, յաջորդաբար՝ 12, 5 եւ 17 կոլ իւրաքանչիւր մրցումի ընթացքին: Ստորեւ՝ արդիւնքներու ընդհանուր պատկերը--

Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ. (Բ.)-Աւստրալիա 11-0

Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ. (Ա.)-Աւստրալիա 12-0

Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ. (Բ.)-Արեւմտեան Մ. Ն. 7-1

Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ. (Ա.)-Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ. (Բ.) 5-0

Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ. (Ա.)-Արեւմտեան Մ. Ն. 17-1

Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ. (Բ.)-Արեւմտեան Մ. Ն. 2-0

Ընդհանուր դասաւորումը կատարեցաւ հետեւեալ ձեւով--

1. Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ. (Ա.) 6 կէտ

2. Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ. (Բ.) 6 կէտ

3. Արեւմտեան Մ. Ն. 0 կէտ

4. Աւստրալիա 0 կէտ

Կիսաւարտականին, արդիւնքները պարզեցին հետեւեալը--

Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ. (Ա.)-Աւստրալիա 3-0


Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ. (Բ.)-Արեւմտեան Մ. Ն. 6-1

Հետեւաբար, 3-րդ եւ 4-րդ դիրքերու ճշդումի մրցումը իրարու դէմ հանեց Արեւմտեան Մ. Նահանգներու եւ Աւստրալիոյ խումբերը: Յաղթանակը եղաւ Արեւմտեան Մ. Նահանգներու խումբին (5-0):

Սպասուած աւարտականը իրարու դէմ հանեց Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի Բ. եւ Ա. խումբերը, եւ հակառակ նախատեսութիւններու, տիտղոսին տիրացաւ Բ. խումբը՝ 3-2 արդիւնքով պարտութեան մատնելով Ա. խումբը, որ առաջին հանգրուանին 5-0 արդիւնքով հանգիստ յաղթանակ մը արձանագրած էր Բ. խումբին դէմ:

Հարկ է նշել, որ ֆուլթաւալի մրցումներու աւարտին, տղոց լաւագոյն մարզիկ ընտրուեցաւ եւ «Նշան Թիւսիդեան» բաժակին տիրացաւ Լիբանանէն եղբ. Աւօ Տոնպուրեան: Աղջկանց մրցումներուն, լաւագոյն մարզիկուհի ընտրուեցաւ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.էն քոյր Պայծառ Ասատրեան, որ արժանացաւ «Արմէն Տէլրմէնճեան բաժակ»ին:





# ԱՐԵՒՄՏԵԱՆ Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԵՐԷՑ ՏՂԱՔԸ ՀԱՄԱ-Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ՊԱՍՔԵԹՊՈՒԻ ԱԽՈՅԵԱՆ ՎԵՑԵՐՈՐԴ ԱՆԳԱՄ ԸԼԼԱԼՈՎ

## ԵՐԷՑՆԵՐՈՒ ՕՐԻՆԱԿՈՎ ԿՐՏՍԵՐ ՏՂԱՔԸ ԵՒՍ ԱԽՈՅԵԱՆ

**Հ**ամա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզախաղերու մէջ, պասքեթպոլը միակ մարզաձեւն է, ուր անակնկալները նուազագոյնն են: Հոս տիտղոսին գլխաւոր յաւակնորդը ծանօթ է սկիզբէն եւ բաժակը դժուար թէ վրիպի իրմէ: Պատմութիւնն ու փորձառութիւնը այդ կը հաստատեն: Մարզախաղերու պատմութեան մէջ պասքեթպոլը նկատի առնուած է վեց անգամ (1981, 1990, 1997, 2005, 2009, 2013) եւ, բացառութեամբ երկրորդ խաղերուն, հինգ անգամ ալ առաջնութեան տիտղո-

սին եւ բաժակին տիրացած են Արեւմտեան Մ. Նահանգներու տղաքը: Միակ բացառութիւնը, որ արձանագրուած է 1990-ին, բաժակը գացած է Սուրիոյ տղոց խումբին:

Արեւմտեան Մ. Նահանգներու տղաքը միշտ ալ յատկանշուած են իրենց լայն փորձառութեամբ եւ Ֆիզիքական տոկոնութեամբ: Այս մարզախաղերուն եւս, անոնք պատրաստուած էին շատ լաւ եւ պատճառ մը չունէին անպասելի պարտութիւններով նոր պատմութիւն գրելու:

Այս մարզախաղերուն յատկանշական երեւոյթը պասքեթպոլի տղոց խումբերուն մեծաթիւ մասնակցութիւնն էր: Տիտղոսակիր խումբը գրեթէ յստակ ըլլալով, մրցակցութիւնը երկրորդ եւ երրորդ դիրքերուն համար էր առաւելաբար: Մրցակազմները 12 խումբեր էին, որոնք բաժնուած էին երկու խմբակի: Արեւմտեան եւ Արեւելեան Մ. Նահանգներ մարզախաղերուն ներկայացած էին պասքեթպոլի երկու քական խումբով, մինչ Աւստրալիա՝ երեք խումբով: Մոսկուայի խումբը



առաջին անգամն էր որ համա-Հ.Մ.-Ը.Մ.ական մարզախաղի մը կը մասնակցէր:

Խմբակներու բաժանումը կատարած էր հետեւեալ ձևով:-

Ա. խմբակ.- Արեւմտեան Մ.Ն. (Ա.), Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանս, Աւստրալիա (Գ.), Մոսկուա, Աւստրալիա (Ա.) եւ Արեւելեան Մ.Ն. (Բ.):

Բ. խմբակ.- Արեւելեան Մ. Ն. (Ա.), Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ., Սուրիա, Աւստրալիա (Բ.), Գահիրէ եւ Արեւմտեան Մ. Ն. (Բ.):

Ա. խմբակին մէջ, առաջին դիրքը

Արեւմտեան Մ. Նահանգներու Ա. խումբին վերապահուած ըլլալով, երկրորդ դիրքին համար մրցակցութիւնը բաւական սուր եղաւ... Աւստրալիոյ Ա. եւ Գ. խումբերուն միջեւ, որոնք արձանագրեցին երկուքական յաղթանակ: Իրարու դէմ մրցումի արդիւնքով, Ա. խումբը հանդիսացաւ երկրորդ եւ իրաւունք ստացաւ անցնելու Բ. հանգրուան:

Ստորեւ՝ Ա. խմբակին արդիւնքները:-

Աւստրալիա (Ա.)-Աւստրալիա (Գ.)

38-21

## ՊԱՍՔԵԹՊՈՒԼԻ ՏՂՈՑ ԶԱՍԱ-Յ.Ս.Ը.Ս.ԱԿԱՆ ՆԱԽՈՐԴ ԱՆՈՅԵԱՆՆԵՐԸ

1981- Արեւմտեան Մ. Ն.

1990- Սուրիա

1997- Արեւմտեան Մ. Ն.

2005- Արեւմտեան Մ. Ն.

2009- Արեւմտեան Մ. Ն.

2013- Արեւմտեան Մ. Ն.







6. Մոսկուա 0 կէտ  
 Բ. խմբակին ճակատամենը եղան աւելի բուռն: Արեւմտեան Մ. Նահանգներու Բ. խումբը եւ Արեւելեան Մ. Նահանգներու Ա. խումբը ամէն ճիգ ի գործ դրին խմբակին պարագլուխի դիրքին տիրացման

բակին առաջինը: Նոյնքան կէտով (6 կէտ) Արեւելեան Մ. Նահանգներու Ա. խումբը հանդիսացաւ երկրորդը: Այս խմբակին մէջ Գահիրէ, իսկ Ա. խմբակին մէջ Մոսկուա եղան միակ խումբերը, որոնք մարզախաղերուն հրաժեշտ տրւին առանց որեւէ յաղթանակի:

Ստորեւ՝ Բ. խմբակի մրցումներուն արդիւնքները:-

Սուրիա-Գահիրէ 37-35

Արեւելեան Մ. Ն. (Ա.)-Աւստրալիա (Բ.) 52-22

Արեւմտեան Մ. Ն. (Բ.)-Հ.Մ.Ը.Մ.- Հ.Ա.Ս.Կ. 53-38

Արեւելեան Մ. Ն. (Ա.)-Սուրիա 70-60

Արեւմտեան Մ. Ն. (Բ.)-Աւստրալիա (Բ.) 80-37

Համար: Արեւմտեանի տղաքը իրենց ըսելիքը ունեցան եւ իրենց նշանակած կողովներու թիւով հանդիսացան խմբ-

- Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանս-Արեւելեան Մ. Ն. (Բ.) 63-57
- Արեւմտեան Մ. Ն. (Ա.)-Մոսկուա 20-0
- Արեւելեան Մ. Ն. (Բ.)-Մոսկուա 57-53
- Արեւմտեան Մ. Ն. (Ա.)- Աւստրալիա (Գ.) 73-34
- Աւստրալիա (Ա.)-Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանս 64-50
- Աւստրալիա (Գ.)-Մոսկուա 49-46
- Արեւմտեան Մ. Ն. (Ա.)-Հ.Մ.Ը.Մ.- Ֆրանս 74-24
- Աւստրալիա (Ա.)-Արեւելեան Մ. Ն. (Բ.) 62-40

**ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԱՍԱԻՈՐՈՒՄ**

1. Արեւմտեան Մ. Ն. (Ա.) 6 կէտ
2. Աւստրալիա (Ա.) 4 կէտ
3. Աւստրալիա (Գ.) 4 կէտ
4. Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանս 2 կէտ
5. Արեւելեան Մ. Ն. (Բ.) 2 կէտ







Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.-Գահիրէ 48-21  
 Արեւելեան Մ. Ն. (Ա.)-Հ.Մ.Ը.Մ.-  
 Հ.Ա.Ս.Կ. 58-39  
 Արեւմտեան Մ. Ն. (Բ.)-Գահիրէ 82-18  
 Աւստրալիա (Բ.)-Սուրիա 51-49

**ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԱՍԱԻՈՐՈՒՄ**

1. Արեւմտեան Մ. Ն. (Բ.) 6 կէտ
2. Արեւելեան Մ. Ն. (Ա.) 6 կէտ
3. Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ. 2 կէտ
4. Աւստրալիա 2 կէտ
5. Սուրիա 2 կէտ
6. Գահիրէ 0 կէտ

Հետեւաբար, կիսաւարտականը իրարու դէմ հանեց երկու խմբակներու առաջին երկու զիրքերը գրաւողները: Արեւմտեան Մ. Նահանգներու Բ. խում-

բը 86-46 արդիւնքով յաղթեց Աւստրալիոյ Ա. խումբին, իսկ Արեւմտեան Մ. Նահանգներու Ա. խումբը 85-75 արդիւնքով պարտութեան մատնեց Արեւելեան Մ. Նահանգներու Ա. խումբը:

Երկու պարտեալները խաղացին 3-րդ եւ 4-րդ զիրքի ճշդումի մրցումը, ուր Արեւելեան Մ. Նահանգներու Ա. խումբը յաղթեց 76-55 արդիւնքով եւ տիրացաւ մարզախաղերու պրոնզ մե-

տալին, մինչ Աւստրալիոյ Ա. խումբը հանդիսացաւ չորրորդ:

Սպասուած աւարտականին իրարու դէմ ճակատեցան Արեւմտեան Մ. Նահանգներու Ա. եւ Բ. խումբերը: Բ. խումբը ունեցաւ աւելի տպաւորիչ խաղարկութիւն եւ 90-86 արդիւնքով Ա. խումբը պարտութեան մատնելով մարզախաղերու բաժակը վեցերորդ անգամ ըլլալով տարաւ Լոս Անճելըս:

Մարզախաղերու աւարտին, պասքեթպոլի երէց տղոց լաւագոյն մարզիկը ընտրուեցաւ եւ «Վարդգէս Ալահայտյեան բաժակ»ին արժանացաւ Արեւմտեան Մ. Նահանգներու շրջանէն Արամ Թարգիպաշեան:

**ԱՐԵՒՄՏԵԱՆ Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐ ՆԱԵՒ ԿՐՏՍԵՐՆԵՐՈՒ ԱՆՈՅԵԱՆ**

Ինչպէս Փոլիպոլի, նաեւ պասքեթպոլի պարագային, կրասերներու մաս-





նակցութիւնը համա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզախաղերուն նորութիւն էր եւ ուշադրաւ: Մարզասէրներ այժմէն կը փորձէին ճանչնալ համա-Հ.Մ.Ը.Մ.ական յաջորդ մարզախաղերու հաւանական «աստղ»երը, որոնք այսօր հանդէս կու գային իբրեւ կրտսերներ, իսկ վաղը պիտի ըլլային երէցներու խումբերուն գլխաւոր ղէմքերը:

Պասքէթպոլի կրտսերներու խաղերուն մասնակցեցան չորս շրջաններ ներկայացնող վեց խումբեր: Արեւմտեան Մ. Նահանգներ եւ Լիբանան խաղերուն ներկայացած էին երկուքական խումբով, իսկ Արեւելեան Մ. Նահանգներ եւ Գանատա՝ մէկական ներկայացուցիչով:

Երէցներուն օրինակով, Արեւմտեան Մ. Նահանգներու կրտսերները սկիզբէն կը թուէին ըլլալ տիտղոսին գլխաւոր թեկնածուները: Արդիւնքները հաստատեցին նախատեսութիւններուն ճիշդ ըլլալը, որովհետեւ Ա. հանգրուանի մրցումներէն ետք, Արեւմտեան Մ. Նահանգներու Բ. եւ Ա. խումբերը գրաւեցին ընդհանուր դասաւորման առաջին երկու դիրքերը: Գանատա իր մրցումները աւարտեց առանց յաղթանակի: Լիբանանի զոյգ խումբերը արձանագրեցին մէկական յաղթանակ, իսկ Արեւելեան Մ. Նահանգներու խումբը՝ երկու յաղթանակ:

Ստորեւ՝ Ա. հանգրուանի մրցումներուն արդիւնքները եւ խումբերու ընդհանուր դասաւորումը:-

Արեւմտեան Մ. Ն. (Ա.)-Գանատա

76-37

Արեւմտեան Մ. Ն. (Բ.)-Արեւելեան Մ. Ն. 53-47

Արեւելեան Մ. Ն.-Լիբանան (Ա.) 70-54  
Արեւմտեան Մ. Ն. (Բ.)-Գանատա 61-7

Արեւմտեան Մ. Ն. (Ա.)-Լիբանան (Բ.) 78-66

Արեւմտեան Մ. Ն. (Բ.)-Լիբանան (Ա.) 56-20

Լիբանան (Բ.)-Գանատա 52-38

Արեւելեան Մ. Ն.-Արեւմտեան Մ. Ն. (Ա.) 63-62

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԱՍԱՒՈՐՈՒՄ

1. Արեւմտեան Մ. Ն. (Բ.) 6 կէտ

2. Արեւմտեան Մ. Ն. (Ա.) 4 կէտ

3. Արեւելեան Մ. Ն. 4 կէտ

4. Լիբանան (Բ.) 2 կէտ

5. Լիբանան (Ա.) 2 կէտ

6. Գանատա 0 կէտ

Կիսաւարտականին իրարու դէմ մրցեցան մէկ կողմէ Ա. եւ Դ., իսկ միւս կողմէ՝ Բ. եւ Գ. դիրքերը գրաւողները: Արդիւնքները պարզեցին հետեւեալը:-

Արեւմտեան Մ. Ն. (Բ.)-Լիբանան (Ա.) 75-27

Արեւմտեան Մ. Ն. (Ա.)-Արեւելեան Մ. Ն. 94-86

Յաջորդեց 3-րդ եւ 4-րդ դիրքերու ճշդումի մրցումը, ուր Լիբանան 48-44 արդիւնքով պարտութեան մատնեց Արեւելեան Մ. Նահանգներու խումբը եւ տիրացաւ մարզախաղերու պրոնզ մետալին:

Աւարտականը յիշեցուց երէց տղոց աւարտականը, որովհետեւ ամբողջութեամբ ամերիկեան եղաւ: Տիտղոսին գլխաւոր թեկնածուները՝ Արեւմտեան Մ. Նահանգներու Ա. եւ Բ. խումբերը բաւական «տաք» ճակատումէ մը ետք, առաջնութիւնը եւ երկրորդութիւնը բաժնեկցեցան իրենց միջեւ: Բ. խումբը Ա. խումբին յաղթեց 64-44 արդիւնքով, հետեւաբար արժանացաւ մարզախաղերու ոսկի մետալին, մինչ Ա. խումբը տիրացաւ արծաթ մետալին:

Մարզախաղերու աւարտին, պասքէթպոլի կրտսեր տղոց լաւագոյն մարզիկը ընտրուեցաւ եւ «Դանիէլ Դանիէլեան բաժակ»ին տիրացաւ Արեւմտեան Մ. Նահանգներու շրջանէն Ալէքս Իսկնտէրեան:







*ՄԱՐԶԱԽԱՂԵՐՈՒՆ ՄԵԾԱԳՈՅՆ ԱՆԱԿՆԿԱԼԸ՝*

**Հ.Մ.Մ.-Հ.Ա.Ս.Կ.  
ԿԸ ՏԻՐԱՆԱՅ ՊԱՍՔԵԹՊՈԼԻ  
ԱՂՋԿԱՆՑ ԱՌԱՋՆՈՒԹԵԱՆ  
ԲԱԺԱԿԻՆ**

*Հ.Մ.Ա.Կ.Ի ԱՂՋԻԿՆԵՐԸ ԵՐԿՈՒ ԿԷՏՈՎ  
ԲԱԺԱԿԸ ԿԸ ԶԻՋԻՆ ԱՐԵՒՄՏԵԱՆ  
Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԿՐՏՍԵՐ ԱՂՋԿԱՆՑ*



**Հ**ամա-Հ.Մ.Ը.Մ. ական մարզախաղերու աղջկանց պասքեթպոլը 2017-ին ունեցաւ իր նոր ախտոյեանը, երբ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ. յնականալ ու հօր խումբը պարտութեան մատնեց 9-րդ մարզախաղերու ախտոյեան եւ տիտղոսին գլխաւոր թեկնածու Արեւմտեան Մ. Նահանգներու Բ. խումբը:

Աղջկանց պասքեթպոլը համա-Հ.Մ.Ը.Մ. ական մարզախաղերու պատմութեան մէջ նկատի առնուած է հինգ անգամ: Լիբանան եւ Հ.Մ.Ա.Կ. առաջնութեան տիրացած են առաջին (1981) եւ չորրորդ (2009) խաղերուն, մինչ Արեւմտեան Մ. Նահանգներ բաժակին տիրացած է երեք անգամ (1997, 2005 եւ 2013): Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ. առաջին անգամն է, որ պիտի տիրանար տիտղոսին եւ բաժակին:



Այս մարզախաղերուն պասքեթպոլի աղջկանց մրցումներուն մասնակցեցան 8 շրջանէ 10 խումբեր: Արեւմտեան Մ. Նահանգներ եւ Աւստրալիա ներկայացած էին երկուքական խումբով, մինչ Լոնտոն, Սուրիա, Լիբանան, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ., Աւստրալիա եւ Մարսէյ կը մասնակցէին մէկական ներկայացուցչով: Նորութիւնը Մարսէյի աղջկանց խումբն էր, որ առաջին անգամ ըլլալով կը մասնակցէր համա-Հ.Մ.Ը.Մ. ական մարզախաղերու:

Մարզախաղերու մասնակից խումբերը բաժնուած էին երկու խմբակի: Առաջին խմբակին մաս կը կազմէին Արեւմտեան Մ. Ն. (Ա.), Մարսէյ, Աւստրալիա (Բ.), Լոնտոն եւ Սուրիա: Երկրորդ խմբակը բաղկացած էր հետեւեալներէն. Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ., Լիբանան, Աւստրա-

լիա (Ա.) եւ Արեւմտեան Մ. Ն. (Բ.): Ա. խմբակին մէջ, Աւստրալիոյ Բ. եւ Արեւմտեան Մ. Նահանգներու Ա. խումբերը յաղթեցին երկուքական մրցում. առաջինը գրաւեց խմբակին Ա. դիրքը, իսկ երկրորդը՝ Բ. դիրքը: Այս խմբակին մէջ, Սուրիա չյաջողեցաւ որեւէ կէտ ապահովել:

### ՊԱՔԵԹՊՈՒԼԻ ԱՂՋԿԱՆՑ ԶԱՄԱ-Յ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ՆԱԽՈՐԴ ԱՆՈՅԵԱՆՆԵՐԸ

- 1981- Լիբանան
- 1997- Արեւմտեան Մ. Ն.
- 2005- Արեւմտեան Մ. Ն.
- 2009- Թեիրանի Հ.Մ.Ա.Կ.
- 2013- Արեւմտեան Մ. Ն.







Ստորեւ՝ խմբակի մրցումներուն արդիւնքները եւ ընդհանուր դասաւորումը.-

- Արեւմտեան Մ. Ն. (Ա.)-Լոնտոն 57-13
- Աւստրալիա-Սուրիա 45-33
- Աւստրալիա (Բ.)-Լոնտոն 39-10
- Սուրիա-Մարսէյ 38-18
- Մարսէյ-Լոնտոն 33-16
- Արեւմտեան Մ. Ն. (Ա.)-Աւստրալիա (Բ.) 49-31

**ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԱՍԱԻՈՐՈՒՄ**

- 1. Աւստրալիա (Բ.) 4 կէտ
- 2. Արեւմտեան Մ. Ն. (Ա.) 4 կէտ
- 3. Մարսէյ 2 կէտ
- 4. Լոնտոն 2 կէտ
- 5. Սուրիա 0 կէտ

Բ. խմբակին մէջ մրցակցութիւնը եղաւ աւելի սուր: Երեք խումբեր յաղթանակով աւարտեցին իրենց կատարած մրցումները եւ իրարու դէմ կատարած մրցումներուն արդիւնքով միայն կարելի եղաւ ճշդել առաջին երեք դիրքերը գրաւողներուն անունները: Հոս Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ. հանդիսացաւ առաջին, Արեւմտեան Մ. Նահանգներու Բ. խումբը՝ երկրորդ, իսկ Լիբանան՝ երրորդ: Աւստրալիա չյաջողեցաւ որեւէ կէտ ապահովել:

Ստորեւ մրցումներուն արդիւնքները եւ խմբակին ընդհանուր դասաւորումը.-

- Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.-Լիբանան 45-42
- Լիբանան-Աւստրալիա (Ա.) 47-9
- Արեւմտեան Մ.Ն. (Բ.)-Լիբանան 20-0

**ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԱՍԱԻՈՐՈՒՄ**

- 1. Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ. 2 կէտ
- 2. Արեւմտեան Մ. Ն. (Բ.) 2 կէտ
- 3. Լիբանան 2 կէտ
- 4. Աւստրալիա (Ա.) 0 կէտ

Կիսաւարտականի արդիւնքները պարզեցին հետեւեալ պատկերը.-

Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.-Արեւմտեան Մ. Ն. (Ա.) 64-58

Արեւմտեան Մ. Ն. (Բ.)- Աւստրալիա (Բ.) 74-31

Հետեւաբար, 3-րդ եւ 4-րդ դիրքի ճշգրտմի մրցումը իրարու դէմ հանեց Արեւմտեան Մ. Նահանգներու Ա. եւ Աւստրալիոյ Բ. խումբերը: Առաջինը 67-16 արդիւնքով ծանր պարտութեան մատնեց Աւստրալիոյ Բ. խումբը եւ տի-



րացաւ մարզախաղերու պրոնզ մետալին:

Աւարտականին, մարզասէրներու նախատեսութիւններուն հակառակ, Արեւմտեան Մ. Նահանգներու Բ. խումբը 71-74 արդիւնքով անսպասելի պարտութիւն մը կրեց Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.-էն եւ չյաջողեցաւ աղջկանց առաջնութեան տիտղոսը պահել իր մօտ: Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ. արժանաբար տիրացաւ առաջնութեան եւ իր անունը անջնջելի տառերով արձանագրեց մարզախաղերու պատմութեան մէջ:

Մարզախաղերու աւարտին, պասքեթպոլի երէց աղջկանց լաւագոյն մարզիկուհին ընտրուեցաւ եւ «Վահրամ Դանիէլեան բաժակ»ին արժանացաւ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.-էն Սոֆիա Տէմիրճեան:

**ԱՐԵՒՄՏԵԱՆ Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐ  
ԿԸ ՅԱՋՈՂԻ ՏԻՐԱՆԱԿ  
ԿՐՏՍԵՐ ԱՂՋԿԱՆՑ  
ԱՌԱՋՆՈՒԹԵԱՆ ՏԻՏԼՈՍԻՆ**

Պասքեթպոլի երէց աղջկանց մրցում-

ներուն իրենց ունեցած մասնակի ընկերկումը Արեւմտեան Մ. Նահանգներու աղջիկները հատուցեցին կրտսեր աղջկանց մրցումներուն: Անոնք յաջողեցան ձեռքէ չտալ տիտղոս մը, որուն այնքան մօտ կը թուէին անոնք: Երկու կէտի տարբերութեամբ անոնք յաղթեցին Թեհրանի Հ.Մ.Ա.Կ.-ի աղջիկներուն եւ պասքեթպոլի կրտսեր աղջկանց առաջնութեան անդրանիկ տիտղոսը արձանագրեցին իրենց անունով:

Պասքեթպոլի կրտսեր աղջկանց մրցումներուն մասնակցեցան հինգ շրջանէ վեց խումբեր: Արեւմտեան Մ. Նահանգներ մասնակցեցան երկու խումբով, իսկ մնացեալ չորս շրջանները՝ Լիբանան, Լոնտոն, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ. եւ Հ.Մ.Ա.Կ. մէկական խումբով:

Առաջին հանգրուանին, մրցակցութիւնը բաւական սուր եղաւ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.-ի եւ Արեւմտեան Մ. Նահանգներու Ա. խումբին միջեւ: Հ.Մ.Ա.Կ. երկու յաղթանակով զբաւեց ընդհանուր դասաւորման երրորդ դիրքը, մինչ Լիբանան եւ Լոնտոն առանց որեւէ կէտ ապահովելու զբաւեցին խմբակին հինգերորդ եւ վեցերորդ դիրքերը:

Մրցումներուն արդիւնքները եւ ընդհանուր դասաւորումը պարզեցին հետեւեալ պատկերը-

Հ.Մ.Ը.Մ.-  
Հ.Ա.Ս.Կ.-Արեւմտեան Մ. Ն. (Բ.) 43-35

Հ.Մ.Ա.Կ.-Լիբանան 42-12  
Արեւմտեան Մ. Ն.-Լոնտոն 36-11  
Արեւմտեան Մ. Ն.(Ա.)-Լիբանան 32-12

Հ.Մ.Ա.Կ.-Արեւմտեան Մ.Ն. (Բ.) 44-20

Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.-Լոնտոն 68-30  
Արեւմտեան Մ. Ն. (Ա.)-Հ.Մ.Ա.Կ. 36-34

Արեւմտեան Մ. Ն. (Բ.)-Լոնտոն 47-15  
Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.-Լիբանան 33-18

**ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԱՍԱԽՈՐՈՒՄ**

1. Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ. 6 կէտ
2. Արեւմտեան Մ. Ն. (Ա.) 6 կէտ
3. Հ.Մ.Ա.Կ. 4 կէտ
4. Արեւմտեան Մ. Ն. (Բ.) 2 կէտ
5. Լիբանան 0 կէտ
6. Լոնտոն 0 կէտ

Կիսաւարտականին, Հ.Մ.Ա.Կ.-ի աղջիկները մեծ անակնկալ ստեղծեցին, երբ 25 կէտի տարբերութեամբ հանգիստ յաղթանակ մը արձանագրեցին Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.-ի գօրաւոր խումբին դէմ (60-35): Արեւմտեան Մ. Նահանգներու Ա. խումբը, իր կարգին, 32 կէտի տարբերութեամբ յաղթեց իր շրջանի Բ. խումբին (46-14):

Արդիւնքը եղաւ այն, որ երկու պարտեալները իրարու դէմ ճակատեցան 3-րդ եւ 4-րդ դիրքի ճշդումի մրցումին համար: Արեւմտեան Մ. Նահանգներու Բ. խումբը երեք կէտով յաղթեց Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.-ին (44-41) եւ հանդիսացաւ երրորդ:

Աւարտականը եղաւ չափազանց հետաքրքրական: Բաւական սուր մրցակցութենէ եւ ջիղերու սպառումէ ետք, Արեւմտեան Մ. Նահանգներու Ա. խումբը դժուարութեամբ, միայն երկու կէտի տարբերութեամբ, յաջողեցաւ պարտութեան մատնել Հ.Մ.Ա.Կ.-ի խումբը (59-57) եւ տիրանալ առաջնութեան տիտղոսին եւ բաժակին:

Մարզախաղերու աւարտին, պասքեթպոլի կրտսեր աղջկանց լաւագոյն մարզիկուհին ընտրուեցաւ եւ «Սիւամանթո Կարապետեան բաժակ»ին արժանացաւ Արեւմտեան Մ. Նահանգներու շրջանէն Ալին Օվաննէսեան:









## Հ.Մ.Ը.Մ Հ.Ա.Ս.Կ.Ի ԱՂՋԻԿՆԵՐԸ ՎՈՒԻՊՈՒԻ ԱՌԱՋՆՈՒԹԵԱՆ ԲԱԺԱԿԸ ԿԸ ՊԱՀԵՆ ԻՐԵՆՑ ՄՕՏ

**Հ**ամա-Հ.Մ.Ը.Մ-ական 10-րդ մարզախաղերու վոլիպոլի առաջնութեան բաժակը մնաց իր «տէր»-երուն՝ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.Ի աղջիկներուն մօտ, որոնք 2013-ի իրենց յաջողութիւնը կրկնելով՝ անգամ մը եւս տիրացան տիտղոսին եւ բաժակին։ Վոլիպոլի մրցումներուն մասնակցեցաւ երեք շրջան- Հայաստան, Արեւելեան Մ. Նահանգներ եւ Արեւմտեան Մ.

Նահանգներ (երկու խումբով)։ Արեւելեան Մ. Նահանգներու խումբը իր երկու մրցումը աւարտեց պարտութեամբ։ Արեւմտեան Մ. Նահանգներու Ա. խումբը պարտութեան մատնեց նոյն շրջանի Բ. խումբը։ Միակ անսխալ կազմը եղաւ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ., որ համոզիչ ու տրպաւորիչ խաղարկութեամբ պարտութեան մատնեց թէ՛ Արեւելեան Մ. Նահանգներու (3-0) եւ թէ՛ Արեւմտեան Մ. Նահանգներու Ա. խումբը (2-0)։

Աւարտականը երկրորդ անգամ ըլլալով իրարու դէմ հանեց տիտղոսին գլխաւոր թեկնածուները՝ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ը եւ Արեւմտեան Մ. Նահանգներու Ա. խումբը։ Արդիւնքը եղաւ ինպատ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ին (3-0)։ Ախոյեան խումբի անդամներէն քոյր Անի Ստեփանեան արժանացաւ վոլիպոլի լաւագոյն մարզիկի «Յովհաննէս Պայթարեան բաժակ»ին։ Ստորեւ՝ մրցումներուն ընդհանուր արդիւնքները։-

- Ա. ՀԱՆԳՐՈՒԱՆԻ ՄՐՑՈՒՄՆԵՐ  
Արեւմտեան Մ.Ն. (Բ.)-Արեւելեան Մ. Ն. 2-0
- Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.-Արեւմտեան Մ. Ն. (Ա.) 2-0



**ՎՈՒԻՊՈՒԻ ԱՂՋԿԱՆՑ  
ՀԱՄԱ-Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ  
ՆԱԽՈՐԴ ԱԽՈՅԵԱՆՆԵՐԸ  
1997- Արեւմտեան Մ. Ն.  
2005- Հարաւային Ամերիկա  
2013- Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.**

Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.-Արեւելեան Մ. Ն. 3-0

Արեւմտեան Մ. Ն. (Ա.)-Արեւմտեան Մ. Ն. (Բ.) 3-1

**ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԱՍԱԻՈՐՈՒՄ**

- 1. Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ. 4 կէտ
- 2. Արեւմտեան Մ. Ն. (Ա.) 2 կէտ
- 3. Արեւմտեան Մ. Ն. (Բ.) 2 կէտ
- 4. Արեւելեան Մ. Ն. 0 կէտ

**3-րդ 4-րդ ԴԻՐՔԻ**

**ՃՇԴՈՒՄԻ ՄՐՑՈՒՄ**

Արեւմտեան Մ. Ն. (Բ.)-Արեւելեան Մ. Ն. 3-2

**ԱԻԱՐՏԱԿԱՆ**

Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.-Արեւմտեան Մ. Ն. (Ա.) 3-0

Յայտնենք, որ վոլբոլը համա-Հ.Մ.-Ը.Մ.ական մարզախաղերու մէջ առաջին անգամ որդեգրուած է 1997-ին, Արեւելեան Մ. Նահանգներու 5-րդ մար-



զախաղերուն, ուր տղոց եւ աղջկանց տիրոջները խլած է Արեւմտեան Մ. Նահանգներու շրջանը: 2005-ին, վոլբոլը երկրորդ անգամ ըլլալով տեղ գրաւած է համա-Հ.Մ.-Ը.Մ.ական մարզախաղերու շարքին: Տղոց եւ աղջկանց չորս խումբեր ճակատած են իրարու

դէմ եւ հիւրընկալ Յունաստանի շրջանը տիրացած է տղոց արտօյեանութեան տիրոջսին, իսկ Հարաւային Ամերիկայի շրջանը՝ աղջկանց բաժակին: Վոլբոլը տղոց խումբերը բացակայած են համա-Հ.Մ.-Ը.Մ.ական վերջին երկու մարզախաղերուն:



# ԼԻԲԱՆԱՆ ԿԸ ՎԵՐԱՀԱՍՏԱՏԷ ԱԹԼԵԹԻԶՄԻ ՄՐՑՈՒՄՆԵՐՈՒՆ ԻՐ ԳԵՐԱԿՇԻՌ ՏԻՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ



**- ԼՈՌԻ ԹԱՇՃԵԱՆ ԿԸ ՏԻՐԱՆԱՅ  
10 ՄԵՏԱԼԻ ԵՒ ԿԸ ՀԱՍՏԱՏԷ  
ՀԱՄԱ-Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ՆՈՐ ՄՐՑԱՆԻՇ,  
ՄԻՆՉ ՍԵՐԺ ՉՈԼԱՔԵԱՆ Կ'ԱՐԺԱՆԱՆԱՅ  
4 ՄԵՏԱԼԻ ԵՒ ԿԸ ԽՈՐՏԱԿԷ  
5000 ՄԵԹՐ ՎԱԶՔԻ  
ՀԱՄԱ-Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ՄՐՑԱՆԻՇԸ  
- ՄՐՑՈՒՄՆԵՐՈՒՆ ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆԸ՝  
ՀԱՄԱ-Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ 2 ՆՈՐ ՄՐՑԱՆԻՇ  
ՀԱՍՏԱՏԱԾ ՄԻՔԱՅԷԼԼԱ ԱՅՆԷՃԵԱՆ  
ԿԻՊՐՈՍԷՆ**

մետալներ (16 ոսկի, 16 արծաթ, 13 պրոնզ), մինչ մարզախաղերու մասնակից մրցակցերը 7 շրջանները միասնաբար տիրացան 31 մետալի:

Նախորդ մարզախաղերուն նման, այս մարզախաղերուն եւս, գլխաւոր աստղը հանդիսացաւ Լիբանանէն քոյր Լոռի Թաշճեան, որ տիրացաւ 5 ոսկի եւ 5 արծաթ մետալի: Ան 4x400 մետր դրօշաբերութեամբ զբաղուած է:

«Մարզախաղերու թագուհին»՝ աթլետիկայի յատուկ տեղ ունի համա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզախաղերուն մէջ: Մարզասէրներ անհամբեր կը սպասեն աթլետիկայի նոր աստղերու, որոնք իրենք զիրենք գերազանցելով, համա-Հ.Մ.Ը.Մ.ական նոր մրցանիշներ պիտի հաստատեն եւ միութեան մարզական ոսկեմատեանը մոտաք պիտի գործեն:

Անկասկած, Լիբանանի շրջանը հարուստ պատմութիւն ունի այս մարզին մէջ: Պէտք ունի եկող մարզիկ-մարզիկուհիներ առհասարակ արձանագրած են փայլուն արդիւնքներ եւ իրենց շրջանին ապահոված են բազմատասնեակ մետալներ եւ պատուաբեր մրցանիշներ: Այս անգամ ալ պատմութիւնը կրկնեց ինքզինք, որովհետեւ Լիբանանի շրջանը «հնձեց» 45

չարչաւի առաջնութիւն մը ապահովեց Լիբանանի եւ 2'27"5 արդիւնքով հաստատեց 3000 մետր վազքի համա-Հ.Մ.Ը.Մ.ական նոր մրցանիշ: Իր բացառիկ արդիւնքներուն համար, Լոռի մարզախաղերու աւարտին արժանացաւ աթլետիկայի լաւագոյն մարզիկուհիի «Վահան Չերազ բաժակ»ին:

Լոռիի կողքին, աղջկանց մրցումներուն փայլեցաւ եւ մարզախաղերու յայտնութիւնը եղաւ Կիպրոսէն Միքայէլլա Այնճեան, որ համա-Հ.Մ.Ը.Մ.ական 2 նոր մրցանիշ հաստատեց 800 մետր (2'37"4) եւ 1500 մետր վազքի (5'33") մրցումներուն: Մարզասէրներու ուշադրութիւնը գրաւեց նաեւ Արեւմտեան Մ. Նահանգներու շրջանէն Սինթիա Քէշիշեան, որ 2 առաջնութեան տիրացաւ 200 եւ 400 մետր վազքի մրցումներուն:

Տղոց պարագային, Սերժ Չոլաքեան եղաւ լաւագոյն մար-



գրկը: Ան իսկեց 2 ոսկի եւ 2 արծաթ մետալներ: Լիբանանին ոսկի մետալ մը ապահովեց 4x400 մեթր դրօշարշաւի մրցումին եւ, ամէնէն ուշագրաւը, ան խորտակեց Լիբանանէն Սերժ Կէօքճեանի 5000 մեթր վազքի մրցանիշը: Չոլաքեան արձանագրեց 22'27"5 արդիւնք՝ շուրջ 5 երկվայրկեանով բարելաւելով 4 տարի առաջ հաստատուած նախկին մրցանիշը (22'33"2): Իբրեւ լաւագոյն աթլէթ, մարզախաղերու աւարտին ան արժանացաւ «Բիւզանդ թորիկեան բաժակ»ին:

Իբրեւ նորութիւն, այս մարզախաղերուն առաջին անգամ ըլլալով նկատի առնուեցան տղոց եւ աղջկանց 4x400 մեթր դրօշարշաւի, ինչպէս նաեւ՝ աղջկանց 5.000 եւ 10.000 մեթր վազքի մրցումներ: Հետեւաբար, վերոյիշեալ մրցումներու արդիւնքները նկատուեցան համա-Հ.Մ.Ը.Մ.ական մրցանիշներ՝ մինչեւ աւելի լաւ արդիւնքներու արձանագրուիլը:

Յայտնենք, որ տղոց մրցումներուն մասնակցեցան 11 շրջաններ.- Լիբանան, Արեւմտեան Մ. Ն., Հարաւային Ամերիկա, Սուրիա, Լոնտոն, Յունաստան, Պուլկարիա, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ., Ֆրանս, Հ.Մ.Ա.Կ. (Թեհրան) եւ Կիպրոս:

Աղջկանց մրցումներուն մասնակցեցան 7 շրջաններ.- Լիբանան, Արեւմտեան Մ. Ն., Հ.Մ.Ա.Կ. (Թեհրան), Կիպրոս, Հարաւային Ամերիկա, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ. եւ Ֆրանս:

Ստորեւ՝ մրցումներուն ամբողջական արդիւնքները.-





**ՏՂԱՔ**

**100 ՄԵԹՐ ՎԱՉՔ**

1. Մարք Վարդանեան (Լիբանան) 12" 1
2. Ալէքս Կէտիկեան (Լիբանան) 12" 2
3. Լիոնպէ Գազանճեան (Լոնտոն) 12" 2

**200 ՄԵԹՐ ՎԱՉՔ**

1. Սերժիօ Ահարոնեան (Լիբանան) 24" 3
2. Մարք Վարդանեան (Լիբանան) 25" 9
3. Սարգիս Գրիգոր (Արեւմտեան Մ.Ն.) 26"

**400 ՄԵԹՐ ՎԱՉՔ**

1. Էլիօ Մահրուք (Լիբանան) 1'01" 8
2. Գրիգոր Գազէզեան (Սուրիա) 1'02" 1
3. Մարք Վարդանեան (Լիբանան) 1'05" 5

**800 ՄԵԹՐ ՎԱՉՔ**

1. Սերժիօ Ահարոնեան (Լիբանան) 2'27" 9
2. Արմէն Տէմիրճեան (Արեւմտեան Մ. Ն.) 2'34" 2
3. Գէորգ Պետրեան (Լիբանան) 3'08" 5

**1500 ՄԵԹՐ ՎԱՉՔ**

1. Գէորգ Պետրեան (Լիբանան) 5'36" 5
2. Սերժ Չոլաքեան (Լիբանան) 5'41" 3
3. Նարեկ Փանոսեան (Լիբանան) 5'47" 2

**3000 ՄԵԹՐ ՎԱՉՔ**

1. Գէորգ Պետրեան (Լիբանան) 13'13" 5
2. Սերժ Չոլաքեան (Լիբանան) 13'15" 6
3. Վարազ Քէօշեան (Լիբանան) 13'23" 4

**ՏՂՈՑ ԸՆԴՀԱՆՈՒՐ  
ԴԱՍԱԽՈՐՈՒՄ**

	Ո.	Ա.	Պ.	ԸՆԴՀ.
Լիբանան	10	8	8	26
Արեւմտեան Մ.Ն.	3	3	2	8
Սուրիա	1	1	-	2
Հ. Ամերիկա	-	1	2	3
Յունաստան	-	1	-	1
Լոնդոն	-	-	2	2



**5000 ՄԵԹՐ ՎԱՁՔ**

1. Սերժ Չորաքեան (Լիբանան) 22'27"5 **ՄՐՑ.**
2. Նարեկ Փանոսեան (Լիբանան) 23'44"5
3. Հայկ Աւետիս (Լիբանան) 24'04"5

**10.000 ՄԵԹՐ ՎԱՁՔ**

1. Սերժ Չորաքեան (Լիբանան) 51'21"4
2. Նարեկ Փանոսեան (Լիբանան) 52'38"6
3. Ռուբէն Նազգաչեան (Հարաւային Ամերիկա) 54'40"2

**4x100 Մ. ԴՐՕՇԱՐՇԱԻ**

1. Արեւմտեան Մ. Ն. 53"5
2. Յոլնաստան 54"2
3. Լիբանան 57"

**4x400 Մ. ԴՐՕՇԱՐՇԱԻ**

1. Լիբանան 4'19"4 **ՄՐՑ.**
2. Արեւմտեան Մ. Ն. 4'45"4
3. Հարաւային Ամերիկա 5'10"7

**ԲԱՐՁՐՈՒԹԻՒՆ ՅԱՏԿԵԼ**

1. Էլիո Մահրուք (Լիբանան) 1.50 մ.
2. Արի Աւետիս (Լիբանան) 1.50 մ.
3. Հրանդ Հայրապետեան (Լիբանան) 1.45 մ.

**ՄԷԿ ՔԱՅԼ ՈՍՏՈՒՄ**

1. Գրիգոր Գազէզեան (Սուրիա) 5.43 մ.
2. Էլիո Մահրուք (Լիբանան) 5.42 մ.
3. Վարազ Քէօշէեան (Լիբանան) 4.91 մ.

**ԱՂՁԿԱՆՑ ԸՆԴՀԱՆՈՒՐ  
ԴԱՍՏԱՌՈՐՈՒՄ**

	Ո.	Ա.	Պ.	ԸՆԴՀ.
Լիբանան	6	8	5	19
Հ.Մ.Ա.Կ.	3	-	-	3
Կիպրոս	2	-	-	2
Արեւմտեան Մ.Ն.	1	3	5	9
Հ. Ամերիկա	1	-	-	1





**ՍԿԱՒԱՌԱԿ ԱՐՁԱԿԵԼ**

1. Գօգօ Տիշոյեան (Արեւմտեան Մ. Ն.) 23.53 մ.
2. Արամ Տէր Յակոբեան (Հարաւային Ամերիկա) 23.20 մ.
3. Ստեփան Գասպարեան (Լոնտոն) 21.75 մ.

**ԳՈՒՆՏ ՆԵՏԵԼ**

1. Բուրնիթ Քեմնից (Արեւմտեան Մ. Ն.) 10.04 մ.
2. Գօգօ Տիշոյեան (Արեւմտեան Մ. Ն.) 9.44 մ.
3. Սարգիս Գրիգոր (Արեւմտեան Մ. Ն.) 8.73 մ.



**ԱՂՋԻԿՆԵՐ**

**100 ՄԵԹՐ ՎԱՁՔ**

1. Փիւնիկ Հապնուս (Հ.Մ.Ա.Կ.) 13"9
2. Լոուի Թաշճեան (Լիբանան) 14"7
3. Մելիսա Մինասեան (Արեւմտեան Մ. Ն.) 15"2

**200 ՄԵԹՐ ՎԱՁՔ**

1. Սինթիա Քէշիշեան (Հ.Մ.Ա.Կ.) 28"6
2. Լոուի Թաշճեան (Լիբանան) 31"7
3. Բարիկ Ծատուրեան (Լիբանան) 33"9

**400 ՄԵԹՐ ՎԱՁՔ**

1. Սինթիա Քէշիշեան (Հ.Մ.Ա.Կ.) 1'07"5
2. Լոուի Թաշճեան (Լիբանան) 1'13"8
3. Սարին Ռիթա Ներսէս (Լիբանան) 1'23"6



**800 ՄԵԹՐ ՎԱՁՔ**

1. Միքայէլլա Այնէճեան (Կիպրոս) 2'37"4 **ՄՐՑ.**
2. Լոուի Թաշճեան (Լիբանան) 3'18"
3. Անայիս Մալազեան (Արեւմտեան Մ. Ն.) 3'41"1

**1500 ՄԵԹՐ ՎԱՁՔ**

1. Միքայէլլա Այնէճեան (Կիպրոս) 5'33" **ՄՐՑ.**
2. Լոուի Թաշճեան (Լիբանան) 6'33"
3. Անայիս Մալազեան (Արեւմտեան Մ. Ն.) 6'44"

**3000 ՄԵԹՐ ՎԱՁՔ**

1. Լոուի Թաշճեան (Լիբանան) 12'23"9 **ՄՐՑ.**
2. Անայիս Մալազեան (Արեւմտեան Մ. Ն.) 12'32"2
3. Քրիստէլ Քիսօ (Լիբանան) 12'40"





**5000 ՄԵԹՐ ՎԱԶՔ**

1. Լուսի Թաշճեան (Լիբանան) 24'24"37 **ՄԲՑ.**
2. Անայիս Մալազեան (Արեւմտեան Մ. Ն.) 25'16"3
3. Քրիստէլ Կիսօ (Լիբանան) 26'29"4

**10.000 ՄԵԹՐ ՎԱԶՔ**

1. Պելենէ Պոզօղեան (Հարաւային Ամերիկա) 54'40"2 **ՄԲՑ.**
2. Քրիստէլ Քիսօ (Լիբանան) 58'39"6
3. Սարին Ռիթա Ներսէս (Լիբանան) 1.05'41"

**4x400 Մ. ԴՐՕՇԱՐՇԱԻ**

1. Լիբանան 7'12"6 **ՄԲՑ.**

**Մէկ ՔԱՅԼ ՈՍՏՈՒՄ**

1. Լուսի Թաշճեան (Լիբանան) 1.10 մ.

**ԲԱՐՁՐՈՒԹԻՒՆ ՅԱՏԿԵԼ**

1. Լուսի Թաշճեան (Լիբանան) 1.10 մ.
2. Անայիս Մալազեան (Արեւմտեան Մ. Ն.) 1 մ.

**ՍԿԱՒԱՌԱԿ ԱՐՁԱԿԵԼ**

1. Մելիսա Մինասեան (Արեւմտեան Մ. Ն.) 16.33 մ.
2. Կայէլ Քըլզի (Լիբանան) 16.22 մ.
3. Անայիս Մալազեան (Արեւմտեան Մ. Ն.) 15.87 մ.

**ԳՈՒՆՏ ՆԵՏԵԼ**

1. Լուսի Թաշճեան (Լիբանան) 7 մ.
2. Բայիկ Ծատուրեան (Լիբանան) 6.12 մ.
3. Անայիս Մալազեան (Արեւմտեան Մ. Ն.) 5.90 մ.

**ԱԹԵԼԵԹԻՉՄԻ ՄՐՑՈՒՄՆԵՐՈՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԱՍՏԱՌՈՐՈՒՄ**

	Ո.	Ա.	Պ.	ԸՆԳՀ.
Լիբանան	16	16	13	45
Արեւմտեան Մ.Ն..	4	6	7	17
Հ.Մ.Ա.Կ.	3	-	-	3
Կիպրոս	2	-	-	2
Հ. Ամերիկա	1	1	2	4
Սուրիա	1	1	-	2
Յունաստան	-	1	-	1
Լոնդոն	-	-	2	2







# ԱԹԼԵԹՈՒՉՄԻ ՄՐՑՈՒՄՆԵՐԸ Կ'ՈՐԴԵԳՐԵՆ 4 ՆՈՐ ՄԱՐԶԱԶԵԻ ԵՒ ԿԸ ՀԱՍՏԱՏԵՆ ՀԱՄԱ-Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ 8 ՆՈՐ ՄՐՑԱՆԻՇ

## Յրաչ Տէր Սարգիսեան ՍՈՆԹՐԵԱԼ

### Ա. ԹՈՒԱԿԱՆ ՊԱՏԿԵՐ

Համա-Հ.Մ.Ը.Մ.ական 10-րդ մարզախաղերու աթլետիկայի մրցումներուն մասնակցութեան պատկերը եղաւ հետեւեալ ձևով.-

Տղոց մրցումներուն մասնակցեցան 11 շրջաններ.- Լիբանան, Արեւմտեան Մ. Ն., Հարաւային Ամերիկա, Սուրիա, Լոնտոն, Ֆունաստան, Պուլկարիա, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ., Ֆրանս, Հ.Մ.Ա.Կ. (Թեհրան) եւ Կիպրոս:

Աղջկանց մրցումներուն մասնակցեցան 7 շրջաններ.- Լիբանան, Արեւմտեան Մ. Ն., Հ.Մ.Ա.Կ. (Թեհրան), Կիպրոս, Հարաւային Ամերիկա, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ. եւ Ֆրանս:

### Բ. ՄԱՐԶԱԶԵԻ

Այս մարզախաղերուն նկատի առնըւեցան 27 մարզաձեւեր, 14-ը տղոց եւ 13-ը աղջկանց համար:

### Գ. ՄԵՏԱԼՆԵՐՈՒ ԲԱՇԽՈՒՄ

Աթլետիկայի մրցումներու աւարտին, մետալներու բաշխումը պարզեց հետեւեալ պատկերը.-

#### Տղաք

Լիբանան- 10 ոսկի , 8 արծաթ եւ 8 պրոնզ:

Արեւմտեան Մ. Ն.- 3 ոսկի, 3 արծաթ եւ 2 պրոնզ:

Սուրիա- 1 ոսկի եւ 1 արծաթ:

Հարաւային Ամերիկա- 1 արծաթ եւ 2 պրոնզ:

Ֆունաստան- 1 արծաթ:

Լոնտոն- 2 պրոնզ:

### Աղջիկներ

Լիբանան- 6 ոսկի, 8 արծաթ եւ 5 պրոնզ:

Հ.Մ.Ա.Կ.- 3 ոսկի:

Կիպրոս- 2 ոսկի:

Արեւմտեան Մ. Ն.- 1 ոսկի, 3 արծաթ եւ 5 պրոնզ:

Հարաւային Ամերիկա- 1 ոսկի:

### Դ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԱՍԱՒՈՐՈՒՄ

Ընդհանուր դասաւորման համար նկատի առնուեցաւ կէտադրութեան յատուկ դրութիւն. առաջին դիրքին համար 10 կէտ, երկրորդին՝ 8 կէտ, երրորդին՝ 6 կէտ եւ յապէս, մինչեւ ութերորդ դիրքին՝ 1 կէտ (10-8-6-5-4-3-2-1): Այս կէտադրութեան հիմամբ կէտերու ընդհանուր դասաւորումը եղաւ հետեւեալ ձևով.-



**Տղաք**

- 1. Լիբանան 212 կէտ
- 2. Արեւմտեան Մ. Ն. 66 կէտ
- 3. Հարաւային Ամերիկա 20 կէտ
- 4. Սուրիա 18 կէտ
- 5. Լոնտոն 12 կէտ
- 6. Յունաստան 8 կէտ

**Աղջիկներ**

- 1. Լիբանան 154 կէտ
- 2. Արեւմտեան Մ. Ն. 64 կէտ
- 3. Հ.Մ.Ա.Կ. 30 կէտ
- 4. Կիպրոս 20 կէտ
- 5. Հարաւային Ամերիկա 10 կէտ
- 6-7. Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ., Ֆրանս 0 կէտ

**Ե. ՄՐՑԱՆԻՇՆԵՐ**

Համա-Հ.Մ.Ը.Մ.-ական 10-րդ մարզախաղերու ակթիվիզմի տղոց եւ աղջրկանց մրցումներուն առաջին անգամ ըլլալով նկատի առնուեցան 4 նոր մարզաձեւեր՝ վազք 5000 եւ 10000 մեթր, դրօշարչաւ 4x400 մեթր աղջկանց եւ տղոց պարագային: 4 մարզաձեւերու լաւագոյն արդիւնքները կը նկատուին համա-Հ.Մ.Ը.Մ.-ական մրցանիշներ՝ մինչեւ անոնց խորտակումը աւելի լաւ արդիւնքներով:

Ինչ կը վերաբերի մրցանիշներուն, ուրախութեամբ պէտք է հաստատել, որ համա-Հ.Մ.Ը.Մ.-ական այս մարզախաղերուն արձանագրուեցան 4 նոր մրցանիշներ՝ երեքը աղջկանց 800, 1500 եւ 3000 մեթր վազքի մրցումներուն, իսկ մէկը՝ տղոց 5000 մեթր վազքի մրցումին: Մրցանիշներ նկատուեցան նաեւ մարզախաղերու պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով նկատի առնուող 4 մրցումներուն արդիւնքները:

Ուշագրաւ եւ գնահատանքի արժանի է Լիբանանէն Լոուի Թաշճեանը, որ երկու օրուան ընթացքին մասնակցեցաւ 10 մարզաձեւի եւ տիրացաւ... 10 մետալի (5 ոսկի եւ 5 արծաթ, առաւել՝ ան ոսկի մետալ մըն ապահովեց 4x400 մեթր աղջր-



կանց դրօշարչաւի մրցումին): Ան խորտակեց 3000 մեթր վազքի համա-Հ.Մ.Ը.Մ.-ական իր նախորդ մրցանիշը, երբ արձանագրեց 12'23"9 արդիւնք (2013-ին ան արձանագրած էր 13'57"1 արդիւնք): Լոուին իր յատկութիւններով կրնայ շատ լաւ Heptatlon ընել, այսինքն՝ 7 մարզաձեւ 2 օրուան մէջ (100 մեթր վազք, բարձրութիւն ցատկել, գունտ նետել, 200 մեթր վազք, 1 քայլ ոստում, նիզակ արձակել եւ 800 մեթր վազք):

Համա-Հ.Մ.Ը.Մ.-ական մարզախաղերու ակթիվիզմի մրցումներու բոլոր մրցանիշները կարելի է գտնել միութեան համացանցի կայքէջին մէջ ([www.Homenetmen.org](http://www.Homenetmen.org)):

Համա-Հ.Մ.Ը.Մ.-ական մարզախաղերը տեղի կ'ունենան չորս տարին անգամ մը եւ, ինչպէս միջազգային ոլիմպիական խաղերը, խորտակուած բոլոր մրցանիշները առանձնաբար կ'արձանագրուին եւ տեղ կը գտնեն միութեան կայքէջի յատուկ բաժինին մէջ:

Համա-Հ.Մ.Ը.Մ.-ական մարզախաղերու ընթացքին կարելի է խորտակել նաեւ Հ.Մ.Ը.Մ.-ական մրցանիշներ:



**Զ. ԱՐԺԵՒՈՐՈՒՄ-ԹԵԼԱԴՐԱՆՔ**

Իբրեւ ընդհանուր արժեւորում, համա-Հ.Մ.Ը.Մ.-ական այս մարզախաղերու 27 մարզաձեւերուն հաստատուեցաւ միայն չորս մրցանիշ, երեքն ալ աղջկանց մրցումներու: Մնացեալ 24 մրցումներու արդիւնքները, նախորդ մրցումներու բաղդատած, կը նկատուին համեմատաբար միջակ եւ տկար:

Հակառակ կարգ մը դժուարութիւններու, գնահատելի էր բոլոր շրջաններու կարգապահ մասնակցութիւնը, ի մասնաւորի՝ մարզիչներու ներդրումը մարզախաղերու յաջողութեան: Յաջողին կ'ակնկալուի աւելի որակեալ եւ մեծաթիւ մասնակցութիւն:

Բոլորս գիտենք, որ խմբային մարզախաղերը՝ Ֆուլթոլ, պասթիպոլ, վոլիպոլ աւելի հրապուրիչ եւ քաջողական



ազդեցութիւնն ունին երախաներու եւ պատանիներու համար, հետեւաբար աւելի դիւրին է գանոնք մղել այդ մարզախաղերուն («Գնդակով կը խաղանք, աթլետիզմը գնդակ չունի...»):

Եթէ կ'ուզենք աթլետիզմի արդիւնքները բարելաւել պէտք է զարկ տալ մարզկային բնածին շարժումներու, այսինքն՝ վազքի, ոստումի, արձակումի, որոնք փոքրերը բնականաբար կը կատարեն, առանց որեւէ հրահանգի: Այս բնածին շարժումները օգտագործել խաղի միջոցներով եւ հերթաբար մտցնել թեքնիք բաժինը, ուր մարզիչը իր գիտութեամբ եւ հմտութեամբ կը սատարէ մարզիկին դաստիարակութեան եւ յառաջդիմութեան:

Հետեւաբար, կոչ կ'ուղղենք բոլոր մարզիչներուն, որպէսզի խմբային փորձերու ժամանակ յատուկ ուշադրութեամբ հետեւին այն բոլոր մարզիկներուն, որոնք օժտուած են արագութեամբ, դիմացկունութեամբ, բարձր ցատկերու կարողութեամբ կամ ուժի տոկունութեամբ եւ քաջալերեն զանոնք, որպէսզի անոնք հետեւին աթլետիզմի փորձերու, գէթ փորձառական շրջանի մը համար:

Աթլետիզմի մարզիչ մը դրական մօտեցումով եւ մարզիկներու կարողութիւնները գնահատելով կրնայ սիրցնել տալ մարզախաղը եւ զանոնք մղել իրենց նախասիրած մարզաձեւը կիրարկելու:

Ողիմպիական խաղերու կարգախօսը՝ «Citius - Altius - Fortius» ներշնչուած է մասնաւորաբար աթլետիզմէն, որ լուսարձակի տակ կ'առնէ մարզիկի մը Փի-



գիրական եւ բարոյական յատկանիշները:

Մարզիկի մը առաջնահերթ նպատակը պէտք է ըլլայ վագել, աւելի՛ արագ ցատկել, աւելի՛ բարձր արձակել, աւելի՛ հեռու եւ աւելի՛ ճիշդ, միջազգային ողիմպիականի կարգախօսին համաձայն: Մարզիկին յառաջդիմութեան կարեւորագոյն ազդակներէն մէկը պէտք է ըլլայ իր անձնական արդիւնքներուն բարելաւումը եւ ոչ թէ՛ միայն անոնց բաղդատականը ուրիշներու արդիւնքներուն հետ: Մարզիկ մը ուրախ պէտք է ըլլայ իր յաղթանակներով, բայց կրկնակի ուրախ՝ իր բարելաւած արդիւնքներով: Այս հոգեբանութեամբ, ան աւելի երկար տարիներ պիտի կապուի իր մասնագիտութեան եւ միշտ պիտի ձգտի բարելաւելու իր արագութիւնը, դիմացկունութիւնը, ուժը, մարզաձեւի թեքնիքը եւ, հետեւաբար, յարատեւելու կամքը:



Աթլետիզմը իր լայն ճիւղաւորումներով լուրջ մասնագիտութիւն մը ըլլալով, կարեւոր է, որ մարզիկները հետեւին ատլետիզմի տեղական ֆետերասիոններու կողմէ կազմակերպուած սեմինարներու, ուր անոնք պիտի բարելաւեն իրենց զարգացումը՝ ի մասնաւորի մարզիկներու պատրաստութեան, թեքնիք եւ պիտմեքանիք բնագաւառներուն մէջ:



Միութեան կայքէջին մէջ կարելի է գտնել Հ.Մ.Ը.Մ.ական, համա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզախաղերու, համահայկական խաղերու, Հայաստանի Հանրապետութեան եւ համաշխարհային ատլետիզմի մրցանիշներ ([www.Homenetmen.org](http://www.Homenetmen.org)):



# ՄԱՐԻ ՍՈՍԱՔԵԱՆ ԵՒ ՄԻՐՆԱ ՊՁՏԻԿԵԱՆ 11 ՄԻՑԱՆԻՇՈՎ ԼՈՂԻ ՀԱՄԱ-Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ՄԻՑՈՒՄՆԵՐՈՒՆ ԿՈՒ ՏԱՆ ՅԱՏՈՒԿ ՓԱՅԼՔ

**Հ**.Մ.Ը.Մ-ի մարզական պատմութիւնը գրողները, վստահաբար, վաղը բաւական երկար կանգ պիտի առնեն համա-Հ.Մ.Ը.Մ-ական 10-րդ մարզախաղերու լողի մրցումներու արդիւնքներուն վրայ: Պատմութիւնը ոսկի տառերով պիտի յիշէ անունները Մարի Սոմաքեանի եւ Միրնա Պզտիկեանի, որոնք այս մարզաձեւին անվիճելի «աստղ»երը հանդիսացաւ: Մարի Սոմաքեան, Կիպրոսէն, մասնակցեցաւ 7 մրցումի, իւրեց 7 ոսկի մետալ եւ հաստատեց համա-Հ.Մ.Ը.Մ-ական 6 մրցանիշ, մինչ Միրնա Պզտիկեան, Սուրիայէն, իր կարգին, մասնակցեցաւ 7 մրցումի, ապահովեց 5 ոսկի, 2 արծաթ մետալ եւ հաստատեց համա-Հ.Մ.Ը.Մ-ական 5 մրցանիշ: Նախորդ մարզախաղերուն, Սուրիայէն փայլած էր Սերլի Մուշեղեանը, որ տիրացած էր 5 ոսկի մետալի:

Աղջկանց 11 մրցանիշներու կողքին, տղոց մրցումներուն արձանագրուեցաւ 2 մրցանիշ: Արեւմտեան Մ. Նահանգներէն Սեւան Ղարապէյքի եւ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-էն Գէորգ Պաղտասարեան, իրենց կարգին, մուտք գործեցին Հ.Մ.Ը.Մ-ի մարզական ոսկեմատեան, երբ խորտակեցին նախորդ մարզախաղերու արձանագրուած մրցանիշները եւ իւրեցին 13 մետալներ: Սեւան արժանացաւ 3 ոսկի, 3 արծաթ եւ 1 պրոնզ մետալի, իսկ Գէորգ՝ 3 ոսկի, 2 արծաթ եւ 1 պրոնզ մետալի:

Մարզախաղերու աւարտին, լողի մրցումներու լաւագոյն մարզիկն ու մարզիկուհին ընտրուեցան Սեւանն ու Մարին, որոնք արժանաբար տիրացան «Շաւարշ Բրիսեան» եւ «Տիգրան Ոսկունի» բաժանիներուն:

Խմբային արդիւնքներու պարագային, Թեհրանի Հ.Մ.-Ա.Կ-ի տղաքն ու աղջիկները 26 մետալով իրենց գերակշիռ տիրակառութիւնը վերահաստատեցին լողի մրցումներուն:

Անոնք իրենց միութեան ապահովեցին 7 ոսկի, 10 արծաթ եւ 9 պրոնզ մետալներ: Չորս տարի առաջ, Հ.Մ.Ա.Կ-ի տղաքն ու աղջիկները ապահոված էին 25 մետալ (6 ոսկի, 11 արծաթ, 8 պրոնզ) եւ դարձեալ իրենց վերապահած էին առաջնութեան դիրքը: Հ.Մ.Ա.Կ-ի ետին, ընդհանուր դասաւորման երկրորդ եւ երրորդ դիրքերը գրաւեցին Կիպրոսի եւ Լիբանանի շրջանները՝ առաջինը 6 ոսկի մետալով, երկրորդը՝ 5 ոսկի, 5 արծաթ եւ 1 պրոնզ մետալով:

Լողի տղոց մրցումներուն մասնակցեցան 6 շրջանէ 23 լուղորդներ.- Արեւմտեան Մ. Ն. (4), Լիբանան (5), Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ. (6), Հարաւային Ամերիկա (3), Ֆրանս (1) եւ Հ.Մ.Ա.Կ. (4):







## Հ.Մ.Ա.Կ.Ի ՏՂԱՔՆ ՈՒ ԱՂՁԻԿՆԵՐԸ 26 ՄԵՏԱԼՈՎ ԿԸ ՏԻՐԱՆԱՆ ԼՈՂԻ ՄՐՑՈՒՄՆԵՐՈՒ ԽՄԲԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՒԹԵԱՆ

Աղջկանց մրցումներուն մասնակցեցան 8 չրջանէ 18 լու-  
ղորդներ:- Արեւելեան Մ. Ն. (1), Արեւմտեան Մ. Ն. (3), Լիբա-  
նան (1), Կիպրոս (1), Հայաստան (9), Հարաւային Ամերիկա  
(1), Սուրիա (1) եւ Ֆրանս (1):

Ստորեւ մրցումներուն արդիւնքները եւ մետալներու ընդ-  
հանուր դասաւորումը:-

### ՏՂԱՔ

#### 50 ՄԵԹՐ ԱՁԱՏ ՈՃ

1. Սեւադա Աւաննէսեան (Արեւմտեան Մ.Ն.) 0'26"14
2. Սեւան Ղարապէյքի (Հ.Մ.Ա.Կ.) 0'26"65
3. Գէորգ Պաղտասարեան (Հ.Ա.Ս.Կ.) 0'28"91

#### 100 ՄԵԹՐ ԱՁԱՏ ՈՃ

1. Սեւակ Տէմիրճեան (Լիբանան) 1'02"79
2. Սեւադա Աւաննէսեան (Արեւմտեան Մ. Ն.) 1'05"54
3. Փիլիքր Մանուչակեան (Արեւմտեան Մ. Ն.) 1'07"65

#### 200 ՄԵԹՐ ԱՁԱՏ ՈՃ

1. Արին Միրզայեան (Հ.Մ.Ա.Կ.) 2'35"68
2. Փաթիլ Մանուչակեան (Արեւմտեան Մ. Ն.) 2'45"46

#### 400 ՄԵԹՐ ԱՁԱՏ ՈՃ

1. Սեւակ Տէմիրճեան (Լիբանան) 5'06"88
2. Գէորգ Պաղտասարեան (Հ.Ա.Ս.Կ.) 5'16"32





3. Արամէ Աղազարեան (Հ.Մ.Ա.Կ.) 5'26"42

**800 ՄԵԹՐ ԱԶԱՏ ՈՃ**

1. Սեւակ Տէմիրճեան (Լիբանան) 10'54"18
2. Արամէ Աղազարեան (Հ.Մ.Ա.Կ.) 11'42"75
3. Սեւան Ղարապէյքի (Հ.Մ.Ա.Կ.) 12'29"34

**50 ՄԵԹՐ ՊՐԱՍ**

1. Սեւան Ղարապէյքի (Հ.Մ.Ա.Կ.) 0'33"78 **ՄՐՑ.**
2. Արամէ Աղազարեան (Հ.Մ.Ա.Կ.) 0'35"10
3. Արին Միրզայեան (Հ.Մ.Ա.Կ.) 0'39"72

**100 ՄԵԹՐ ՊՐԱՍ**

1. Արամէ Աղազարեան (Հ.Մ.Ա.Կ.) 1'24"28



2. Արին Միրզայեան (Հ.Մ.Ա.Կ.) 1'26"70

3. Փիթըր Մանուչակեան (Արեւմտեան Մ. Ն.) 1'34"10

**200 ՄԵԹՐ ՊՐԱՍ**

1. Արամէ Աղազարեան (Հ.Մ.Ա.Կ.) 3'03"66
2. Արին Միրզայեան (Հ.Մ.Ա.Կ.) 3'22"12

**50 ՄԵԹՐ ԿՈՆԱԿԻ ՎՐԱՅ**

1. Գէորգ Պաղտասարեան (Հ.Ա.Ս.Կ.) 0'32"98

2. Արին Միրզայեան (Հ.Մ.Ա.Կ.) 0'37"14

3. Արկիլին Աւաննէսեան (Արեւմտեան Մ. Ն.) 0'38"03

**100 ՄԵԹՐ ԿՈՆԱԿԻ ՎՐԱՅ**

1. Գէորգ Պաղտասարեան (Հ.Ա.Ս.Կ.) 1'12"30
2. Սեւան Ղարապէյքի (Հ.Մ.Ա.Կ.) 1'19"69
3. Սեւակ Տէմիրճեան (Լիբանան) 1'14"84

**200 ՄԵԹՐ ԿՈՆԱԿԻ ՎՐԱՅ**

1. Գէորգ Պաղտասարեան (Հ.Ա.Ս.Կ.) 2'37"28 **ՄՐՑ.**
2. Սեւակ Տէմիրճեան (Լիբանան) 2'53"62

**200 ՄԵԹՐ ԽԱՌՆ**

1. Սեւան Ղարապէյքի (Հ.Մ.Ա.Կ.) 2'41"25
2. Գէորգ Պաղտասարեան (Հ.Ա.Ս.Կ.) 2'44"45
3. Արին Միրզայեան (Հ.Մ.Ա.Կ.) 2'59"18

**50 ՄԵԹՐ ԹԻԹԵՌՆԻԿ**

1. Սեւակ Տէմիրճեան (Լիբանան) 0'29"50
2. Սեւան Ղարապէյքի (Հ.Մ.Ա.Կ.) 0'30"36
3. Սեւադա Աւաննէսեան (Արեւմտեան Մ. Ն.) 0'33"39

**100 ՄԵԹՐ ԹԻԹԵՌՆԻԿ**

1. Սեւան Ղարապէյքի (Հ.Մ.Ա.Կ.) 1'06"86
2. Սեւադա Աւաննէսեան (Արեւմտեան Մ. Ն.) 1'09"70
3. Արամէ Աղազարեան (Հ.Մ.Ա.Կ.) 1'10"37

**4x50 ՄԵԹՐ ԱԶԱՏ ՈՃ / ՇՐՋԱՆ**

1. Արեւմտեան Մ. Ն. 2'01"75

**ԼՈՂԻ ՏՂՈՑ ՄՐՅՈՒՄՆԵՐՈՒ ԼԱՒԱԳՈՅՆ ՀՆԳԵԱԿԸ**

	Ո.	Ա.	Պ.	ԸՆԴՀ.
1. Սեւան Ղարապէյքի (Արեւմ. Մ. Ն.)	3	3	1	7
2. Գէորգ Պաղտասարեան (Հ.Ա.Ս.Կ.)	3	2	1	6
3. Արամէ Աղազարեան (Հ.Մ.Ա.Կ.)	2	3	1	6
4. Արին Միրզայեան (Հ.Մ.Ա.Կ.)	1	3	2	6
5. Սեւադա Աւաննէսեան (Արեւմ. Մ. Ն.)	1	2	1	4





## ԼՈՂԻ ՄՐՑՈՒՄՆԵՐՈՒ ԸՆԳՀԱՆՈՒՐ ԴԱՍԱԻՐՈՒՄ

	Ո.	Ա.	Պ.	ԸՆԳՀ.
Հ.Մ.Ա.Կ.	7	0	9	26
Կիպրոս	6	-	-	6
Լիբանան	5	5	1	11
Հ.Մ.Ա.Կ.	4	5	1	10
Սուրիա	5	2	-	7
Արևմտյան Մ. Ն.	3	7	7	17
Արևելյան Մ. Ն.	-	-	1	1
Լոնդոն	-	-	1	1

- 2. Լիբանան 2'33"30
- 3. Հ.Մ.Ա.Կ. 2'02"99

3. Բիւրեղ Պօղոսեան (Արեւմտեան Մ. Ն.) 0'45"00

### ԱՂՋԻԿՆԵՐ

#### 50 ՄԵԹՐ ԱԶԱՏ ՈՃ

- 1. Մարի Սոմաքեան (Կիպրոս) 0'28"19 **ՄՐՑ.**
- 2. Միրնա Պզտիկեան (Սուրիա) 0'29"26
- 3. Բիւրեղ Պօղոսեան (Արեւմտեան Մ. Ն.) 0'31"09

#### 100 ՄԵԹՐ ՊՐԱՍ

- 1. Միրնա Պզտիկեան (Սուրիա) 1'19"47 **ՄՐՑ.**
- 2. Բիւրեղ Պօղոսեան (Արեւմտեան Մ. Ն.) 1'34"84
- 3. Սելին Միրզայեան (Հ.Մ.Ա.Կ.) 1'38"16

#### 100 ՄԵԹՐ ԱԶԱՏ ՈՃ

- 1. Մարի Սոմաքեան (Կիպրոս) 1'02"42 **ՄՐՑ.**
- 2. Բիւրեղ Պօղոսեան (Արեւմտեան Մ. Ն.) 1'10"92
- 3. Լիլիթ Յովակիմեան (Լոնդոն) 1'22"34

#### 200 ՄԵԹՐ ՊՐԱՍ

- 1. Միրնա Պզտիկեան (Սուրիա) 2'56"39 **ՄՐՑ.**

#### 200 ՄԵԹՐ ԱԶԱՏ ՈՃ

- 1. Բիւրեղ Պօղոսեան (Արեւմտեան Մ. Ն.) 2'42"82
- 2. Քրիստէլ Կիսօ (Լիբանան) 2'48"25

#### 50 ՄԵԹՐ ԿՌՆԱԿԻ ՎՐԱՅ

- 1. Մարի Սոմաքեան (Կիպրոս) 0'33"17 **ՄՐՑ.**
- 2. Միրնա Պզտիկեան (Սուրիա) 0'35"60
- 3. Սելին Միրզայեան (Հ.Մ.Ա.Կ.) 0'38"72

#### 400 ՄԵԹՐ ԱԶԱՏ ՈՃ

- 1. Միրնա Պզտիկեան (Սուրիա) 5'19"72 **ՄՐՑ.**
- 2. Քրիստէլ Կիսօ (Լիբանան) 6'09"98



#### 800 ՄԵԹՐ ԱԶԱՏ ՈՃ

- 1. Քրիստէլ Կիսօ (Լիբանան) 12'28"62
- 2. Բիւրեղ Պօղոսեան (Արեւմտեան Մ. Ն.) 13'43"82

#### 50 ՄԵԹՐ ՊՐԱՍ

- 1. Միրնա Պզտիկեան (Սուրիա) 0'35"81 **ՄՐՑ.**
- 2. Սելին Միրզայեան (Հ.Մ.Ա.Կ.) 0'44"60

## ԼՈՂԻ ԱՂՋԿԱՆՑ ՄՐՑՈՒՄՆԵՐՈՒ ԼԱԻՍԳՈՅՆ ՀՆԳԵԱԿԸ

	Ո.	Ա.	Պ.	ԸՆԳՀ.
1. Մարի Սոմաքեան (Կիպրոս)	7	-	-	7
2. Միրնա Պզտիկեան (Սուրիա)	5	2	-	7
3. Բիւրեղ Պօղոսեան (Արեւմտեան Մ. Ն.)	1	3	2	6
4. Քրիստէլ Կիսօ (Լիբանան)	1	3	-	4
5. Սելին Միրզայեան (Հ.Մ.Ա.Կ.)	1	2	3	6





**ԼՈՂԻ ՏՂՈՑ ՈՒ ԱՂՋԿԱՆՑ  
ՀԱՍԱ-Հ.Ս.Ը.Ս.ԱԿԱՆ  
ՆԱԽՈՐԴ ԱԽՈՅԵԱՆՆԵՐԸ  
2013- Հ.Ս.Ը.Ս.-Հ.Ս.Ա.Կ.  
Թեհրանի Հ.Ս.Ա.Կ.**



**100 ՄԵԹՐ ԿՈՆԱԿԻ ՎՐԱՑ**

1. Միրնա Պզտիկեան (Սուրիա) 1'18"58 **ՄՐՑ.**
2. Սելին Միրզայեան (Հ.Ս.Ա.Կ.) 1'26"75
3. Ժուլիա Մարտիրոսեան (Արեւմտեան Մ.Ն.) 1'33"79

**200 ՄԵԹՐ ԿՈՆԱԿԻ ՎՐԱՑ**

1. Սելին Միրզայեան (Հ.Ս.Ա.Կ.) 3'14"66
2. Քրիստէլ Կիսօ (Լիբանան) 3'36"38

**200 ՄԵԹՐ ԽԱՌՆ**

1. Մարի Սոմաքեան (Կիպրոս) 2'41"00 **ՄՐՑ.**
2. Բարտի Պաղտասարեան (Հ.Ա.Ս.Կ.) 2'45"10
3. Սելին Միրզայեան (Հ.Ս.Ա.Կ.) 3'23"62

**50 ՄԵԹՐ ԹԻԹԵՌՆԻԿ**

1. Մարի Սոմաքեան (Կիպրոս) 0'30"22 **ՄՐՑ.**
2. Բարտի Պաղտասարեան (Հ.Ա.Ս.Կ.) 0'32"72
3. Գարմէն Թրութ (Արեւելեան Մ.Ն.) 0'34"63

**100 ՄԵԹՐ ԹԻԹԵՌՆԻԿ**

1. Մարի Սոմաքեան (Կիպրոս) 1'09"72 **ՄՐՑ.**
2. Բարտի Պաղտասարեան (Հ.Ա.Ս.Կ.) 1'14"99

**4x50 ՄԵԹՐ ԱԶԱՏ ՈՃ / ՇՐՋԱՆ**

1. Հ.Ա.Ս.Կ. 2'05"76\*
2. Արեւմտեան Մ.Ն. 2'22"09

\*Նույնընկերակց հետ հանդէս եկաւ Կիպրոսէն Մարի Սոմաքեան:

**ՏՂՈՑ ԸՆԴՀԱՆՈՒՐ  
ԴԱՍԱԴՐՈՒՄ**

	Ո.	Ա.	Պ.	ԸՆԳՀ.
Հ.Ս.Ա.Կ.	6	8	6	20
Լիբանան	4	2	1	7
Հ.Ա.Ս.Կ.	3	2	1	6
Արեւմտեան Մ. Ն.	2	3	4	9



**ԱՂՋԿԱՆՑ ԸՆԴՀԱՆՈՒՐ  
ԴԱՍԱԴՐՈՒՄ**

	Ո.	Ա.	Պ.	ԸՆԳՀ.
Կիպրոս	6	-	-	6
Սուրիա	5	2	-	7
Արեւմտեան Մ. Ն.	1	4	3	8
Լիբանան	1	3	-	4
Հ.Ա.Ս.Կ.	1	3	3	4
Հ.Ս.Ա.Կ.	1	2	-	6
Արեւելեան Մ.Ն.	-	-	1	1
Լոնյոն	-	-	1	1





# Հ.Մ.Ը.Մ. ԼԻՔԱՆԱՆ ԿԸ ՏԻՐԱՆԱՅ ՓԻՆԿ-ՓՈՆԿԻ ԻՆԸ ՄԵՏԱԼՆԵՐԸՆ ՀԻՆԳԻՆ

**Փ**ինկ-փոնկը համա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզախաղերու շարքին նկատի առնուած է 2001-ի Պէյ-րուժի 6-րդ մարզախաղերէն ետք: Այնուհետեւ, յայտագրի վրայ ան իր արժանի տեղը ունեցած է 2009-ին եւ 2013-ին: Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի մարզիկներն ու մարզիկուհիները միշտ ալ իրենց խօսքը ունեցած են փինկ-փոնկի ախտյեաններու ճշդումին մէջ: Բացառութեամբ 2009-ի մարզախաղերուն, որոնց Լիբանան փինկ-փոնկի խումբով չէ մասնակցած, Լիբանանի մարզիկները եղած են Հ.Մ.Ը.Մ.ական փինկ-փոնկի գլխաւոր «աստղ»երը եւ մետալակիրները: Այս մարզախաղերուն եւս պատկերը տարբեր չեղաւ, տրուած ըլլալով որ Լիբանանէն Աւո Մունջօղլեան եւ Լարա Քէչէպաշեան տիրացան տղոց եւ աղջկանց առաջնութեան տիտղոսներուն: Աւո Մունջօղլեան Նարեկ Փանոսեանի հետ տիրացաւ նաեւ զոյգ տղոց արծաթ մետալին:

Նախորդ մարզախաղերուն բաղադատած, այս մարզախաղերուն փինկ-փոնկի մրցումներուն մասնակցութիւնը եղաւ բաւական մեծաթիւ: Ինը մետալներու տիրացման համար (տղոց, աղջկանց եւ զոյգ տղոց առաջին, երկրորդ, երրորդ դիրքեր) 10 շրջանէ մրցեցան 40 մարզիկ-մարզիկուհիներ հետեւեալ ձեւով:-

### ՏՂԱՔ

Կիպրոս (1), Արեւելեան Մ. Ն. (2), Ֆրանս (1), Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ. (6), Լիբանան (12), Գանատա (1), Հարաւային Ամերիկա (3), Հ.Մ.Ա.Կ. (1), Արեւմտեան Մ. Ն. (6), Աւստրալիա (1):



### ԱՂՋԻԿՆԵՐ

Լիբանան (2), Արեւմտեան Մ. Նահանգներ (1), Հարաւային Ամերիկա (1), Հ.Մ.Ա.Կ. (1):

Ճակատումները կատարուեցան հետեւեալ ձեւով (յաղթականներու անունները նշուած են սկիզբը):-

### ՏՂԱՔ

#### Ա. ՀԱՆԳՐՈՒԱՆԻ ՄՐՑՈՒՄՆԵՐ

Աւո Մունջօղլեան (Լիբանան) - Միրօ Համամճեան (Հ.Ա.Ս.Կ.)

Միսաք Պարսումեան (Լիբանան) - Սերժ Տաքէսեան (Արեւմտեան Մ.Ն.)

Արէն Տաքէսեան (Արեւմտեան Մ.Ն.) - Գէորգ Արապաղլեան (Լիբանան)

Վահէ Թաշճեան (Գանատա) - Գեւրն Շեքէր (Աւստրալիա)  
Արթին Մերտինեան (Հարաւային Ամերիկա) - Նարեկ Փանոսեան (Լիբանան)

Մորիս Տէմիրճեան (Ֆրանս) - Արման Վիրապեան (Հ.Ա.Ս.Կ.)

Արմէն Եղիայեան (Լիբանան) - Հայկ Սարգսեան (Հ.Ա.Ս.Կ.)

Հրաչ Ճաւատեան (Արեւմտեան Մ.Ն.) - Արման Նաճարեան (Լիբանան)

Միշէլ Տէր Գէորգեան (Հ.Մ.Ա.Կ.) - Բաֆֆի Ռաճոյեան (Արեւմտեան Մ.Ն.)

Հայկ Ախպէկեան (Հ.Ա.Ս.Կ.) - Քրիստափոր Գրիգորեան (Արեւելեան Մ.Ն.)

Ակուսթին Զաքեան (Հարաւային Ամերիկա) - Շանթ Քիլճեան (Արեւմտեան Մ.Ն.)

Յարութ Ղազարեան (Լիբանան) - Վարազ Կէօզիլպէօյլուքեան (Լիբանան)

Հրակ Կիւրիւնլեան (Լիբանան) - Աւագ Կարապետեան (Հ.Ա.Ս.Կ.)

Յակոբ Պէրպէրեան (Հ.Ա.Ս.Կ.) - Ֆէտէրիք Տօնիկեան (Հարաւային Ամերիկա)

Շահան Նաճարեան (Լիբանան) - Արտակ Ասատուրեան (Լիբանան)

Էրիք Շահնազարի (Արեւմտեան Մ.Ն.) - Մարք Պաթանեան (Լիբանան)

Ալեքսանեան - Միրօ Համամճեան (Հ.Ա.Ս.Կ.)



Միսաք Պարսումեան (Լիբանան) - Նարեկ Մկրտչեան (Արեւմտեան Մ. Ն.)

- Բ. ՀԱՆԳՐՈՒԱՆԻ ՄՐՑՈՒՄՆԵՐ 1 (Ա. ՀԱՆԳՐՈՒԱՆԻ ՅԱՂԹԱԿԱՆՆԵՐԸ ԻՐԱՐՈՒ ԴԷՄ)
- Ա. Սոնջոյեան - Միսաք Պարսումեան
- Վահէ Թաշճեան - Արէն Տաքէսեան
- Արթին Մերտինեան - Մորիս Տէմիրճեան
- Հրաչ Ճաւատեան - Արմէն Եղիայեան
- Միշէլ Տէր Գէորգեան - Հայկ Ախպէկեան
- Յարութ Ղազարեան - Ակուսթին Զաքեան
- Յակոբ Պէրպէրեան - Հրակ Կիւրճեան
- Էրիք Շահնազարի - Շահան Նաճարեան
- Արեքսանեան - Նարեկ Մկրտչեան

- Բ. ՀԱՆԳՐՈՒԱՆԻ ՄՐՑՈՒՄՆԵՐ 2 (Ա. ՀԱՆԳՐՈՒԱՆԻ ՊԱՐՏՈՒՈՂՆԵՐԸ ԻՐԱՐՈՒ ԴԷՄ)
- Սերժ Տաքէսեան - Միրո Համամճեան
- Գէորգ Արապաղլեան - Գեւրն Շէքէր
- Նարեկ Փանոսեան - Արման Վիրապեան



**ԼԻԲԱՆԱՆԻ  
ԱՌ ՄՈՒՆՉՕՂԼԵԱՆ  
ԵՒ ԼԱՐԱՔԻՉԷՊԱՇԵԱՆ  
ՏՂՈՑ ՈՒ ԱՂՋԿԱՆՅ ՀԱՄԱ-  
Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ԱԽՈՅԵԱՆՆԵՐ**

- Հայկ Սարգսեան - Արման Նաճարեան
- Րաֆֆի Ռաճոյեան - Քրիստափոր Գրիգորեան
- Վարազ Կէօզիլպէօյլըքեան - Շանթ Քիլիճեան
- Ֆէտիքիք Տօնիկեան - Աւազ Կարապետեան
- Արտակ Ասատուրեան - Մարք Պաթանեան

**ՓԻՆԿ-ՓՈՆԿԻ ՏՂՈՑ  
ՈՒ ԱՂՋԿԱՆՅ  
ՀԱՄԱ-Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ  
ՆԱԽՈՐԴ  
ԱԽՈՅԵԱՆՆԵՐԸ**

- 2013- Միսաք Պոյաճեան (Լիբանան)
- 2009- Ռոպէրթ Շահնազարի (Արեւմտեան Մ. Ն.)
- 2001- Ռազմիկ Շեմմեսեան (Լիբանան)
- 2013- Դուին Մունջոյլեան (Լիբանան)
- 2009- Լիանա Մելիքեան (Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.)
- 2001- Լիզա Պարիկեան (Լիբանան)





**Գ. ՀԱՆԳՐՈՒԱՆ ՄՐՑՈՒՄՆԵՐ 2-ի ՅԱՂԹԱԿԱՆՆԵՐԸ ԿԸ ՄՐՑԻՆ ՔԱՌՈՐԴ ԱՒԱՐՏԱԿԱՆԻ ՄՐՑՈՒՄՆԵՐՈՒՆ**  
**ՊԱՐՏՈՒՈՂՆԵՐՈՒՆ ԴԷՄ ՃՇԴԵԼՈՒ ՀԱՄԱՐ 9-12-ՐԴ ԴԻՐՔԵՐԸ ԳՐԱՒՈՂՆԵՐԸ**  
 Հրակ Կիւրիւնլեան - Արթին Մերտինեան  
 Նարեկ Փանոսեան - Վահէ Թաշճեան  
 Արմէն Եղիայեան - Էրիք Շահնազարի  
 Միսաք Պարսուժեան - Յարութ Ղազարեան

**7-8-ՐԴ ԴԻՐՔԵՐՈՒ ՃՇԴՈՒՄԻ ՄՐՑՈՒՄՆԵՐ**  
 Հրակ Կիւրիւնլեան - Վահէ Թաշճեան  
 Էրիք Շահնազարի - Միսաք Պարսուժեան

**Գ. ՀԱՆԳՐՈՒԱՆԻ ՄՐՑՈՒՄՆԵՐ 1**  
**(Բ. ՀԱՆԳՐՈՒԱՆ 1-Ի ՅԱՂԹԱԿԱՆՆԵՐԸ ԿԸ ԿԱՏԱՐԵՆ ՔԱՌՈՐԴ ԱՒԱՐՏԱԿԱՆԻ ՄՐՑՈՒՄՆԵՐ)**  
 Աւօ Մուկնիճեան - Վահէ Թաշճեան  
 Հրաչ Ճաւատեան - Արթին Մերտինեան  
 Միշէլ Տէր Գէորգեան - Յարութ Ղազարեան  
 Յակոբ Պէրպէրեան - Էրիք Շահնազարի

**5-6-ՐԴ ԴԻՐՔԵՐՈՒ ՃՇԴՈՒՄԻ ՄՐՑՈՒՄՆԵՐ**  
 Վահէ Թաշճեան - Միշէլ Տէր Գէորգեան  
 Էրիք Շահնազարի - Հրաչ Ճաւատեան

**3-4-ՐԴ ԴԻՐՔԵՐՈՒ ՃՇԴՈՒՄԻ ՄՐՑՈՒՄՆԵՐ**  
 Միշէլ Տէր Գէորգեան - Հրաչ Ճաւատեան

**Գ. ՀԱՆԳՐՈՒԱՆԻ ՄՐՑՈՒՄՆԵՐ 2**  
**(Բ. ՀԱՆԳՐՈՒԱՆԻ 2-Ի ՅԱՂԹԱԿԱՆՆԵՐԸ Բ. ՀԱՆԳՐՈՒԱՆ 1-Ի ՊԱՐՏՈՒՈՂՆԵՐՈՒՆ ԴԷՄ)**  
 Սերժ Տաքէսեան - Շահան Նաճարեան  
 Գէորգ Արապաղլեան - Հրակ Կիւրիւնլեան  
 Նարեկ Փանոսեան - Ակուսթին Զաքեան  
 Հայկ Սարգսեան - Հայկ Արպէլեան  
 Բաֆֆի Ռաճոյեան - Արմէն Եղիայեան  
 Վարազ Կէօղիւպէօյլեան - Մորիս Տէմիրճեան  
 Յէտէրիք Տօնիկեան - Արէն Տաքէսեան  
 Արտակ Ասատուրեան - Միսաք Պարսուժեան

**ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԱՍԱՒՈՐՈՒՄ**  
 1. Աւօ Մուկնիճեան (Լիբանան)  
 2. Յակոբ Պէրպէրեան (Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.)  
 3. Հրաչ Ճաւատեան (Արեւմտեան Մ. Ն.)

**ԶՈՅԳ ՏՂՈՑ ՄՐՑՈՒՄՆԵՐ**  
 Հրաչ Ճաւատեան եւ Էրիք Շահնազարի - Շահան Նաճարեան եւ Գէորգ Արապաղլեան  
 Հրակ Կիւրիւնլեան եւ Վարազ Կէօղիւպէօյլեան - Շանթ Քիլիճեան եւ Բաֆֆի Ռաճոյեան  
 Միսաք Պարսուժեան եւ Արտակ Ասատուրեան - Յարութ Ղազարեան եւ Արմէն Եղիայեան

**Գ. ՀԱՆԳՐՈՒԱՆԻ ՄՐՑՈՒՄՆԵՐ 1-Ի ՅԱՂԹԱԿԱՆՆԵՐԸ ԿԸ ԿԱՏԱՐԵՆ ԿԻՍԱՒԱՐՏԱԿԱՆ ՄՐՑՈՒՄՆԵՐ**  
 Աւօ Մուկնիճեան - Հրաչ Ճաւատեան  
 Յակոբ Պէրպէրեան - Միշէլ Տէր Գէորգեան

**ԱՒԱՐՏԱԿԱՆ ՄՐՑՈՒՄ**  
 Աւօ Մուկնիճեան - Յակոբ Պէրպէրեան

**Գ. ՀԱՆԳՐՈՒԱՆ ՄՐՑՈՒՄՆԵՐ 2-Ի ՅԱՂԹԱԿԱՆՆԵՐԸ ԿԸ ՄՐՑԻՆ ԻՐԱՐՈՒ ԴԷՄ**  
 Սերժ Տաքէսեան - Հրակ Կիւրիւնլեան  
 Նարեկ Փանոսեան - Հայկ Սարգսեան  
 Արմէն Եղիայեան - Մորիս Տէմիրճեան  
 Յէտէրիք Տօնիկեան - Միսաք Պարսուժեան





Աւօ Մօւնջօղլեան եւ Նարեկ Փանոսեան - Արման Նաճարեան եւ Մարք Պաթանեան

**ԿԻՍԱԿԱՐՏԱԿԱՆ ՄՐՑՈՒՄՆԵՐ**

Հրաչ Ճաւատեան եւ Էրիք Շահնազարի - Հրակ Կիւրիւնլեան եւ Վարազ Կէօզիւպէօյլուքեան

Աւօ Մօւնջօղլեան եւ Նարեկ Փանոսեան - Միսաք Պարսումեան եւ Արտակ Ասատուրեան

**3-4ՐԴ ԴԻՐՔԻ ՃՇԴՈՒՄԻ ՄՐՑՈՒՄ**

Միսաք Պարսումեան եւ Արտակ Ասատուրեան - Հրակ Կիւրիւնլեան եւ Վարազ Կէօզիւպէօյլուքեան



**ԱԿԱՐՏԱԿԱՆ**

Հրաչ Ճաւատեան եւ Էրիք Շահնազարի - Աւօ Մօւնջօղլեան եւ Նարեկ Փանոսեան

**ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԱՍԱԻՈՐՈՒՄ**

1. Հրաչ Ճաւատեան (Լիբանան) եւ Էրիք Շահնազարի (Արեւմտեան Մ.Ն.)

2. Աւօ Մօւնջօղլեան (Լիբանան) եւ Նարեկ Փանոսեան (Լիբանան)

3. Միսաք Պարսումեան (Լիբանան) եւ Արտակ Ասատուրեան (Լիբանան)

**ԱՂՋԻԿՆԵՐ**

Աղջկանց մրցումներուն, գլխաւոր «աստղ»ը հանդիսացաւ փինկ-փոնկի Լիբանանի խումբի մարզիչ եւ մարզիկ Լարա Քէչէպաշեան, որ շահեցաւ փինկ-փոնկի առաջնութիւնը եւ արժանացաւ մարզախաղերու փինկ-փոնկի լաւագոյն մարզիկի «Յովհաննէս Հինգլեան բաժակ»ին: Լոուի սաներէն Լոուի Եահնիեան, իր կարգին, հանդիսացաւ երրորդ:

Ստորեւ՝ աղջկանց մրցումներուն ընդհանուր արդիւնքները:

Լարա Քէչէպաշեան (Լիբանան) - Մինելի Տէր Գէորգեան (Հ.Մ.Ա.Կ.) 3-0

Լարա Քէչէպաշեան (Լիբանան) - Ֆլորենսիա Պողզալեան (Հարաւային Ամերիկա) 3-0

Լարա Քէչէպաշեան (Լիբանան) - Լոուի Եահնիեան (Լիբանան) 3-0

Լարա Քէչէպաշեան (Լիբանան) - Ալին Մազմանեան (Արեւմտեան Մ.Ն.) 3-0

Մինելի Տէր Գէորգեան - Լարա Քէչէպաշեան 0-3

Մինելի Տէր Գէորգեան - Ֆլորենսիա Պողզալեան 3-0

Մինելի Տէր Գէորգեան - Լոուի Եահնիեան 3-1

Մինելի Տէր Գէորգեան - Ալին Մազմանեան 3-0

Ֆլորենսիա Պողզալեան - Լարա Քէչէպաշեան 0-3  
Ֆլորենսիա Պողզալեան - Մինելի Տէր Գէորգեան 0-3  
Ֆլորենսիա Պողզալեան - Լոուի Եահնիեան 0-3  
Ֆլորենսիա Պողզալեան - Ալին Մազմանեան 0-3  
Լոուի Եահնիեան - Լարա Քէչէպաշեան 0-3  
Լոուի Եահնիեան - Մինելի Տէր Գէորգեան 1-3  
Լոուի Եահնիեան - Ֆլորենսիա Պողզալեան 3-0  
Լոուի Եահնիեան - Ալին Մազմանեան 3-0

Ալին Մազմանեան - Լարա Քէչէպաշեան 0-3  
Ալին Մազմանեան - Մինելի Տէր Գէորգեան 0-3  
Ալին Մազմանեան - Ֆլորենսիա Պողզալեան 3-0  
Ալին Մազմանեան - Լոուի Եահնիեան 0-3

**ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԱՍԱԻՈՐՈՒՄ**

- 1. Լարա Քէչէպաշեան (Լիբանան)
- 2. Մինելի Տէր Գէորգեան (Հ.Մ.Ա.Կ.)
- 3. Լոուի Եահնիեան (Լիբանան)



# Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ԹԵՆԻՍԸ Կ'ՈՒՆԵՆԱՅ ԻՐ ՆՈՐ ԱԽՈՅԵԱՆԸ ԷՏՄՈՆ ԱՅՆԷՃԵԱՆ



**Թ**ենիսը յարաբերաբար ուշ մուտք գործած է համա-Հ.Մ.-Ը.Մ.ական մարզախաղերու յայտագիրներուն մէջ: Չորս տարի առաջ, առաջին անգամ ըլլալով, տեղի ունեցան թենիսի տղոց ու աղջկանց մրցումներ, որոնց մասնակցեցան 7 շրջանէ 18 քոյր-եղբայրներ: Մրցումներու աւարտին, տղոց ու աղջկանց ախոյեան հանդիսացան եղբ. Վահագն Թոնաքանեան Գանատայէն եւ քոյր Դալար Մազլումեան Գահիրէէն:

Այս մարզախաղերուն, թենիսի մրցումներու մասնակիցներուն թիւը եղաւ նախորդէն աւելի, մեծ մասը սակայն տղաք: Չգալի էր աղջկանց կարելոր թիւի մը բացակայութիւնը մրցումներէն:

Մասնակիցները եկան 9 շրջանէ՝ հետեւեալ պատկերով.- Գահիրէ (2), Կիպրոս (1), Արեւելեան Մ. Ն. (1), Ֆրանս (1), Լիբանան (4), Հարաւային Ամերիկա (5), Արեւմտեան Մ. Ն. (5), Լոնտոն (1) եւ

Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.(3):  
Մրցումներու աւարտին, ընդհանուր դասաւորումը պարզեց հետեւեալ պատկերը.-

### ՏՂԱՔ

1. Էտմոնտ Այնէճեան (Կիպրոս)
  2. Ռուբէն Արզումանեան (Արեւմտեան Մ. Ն.)
  3. Վարդան Աւետիքեան (Հարաւային Ամերիկա)
- Հետեւաբար, թենիսի լաւագոյն մարզիկ ընտրուեցաւ եւ «Վարդան Բախշեան բաժակ»ին արժանացաւ Կիպրոսէն Էտմոն Այնէճեան:



### ԱՂՋԻԿՆԵՐ

Աղջկանց պարագային, մրցումներու ընդհանուր դասաւորումը պարզեց հետեւեալ պատկերը.-

1. Անժելինա Մկրտչեան (Արեւմտեան Մ. Ն.)
2. Լիլիթ Պարսամեան (Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.)
3. Նաթալի Գարկիլէէն (Արեւելեան Մ. Ն.)

Վերոյիշեալ արդիւնքներու լոյսին տակ, թենիսի տղոց ու աղջկանց խմբային դասաւորումը կատարուեցաւ հետեւեալ ձևով.-

1. Արեւմտեան Մ. Ն.
2. Կիպրոս
3. Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.



**ԹԵՆԻՍԻ ՏՂՈՑ  
ՀԱՄԱ-Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ  
ՆԱԽՈՐԴ ԱԽՈՅԵԱՆԸ  
2013- Վահագն Թոնաքանեան  
(Գանատա)**





*ՆԱԽՈՐԴ ՄԱՐԶԱԽԱՂԵՐՈՒ ԶԱԽՈՂՈՒԹԵՆԷՆ ԵՏՔ՝*

**Հ.Ա.Ս.Կ.-Հ.Ա.Ս.Կ. ՀՐԱՉԵԱՅ  
ՎԱՐԴԱՆԵԱՆԻ ՇՆՈՐՀԻ  
ԴԱՐՉԵԱՂ ՃԱՏՐԱԿԻ ԱԽՈՅԵԱՆ**



**Հ**ամա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզախաղերուն մէջ ճատրակը ունի 8 տարւան պատմութիւն: 2009-ին ան առաջին անգամ ըլլալով տեղ գտաւ մարզախաղերուն մէջ եւ յատկանշուեցաւ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի քոյր-եղբայրներու բացարձակ տիրապետութեամբ: Օրին, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ. «Հնձեց» բոլոր մրցումներուն համար նախատեսուած 6 մետալները՝ գրաւելով տղոց ու աղջկանց առաջին երեք դիրքերը:

Չորս տարի առաջ, Լիբանանէն Նաբեկ Նաճարեան մեծ անակնկալ մը ստեղծեց, երբ տիրացաւ ճատրակի տղոց առաջնութեան տիտղոսին: Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ. դուրս մնաց 2013-ի մրցումներու առաջին երեք դիրքերէն, թէեւ աղջկանց պարագային ան յաջողեցաւ տիրանալ առաջնութեան եւ երկրորդութեան տիտղոսներուն:

Այս մարզախաղերուն, ճատրակի մրցումներուն աղջիկները գրեթէ չմասնակցեցան: Միայն Լիբանանի չըջանը ներկայ եղաւ մէկ ներկայացուցիչով: Տղոց մրցումներուն մասնակցեցան 8 չըջանէ 25 ներկայացուցիչներ՝ հետեւեալ պատկերով.- Արեւելեան Մ. Ն. (1), Ֆրանս (2), Երուսաղէմ (2), Լիբանան (4), Հարաւային Ամերիկա (2), Աւստրալիա (1), Գանատա (1) եւ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ. (13):

Մրցումներու աւարտին, ընդհանուր դասաւորումը պարզեց հետեւեալ պատկերը.-

1. Հրաչեայ Վարդանեան (Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.) 6 կէտ
2. Ռազմիկ Առաքելեան (Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.) 6 կէտ
3. Հրայր Պրունսուզեան (Լիբանան) 5.5 կէտ
4. Իշխան Մեղքումեան (Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.) 5 կէտ
5. Մարտիկ Փիլոյեան (Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.) 5 կէտ

Հետեւաբար, ճատրակի մրցումներու լաւագոյն մարզիկ հռչակուեցաւ եւ «Գրիգոր Յակոբեան բաժակ»ին արժանացաւ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.էն եղբ. Հրաչեայ Վարդանեան:

Խմբային դասաւորման պարագային, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ. նկատուեցաւ առաջին, Լիբանան՝ երկրորդ, Երուսաղէմ՝ երրորդ:

**ՃԱՏՐԱԿԻ ՏՂՈՑ ՈՒ ԱՂՋԱԿՆՑ ԴԱՄԱ-Յ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ՆԱԽՈՐԴ ԱԽՈՅԵԱՆՆԵՐԸ**  
**2009- Դաւիթ Պուռնագեան (Հայաստան) Անահիտ Դաւթեան (Հայաստան)**  
**2013- Նարեկ Նաճարեան (Լիբանան) Շողեր Կովալսկայա (Հայաստան)**



# ՏԵՍԻԼՔԻ ՄԻՈՒԹԻՒՆԸ Հ.Մ.Ը.Մ.



(Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՏԵՆԱՊԵՏ ԵՂԲ. ԳԱՌՆԻԿ ՄԿՐՏԻՉԵԱՆԻ ԽՕՍԲԸ՝ ՀԱՄԱ-Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ 10-ՐԴ ՄԱՐԶԱԽԱՂԵՐՈՒ ԲԱՑՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ, ԵՐԵՒԱՆ)



**Տ**օն է այսօր Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքին համար: Հ.Մ.Ը.Մ.ին հետ տօնական ցնծութիւն կ'ապրի մեր յաւերժական մայրաքաղաք Երեւանը, որ սա պահուն կը հիւրընկալէ 19 երկիրներէ ժամանած աւելի քան 1000 մարզիկ-մարզիկուհիներ, մարզիչներ, իրաւարարներ եւ Հ.Մ.Ը.Մ.ական պատասխանատուներ:

Հ.Մ.Ը.Մ.ի պատմութեան մեծագոյն մարզախաղերն են, որ այսօր ընթացք կ'առնեն անկախ Հայաստանի դրօշին առաջնորդութեամբ, հայրենի պետութեան լայն աջակցութեամբ եւ Սփիւռքի նախարարութեան անվերապահ օժանդակութեամբ: Մարզախաղերը կը նախագահեն Սիտնիէին, բազմավաստակ Հ.Մ.Ը.Մ.ական Տէր եւ Տիկ. Սարգիս եւ Ալիս Տէր Պետրոսեաններ, որոնք իշխանական նուիրատուութեամբ մը կարելի կը դարձնեն այս մարզախաղերուն կազմակերպումը Հայաստանի մէջ:

Այս մարզախաղերուն, 10 օրեր շարունակ, մեր մարզիկ-մարզիկուհիները պիտի մրցին 9 մարզաձեւերու մէջ, պիտի

յաղթեն ու պարտուին, սակայն բոլորը պիտի շահին հայրենի հողին վրայ ըլլալու, հայրենիքով ապրելու եւ հայրենիքով զօրանալու մեծ ուժը:

Հայրենիքը պիտի վերագտնէ իր հարազատ գաւակները, իսկ գաւակները պիտի գտնեն ա՛յն հայրենիքը, որ Հ.Մ.Ը.Մ.ական իրենց դաստիարակութեամբ, իրենց մտքերուն եւ հոգիներուն մէջ է արդէն, իրենց ամէնօրեայ ապրումներուն եւ զգացումներուն մէջն է անպայման:

108 մասնաճիւղերու միութիւնն է Հ.Մ.Ը.Մ.ը: Ան ունի նման մարզախաղեր կազմակերպելու 100 տարուան կենսափորձ: Պոլսոյ ողիմպիականներէն մինչեւ Միջին Արեւելքի երբեմնի միջ-մասնաճիւղային խաղեր, հասնելու համար 1981-ին ընթացք առած այս մարզախաղերը Հ.Մ.Ը.Մ.ին ապահոված են հայ մարզական կեանքին յառաջատար միութիւնը ըլլալու իրաւունքը:

Այս մարզախաղերը ո՛չ միայն մեծագոյնն են Հ.Մ.Ը.Մ.ի պատմութեան մէջ, այլեւ՝ ամէնէն յիշատակելի են ցարդ կատարուած բոլոր մարզախաղերու շարքին, որովհետեւ այսօր,



այս 10-րդ մարզախաղերու բացումով, Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութիւնը բացումը կը կատարէ միութեան 100-ամեակի յօբելեանական տարուան:

Բացման այս հանդիսութեան ըսկսեալ եւ մինչեւ 2018 թուականի աւարտ, Հ.Մ.Ը.Մ. արժանավայել շուքով կը նշէ իր հիմնադրութեան 100-ամեակը, որ կը զուգադիպի Հայաստանի Առաջին Հանրապետութեան ստեղծման 100-ամեակին: Հ.Մ.Ը.Մ. եւ Առաջին Հանրապետութիւն հոգեհարազատներ են: Հ.Մ.Ը.Մ. 100 տարի կրած ու պահպանած է ազգային այն արժէքները, որոնք դարձնուած են Հայաստանի Առաջին Հանրապետութեամբ:

Հ.Մ.Ը.Մ-ի 100-ամեակի յօբելեանական տարին կը զուգադիպի նաեւ մեր սիրելի մայրաքաղաք Երեւանի հիմնադրութեան 2800-ամեակի եւ մայրաքաղաք հռչակման 100-ամեակի պանծալի թուականներուն: Այս առիթով, Հ.Մ.Ը.Մ-ի աշխարհասփիւռ 108 մասնաճիւղերը ներկայացնող 108 քաղաքներէն մեր սրտագին ողջոյնները կը բերենք մեր մայրաքաղաքին՝ յարատեւ վերելք եւ զարգացում մաղթելով անոր:

Յարգելիներ,

Հ.Մ.Ը.Մ-ի մարզական բանակը յառաջիկայ 10 օրերուն ազնիւ մրցակցութեան եւ արդար խաղի լաւագոյն օրինակները պիտի տայ մարզասէր մեր հանրութեան: Մեր տղաքն ու աղջիկները անհատական թէ խմբային իրենց յաջողութիւններով պիտի բարձրանան եւ իրենց հետ հայութիւնն է որ պիտի բարձրացնեն ամուր, պայծառ եւ չնչող Հայաստանի մը տեսիլքով:

Հ.Մ.Ը.Մ. տեսիլքներու հաւատացող միութիւնն է: 28 տարի համա-Հ.Մ.Ը.Մ-ական մարզախաղերը հայրենիքէն դուրս կատարելով, ան տեւական տեսիլք ունեցաւ այդ մարզախաղերը Հայաստանի մէջ կատարելու: Այսօր, արդէն 3-րդ անգամն է, որ այդ մարզախաղերը կը կատարուին Հայաստանի մէջ, 2009-ի եւ 2013-ի յաջող փորձառութիւններէն ետք: Հ.Մ.Ը.Մ-ի



տեսիլքն է, որ այս մարզախաղերը մօտալուտ ապագային կատարուին աւելի՛ հզօր ու աւելի՛ բարգաւաճ Հայաստանի մը մէջ:

Հայաստան մը, որ հպարտանայ մեր յաջողութիւններով:  
 Հայաստան մը, որ զօրանայ մեր իրագործումներով:  
 Հայաստան մը, որ ըլլայ բոլորիս Հայաստանը:  
 Կեցցէ՛ ազատ ու անկախ Հայաստանը:  
 Կեցցէ՛ Հ.Մ.Ը.Մ-ը եւ կեցցեն համա-Հ.Մ.Ը.Մ-ական 10-րդ մարզախաղերը:

Իսկ այժմ, յանուն 26 հազար անդամներ գլխաւորող Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան, պատմական այս պահուն, բացուած կը յայտարարեմ միութեան համա-Հ.Մ.Ը.Մ-ական 10-րդ մարզախաղերը եւ յաջողութիւն կը մաղթեմ բոլոր մասնակիցներուն:

Յառա՛ջ, Հ.Մ.Ը.Մ., յառա՛ջ անաստան, յառա՛ջ անդեղեւ,  
 Յառա՛ջ, պատուաբեր անցեալէն՝ յաղթական ապագայ,  
 Յառա՛ջ դէպի նոր հարիւրամեակ:





**Ա**յսօր, հաւաքուած ենք համա-Հ.Մ.Ը.Մ.ական 10-րդ մարզախաղերուն հանդիսաւոր փակումը կատարելու:

Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան 100-ամեակին նը-ւիրուած այս մարզախաղերը տարբեր էին իրենց տարողութեամբ եւ որակով:

21 շրջաններէ ժամանած մարզիկներու եւ պատասխանատուներու աննախընթաց 1250 թիւը, մասնաճիւղերու վարչութիւններու ցուցաբերած լայն աջակցութիւնը, տեղական թէ՛ այլ մամուլի եւ պատկերասփիւռի կայաններու ցուցաբերած մեծ հետաքրքրութիւնը, ինչպէս նաեւ՝ հայրենի պետական ու պաշտօնական մարմիններու եւ բազմաթիւ նախարարութիւններու ցուցաբերած գործակցութիւնը ցոյց կու տան բոլորին գուրգուրանքը, սէրն ու յարգանքը 100 տարեկան, բայց միշտ երիտասարդ Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան հանդէպ:

Մարզախաղերու իրականացման յաղթանակը կարելի եղաւ իրականացնել շնորհիւ կարգ մը Հ.Մ.Ը.Մ.ականներու անձնուէր աջակցութեան:

Մեր խորին շնորհակալութիւնը կ'ուզենք յայտնել մարզախաղերուն նախագահութիւնը ստանձնած տէր եւ տիկին եղբ. Սարգիս եւ քոյր Ալիս Տէր Պետրոսեաններուն, որոնք իրենց իշխանական նուիրատուութեամբ կարելի դարձուցին համա-Հ.Մ.Ը.Մ.ական 10-րդ մարզախաղերուն իրականացումը այս մեծ տարողութեամբ:

Մեր խորին շնորհակալութիւնը նաեւ այն բոլոր Հ.Մ.Ը.Մ.ականներուն, որոնք ստանձնեցին մեր գլխաւոր բաժակներուն հովանաւորութիւնը՝

- Եղբ. Հրաչ եւ քոյր Էլիզապէթ Միսեռեանին,
- Տէր եւ տիկին Արա եւ Վերա Տէօլէթեանին,
- Եղբ. Ժիրայր Սարգիսեանին,
- Եղբ. Ալպէրթ եւ քոյր Սոնա Շահինեանին,
- Եղբ. Վիգէն եւ քոյր Տորին Տագէսեանին,
- Եղբ. Ատոմ եւ քոյր Սելլա Թնճուկեանին,
- Եղբ. Յարութիւն Ստամպուլիին եւ տղոց՝ Յակոբին, Բաֆֆին եւ Շանթին,

- Տէր եւ տիկին Ալէն եւ Հուրի Ուքարին,

- Եղբ. Ժան եւ քոյր Գարմէն Աբգարեանին,

Մեր շնորհակալութիւնը կ'ուզենք յայտնել նաեւ այն անհատներուն եւ հաստատութիւններուն, որոնք օժանդակեցին կամ ծանուցումներ տրամադրեցին այս մարզախաղերուն:

Այս մարզախաղերը չէին յաջողեր, եթէ անոնց ետին չըլլային մեծ թիւով կամաւորներ: Այդ կամաւորները մարզախաղերու







## **ԴԷՊԻ ՆՈՐ ՀԱՐԻՐԱՄԵԱԿ՝ ԽԱՆԴԱՎԱՌ ՈՒ ՀԱՍՏԱՏ ՔԱՅԼԵՐՈՎ**

**(Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՁՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄ  
ԵՂԲ. ԻՇԽԱՆ ԵՂԻԱՅԵԱՆԻ ԽՕՍՔԸ՝ ՀԱՄԱ-Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ  
10-ՐԴ ՄԱՐՁԱԽԱՂԵՐՈՒ ՓԱԿՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ)**

կազմակերպիչ յանձնախումբն են, պատասխանատուներն են, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի սկաուտներն ու վարչութեան անդամներն են, ինչպէս նաեւ՝ բոլոր խումբերու եւ պատուիրակութիւններու պատասխանատուներն են:

*Սիրելիներ,*

Այս մարզախաղերը իրարու մօտեցուցին հարիւրաւոր երիտասարդներ, Հ.Մ.Ը.Մ.ական մարզիկ-մարզիկուհիներ: 10 օրերու ընթացքին բոլորը իրարու մօտեցան եւ, աւելին, անոնք

հայրենիքին մօտեցան, հայրենիքի օդը շնչեցին եւ հողը զգացին:

Այս մարզախաղերը ինքնանպատակ չէին եւ պիտի չըլլան: 100 տարիներ առաջ, Հայաստանի կրթութեան նախարար Նիկոլ Աղբալեան Պոլիսէն Հայաստան հրաւիրեց Հ.Մ.Ը.Մ.ի օրուան պատասխանատուները, որպէսզի միութեանական գործունէութիւն ունենան անոնք: Այսօր, նոյն գործը կը շարունակուի, աւելի մեծ, աւելի լայնածաւալ թափով եւ հաւատքով:

100 տարիներ առաջ, ազգային հերոս, անզուգական ղեկավար՝ Գարեգին Նժդէհ նորանկախ հայրենիքի երիտասարդութեան իր արտասանած խօսքին մէջ կ'ըսէր. «Քանի ղեռ կայ հայրենիքի պաշտպանութեան հարկադրանքը, մարմնամարզը կը մնայ զօրաւոր եւ թրծուած սերունդների գոյութեան անհրաժեշտութիւնը... նրա միջոցով ազգերը ձգնում են ստեղծել կորովի, քաջ եւ հայրենասէր երիտասարդութիւն»:

Ահա այդ կորովի, քաջ, պարկեշտ եւ հայրենասէր երիտասարդութեան պահպան Հ.Մ.Ը.Մ.ն է, որ այսօր հոս կը տեսնէք: Այդ նոյն սկզբունքներով է, որ նոր հարիւրամեակ կ'ուղղուինք աւելի խանդավառ, աւելի հաստատ, միշտ հաւատարմով Հ.Մ.Ը.Մ.ի նշանաբանին՝ «Բարձրացի՛ր-բարձրացուր»ին:



# ՏԱԼԸ ՆՈՒՒՐԱԿԱՆ ԲԱՆ Է ԵՒ ԵՍ ՊԱՏՐԱՍ ԵՄ ՄԻՆՉԵՒ ԿԵԱՆՔԻՍ ՎԵՐՁ ԱԶԳԻՍ ՈՒ Հ.Մ.Ը.Մ.ԻՆ ՏԱԼՈՒ



**«ՄԱՐԶԻԿ» ԻՆ Կ' ԸՍԷ ՀԱՄԱ-Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ 10-ՐԴ ՄԱՐԶԱԽԱՂԵՐՈՒ ՆԱԽԱԳԱՀ ԵՂԲ. ՍԱՐԳԻՍ ՏԷՐ ՊԵՏՐՈՍԵԱՆ**

**Ո՛վ է համա-Հ.Մ.Ը.Մ.ական 10-րդ մարզախաղերու նախագահ եղբ. Սարգիս Տէր Պետրոսեանը. Ի՞նչպէս կը ծանօթացնէք դուք ձեզ:**

-Եղբ. Սարգիս Տէր Պետրոսեանը համա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզախաղերու նախագահը ըլլալէ առաջ, 70 տարուան Հ.Մ.Ը.Մ.ական է, որ իր ամբողջ կեանքը անցուցած է այս միութեան մէջ՝ Աղեքսանդրիայէն մինչեւ Սիտնի: Հ.Մ.Ը.Մ.ական եմ, հպարտ եմ որ Հ.Մ.Ը.Մ.ական եմ: Զաւակներս ալ Հ.Մ.Ը.Մ.ի մէջ մեծցած ու գործած են:

**Թեան եւ պատանեկութեան օրերէն:**

-Ես ծնած եմ Աղեքսանդրիա, 1940-ին: Յաճախած եմ Ազգ. Պօղոսեան Վարժարան, ուր հասակ առած եմ աննման ուսուցիչներու շունչին տակ: Նախակրթարանը ավարտելէ ետք՝ յաճախած եմ օտար քոլէճ: Հօրս հիւանդութիւնը պատճառ դարձած է, որ քոլէճը կիսատ ձգեմ եւ անցնիմ Սէնթ Ճորճ Գոմըրըլ Գոլէճ: Փափաքս էր դեղագործ ըլլալ, բայց կեանքի պայմանները այնպէս մը բերին, որ հաշուապահ եղայ: Հօրս գործը շարունակեցի մինչեւ Աղեքսանդրիայէն հեռանալս՝ 1964:

**Սկսինք Աղեքսանդրիայէն: Ի՞նչ կը յիշէք ձեր մանկու-**

**Ե՛րբ եւ ի՞նչպէս Հ.Մ.Ը.Մ.ական եղած էք:**



-Հ.Մ.Ը.Մ. մուտք գործած եմ եօթը տարեկանիս: Աղեքսանդրիոյ մէջ, Հ.Մ.Ը.Մ.ի ակումբը փակած էր Ազգ. Պօղոսեան Վարժարանին: Երբ դպրոցէն կ'արձակուէինք, աշակերտութեան երեք չորրորդը կ'ուղղուէր Հ.Մ.Ը.Մ.: Այդ ժամանակ ակումբը կը կոչուէր «Կամք»: Հետագային, 1974-ին, երբ Հ.Մ.Ը.Մ. համագաղութային կազմակերպութիւնն դարձաւ եւ «Կամք»ը անոր միացաւ՝ կոչուեցաւ Հ.Մ.Ը.Մ.-«Կամք»:

**Որո՞նք կը յիշէք Հ.Մ.Ը.Մ.ի այդ օրւան պատասխանատուներէն:**

-Ես մաս կազմած եմ Հ.Մ.Ը.Մ.ի սկստական շարքերուն: Մեր ընդհանուր խմբապետը եղբ. Վահան Գաւուքճեանն էր: Կար աւելի երիտասարդ եղբ. Յարութիւն Մաթէոսեանը, որ վերջերս մահացաւ: Ունէինք եղբ. Գրիգոր Մալեգ-

եանը, որ մեր խմբապետն էր: Կ'արժէ յիշել իմ առաջին Աքելլաս, որ տակաւին ողջ է եւ Գանատա կ'ապրի, եղբւ. Արթօ Մարգարեանը: Հիմա 85-էն վեր տարիք պէտք է ունենայ:

**Բացի Հ.Մ.Ը.Մ-էն, ազգային կեանքին որեւէ այլ մասնակցութիւն ունեցա՞՞ծ էք:**

-Հ.Մ.Ը.Մ-ին ծառայեցի իբրեւ սկաուտ եւ պասքեթպոլի մարզիկ: Միաժամանակ, անդամակցեցայ «Յուսաբեր»ին (Հ.Յ.Դ-ի տեղական կառոյցը): Եղայ երիտասարդաց մարմնի վարիչ: 1957-ին անցայ Հ.Յ.Դ. շարքեր եւ մինչեւ օրս կը մնամ հաւատաւոր Դաշնակցական եւ Հ.Մ.Ը.Մ-ական: Պատանեկանի վարիչս Գառնիկ Համբարձումեանն էր, իսկ երիտասարդականի վարիչս՝ Խաչիկ Յակոբեանը: Պատանեկանի ղեւանի անդամ էր Արմէն Գարօ Կէօնճեանը:

Այդ օրերուն Եգիպտոսի մէջ կը գործէին Դաշնակցական ակնառու դէմքեր, որոնց չունէին տակ հասակ առինք մենք: Մեր պատանեկութեան եւ երիտասարդութեան օրերուն կային Վահան Նաւասարդեանը, Գաբրիէլ Լազեանը, տղքթ. Երուանդ Խաթանասեանը, Բիւզանդ Չէքիճեանը (որ տնօրէնս եղած է), Հ.Յ.Դ-ի «կնքահայրս»՝ մեթր Օննիկ Մաճառեանը եւ ուրիշներ:

**Աղքատադրիայէն ետք ձեր յաջորդ կայքը եղաւ Սիտնի: Ե՞րբ հասաք Աւստրալիա եւ ի՞նչ կը յիշէք 1960-ական տարիներու Սիտնիի ազգային կեանքէն:**

-Սիտնի հասանք 1964-ին, երբ միութիւններ եւ ազգային կեանք ընդհանրապէս գոյութիւն չունէր գաղութին մէջ: Հայտնեան միակ հաւաքավայրը քաղաքին կեդրոնը գտնուող Ս. Յարութիւն եկեղեցին էր, որ շատ փոքր էր եւ հազիւ 100 հոգի կրնար ընդունիլ: Ինչպէս ամէն տեղ, հոս եւս ազգային կեանք



քը սկսաւ զարգանալ եկեղեցւոյ շուրջ: Քանի մը տարի ետք, եկեղեցւոյ թաղին մէջ հիմնուեցան Հ.Մ.Ը.Մ-ի եւ Համազգայինի մասնաճիւղերը: Սկիզբը ամէնօրեայ դպրոց գոյութիւն չունէր: Կիրակի օրերը տուն առ տուն կը դառնայինք, երախաները կը հաւաքէինք, որպէսզի անոնց հայերէն սորվեցնենք:

**Որո՞նք են այդ սկզբնական տարիներու Հ.Մ.Ը.Մ-ականները:**

-Այդ տարիներուն Սիտնի էին էտի Մեծմայեանը Գահիրէ-էն, Յովհաննէս Մարտոյեանը Ամմանէն, Պերճ Մոմճեանը, Վազգէն Փայլակեանը եւ ուրիշներ: Առաջին վարչականներէն կը յիշեմ եղբւ. Հէքիմեանը: Ունեցած ենք եղբւ. Յակոբ Քոչեանը, Լեւոն Աբօշեանը եւ ուրիշներ:

Արեւելեան Սիտնիի մէջ, հոն ուր կը բնակէի ես, Հ.Մ.Ը.Մ-ի մասնաճիւղ հիմնուեցաւ Նոյեմբեր 1981-ին: Ես եղայ մասնաճիւղին առաջին վարչութեան ատենապետը եւ կը յիշեմ, օրին, Հ.Մ.Ը.Մ-ի դրօշը ստանձնեցի Աւստրալիոյ Շրջանային Վարչութեան ատենապետ եղբւ. Վազգէն Փայլակեանէն: Ինծի հետ մասնաճիւղի առաջին վարչութեան մաս կազմեցին եղբայրներ Կարօ Քիրիշեան, Յարութ Հինդլեան, Կարպիս Նիկողոսեան, Երեմ Շահինեան, Յակոբ Տէր Պետրոսեան եւ Արմանտօ Ֆերհատեան:

Այդ օրերուն, Աւստրալիոյ մասնաճիւղերը անուններ չունէին: Անուններ ստացան աւելի ուշ եւ կոչուեցան «Կամք», «Նաւասարդ», «Անդրանիկ», «Արարատ» եւ «Արաքս»:

Յայտնեմ, որ ժամանակի ընթացքին Սիտնիի արեւելեան շրջանի հայտնութիւնը տեղափոխուեցաւ հիւսիս եւ «Կամք» մասնաճիւղը պարզեց կազմաւոյժ վիճակ: «Կամք»ի տղաքը գացին եւ մաս կազմեցին հիւսիսային Սիտնիի «Անդրանիկ» մասնաճիւղին: Այսօր, «Անդրանիկ»ի ղեկավար տղոց մեծ մասը



«Կամք»ի նախկին անդամներ են: Երբեմնի «Կամք» մասնաճիւղը, որ մինչեւ 165 անդամ կը հաշուէր, այսօր անուանական գոյութիւն ունի միայն:

**Որքան ծանօթ ենք, դուք մաս կազմած էք նաեւ Աւստրալիոյ Երջանային Վարչութեան:**

-Այո՛, 1994-1996, երկու տարի մաս կազմած եմ Հ.Մ.-Լ.Մ.-ի Աւստրալիոյ Երջանային Վարչութեան, որմէ ետք վերադարձած եմ մասնաճիւղս եւ դարձեալ ընտրուած եմ վարչական, մինչեւ 1999, երբ Հ.Մ.-Լ.Մ.-ի 7-րդ Պատգամաւորական Ժողովին ընտրուեցայ Կեդրոնական Վարչութեան անդամ եւ այնուհետեւ երկու քառամեակ՝ 1999-2003 եւ 2003-2007 մաս կազմեցի միութեան ղեկավարութեան բարձրագոյն մարմինին, դառնալով առաջին ակտորայաճայը, որ մաս կը կազմէ մեր միութիւններէն որեւէ մէկուն (ՀՕՄ, Համագլխային, Հ.Մ.-Լ.Մ.) Կեդրոնական Վարչութեան անդամ:

Կեդրոնական Վարչութեան անդամակցութեանս շրջանին, Հ.Մ.-Լ.Մ.-ի կողմէ մաս կազմեցի համահայկական խաղերու համաշխարհային կոմիտէին: Այսօր, ես պատուոյ անդամ եմ այդ կոմիտէին մէջ: Ըսեմ նաեւ, որ երեք տարիէ կը վարեմ Աւստրալիոյ եւ Նոր Զելանտայի թեմական խորհուրդին ատենապետութիւնը:

**Իբրեւ 70 տարուան Հ.Մ.-Լ.Մ.-ական, ի՞նչպէս կը ներկայացնէք այս միութիւնը մեր նորահաս սերունդին:**

-Հ.Մ.-Լ.Մ.-ը Աստուածային գաղտնիք մը ունի իր մէջ: Իր հզօրութիւնը, յարատեւութիւնը եւ միշտ երիտասարդ մնալը ան կը պարտի իր յաջորդական ղեկավարներուն, որոնք գիտցած են ինչպէ՛ս ազգային ոգի փոխանցել միութեան շարքերուն: Այդ ղեկավարները, առաջին ու երկրորդ սերունդը, Յեղասպանութենէն փրկուած տղաքն ու աղջիկները մէջտեղ չձգեցին, անտէր ու անպաշտպան չձգեցին: Արդէն Հ.Մ.-Լ.Մ.-ի կոչումն ալ այդ է՝ տէր ըլլալ մեր պատանիներուն եւ երիտասարդներուն, մարզանքի եւ սկստութեան ճամբով սերունդ կրթել, մեծցնել, հայ պահել եւ հայութեան ապագայ վարիչներ հասցնել: 1918-ին նոյնը չըրի՞նք Հ.Մ.-Լ.Մ.-ի հիմնադիրները, երբ անոնք հաւաքեցին 1915-ի որբերը եւ անոնցմէ գիտակից, առողջ եւ հայրենասէր տղաք ու աղջիկներ կերտեցին:

Հ.Մ.-Լ.Մ.-ի գաղտնիքը հեռուները մի՛ փնտռէք: Հ.Մ.-Լ.Մ.-ի գաղտնիքը գնդակին մէջն է, ֆութպոլի կամ պասքէթպոլի գնդակին: Մեր երախաներուն առջեւ գնդակ նետեցէք եւ տեսէք, թէ ինչպէ՛ս անոնք Հ.Մ.-Լ.Մ.-ի շարքերէն ներս կը ներգրուակէք:

Գիտեմ, հիմա սերունդ ներգրուելը ու մանաւանդ պահելը այդքան ալ դիւրին չէ: Ամէն ժամանակ ունեցած է իր ձեւերը եւ միջոցները: Միութեան 100-ամեակէն ետք, կը կարծեմ, որ պատասխանատուներու գործը աւելի պիտի դժուարանայ,



որովհետեւ այսօրուան եւ վաղուան սերունդը իր շուրջը այնքան քաջողական բան ունի, որ դիւրին չէ գայն ակումբի կապելը, անոր միութենական դաստիարակութիւն ջամբելը, նկարագրի ու կազմաւորում տալը: Բայց ես վստահ եմ, որ ինչպէս մեր նախորդները, նաեւ այսօրուան եւ վաղուան մեր պատասխանատուները յարմար միջոցները պիտի գտնեն այս հարցին լուծում ապահովելու համար: Լեզուն ոմանց համար կրնայ հարց ըլլալ, բայց ինծի համար հարց չէ: Եթէ մեր տղաքը օտար լեզու կը խօսին, բայց հայկական ոգի ունին, հարց չկայ անոր մէջ: Կարեւորը հայ մեծնալն է, հայկական զգացումներով մեծնալն է, լեզուն երկրորդական է ինծի համար: Շատ տեսած եմ տղաք, որոնք օտար լեզու կը խօսին, բայց երբ իրենց հայկականութեան դպչիս կ'ըմբոստանան: Կ'ուզեմ որ ըմբոստ ըլլան մեր տղաքը:

Ես լաւատես եմ այսօրուան սերունդով, որովհետեւ նոր սերունդը մեզմէ աւելի լաւ ուսում ունի, շրջապատին աւելի ծանօթ է եւ օրուան նորութիւններուն հետ քայլ կը պահէ: Երբ բան մը փոխանցուի իրեն՝ շատ շուտ կ'ըմբռնէ եւ դիւրութեամբ գլուխ կրնայ հանել ամէն գործ:

**Իբրեւ համա-Հ.Մ.-Լ.Մ.-ական 10-րդ մարզախաղերու նախագահ, տալը, նուիրելը ի՞նչ նշանակութիւն ունի ձեզի համար:**

-Տալը շնորհք մըն է, գոր ամէն մարդ չունի: Երանի՛ բարձր ըլլայ տոկոսը տուողներուն, որովհետեւ երբ կու տաս Աստուած անպայման կը հատուցէ քեզ: Մենք անիմաստ բաներու չենք տար, մենք կու տանք, որպէսզի մեր երիտասարդները հայ պահենք: Իբրեւ Հ.Մ.-Լ.Մ.-ական, ո՛չ ես, ո՛չ ալ որեւէ պատասխանատու, այս միութենէն գումար կը գանձէ, ինչ որ կ'ընենք նուիրումով կ'ընենք: Տալը նուիրական բան է: Նուիրումի, տալու գնահատանքը ունեցող Հ.Մ.-Լ.Մ.-ը կ'արժէ որ իր ունեցածէն անպայման բաժին հանէ իր ազգին ու Հ.Մ.-Լ.Մ.-ին: Այս իմաստով, ես միշտ տուած եմ եւ մինչեւ կեանքիս վերջը պիտի շարունակեմ տալ: Կը մաղթեմ, որ ամէն հայ ինծի նման մտածէ:

Ես միայն նիւթականս չէ, որ տուած եմ Հ.Մ.-Լ.Մ.-ին, այլ նաեւ՝ նոյնքան թանկագին գաւազներս: Տղաս Հ.Մ.-Լ.Մ.-ական սկստ, մարզիկ եւ վարչական եղած է, աղջիկս ալ արեւոյժ եւ պասքէթպոլի մարզիկ եղած է: Փափաքս է, որ իմ օրինակս վարակիչ ըլլայ մեր բոլոր ծնողներուն եւ անոնք չվարանին իրենց գաւազները առաջնորդելու Հ.Մ.-Լ.Մ.-:

**Իսկ վերջին հարցում մըն ալ, ի՞նչպէս յաջողած էք ձեր մարզը հայերէնը պահել:**

-Ես ընթերցասէր մարդ եմ ու մի՛ մոռնաք, որ Ազգային Պօղոսեան Վարժարանի շրջանաւարտ եմ...:



ԱՆՊՆԵՐՍ ՈՒ ԵՄ





## ՀԱՄԱ-Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ 10-ՐԴ ՄԱՐԶԱԽԱՂԵՐՈՒ ԼԱԻԱԳՈՅՆ ՄԱՐԶԻԿՆԵՐՆ ՈՒ ՄԱՐԶԻԿՈՒՀԻՆԵՐԸ



Պասքեթպոլի երեց տղոց լաւագոյն մարզիկ («Վարդգէս Ալախատոյեան բաժակ»)- եղբ. Արամ Թարգիպաշեան, Արեւմտեան Մ. Ն.:



Պասքեթպոլի կրտսեր տղոց լաւագոյն մարզիկ («Դանիէլ Դանիէլեան բաժակ»)- եղբ. Ալէքս Իսկէնտերեան, Արեւմտեան Մ. Ն.:



Պասքեթպոլի երեց աղջկանց լաւագոյն մարզիկ («Վահրամ Դանիէլեան բաժակ»)- քոյր Սոֆիա Տէմիրճեան, Զ.Մ.Ը.Մ.-Զ.Ա.-Ս.Կ.:



Պասքեթպոլի կրտսեր աղջկանց լաւագոյն մարզիկ («Սիւսաննոօ Կարապետեան բաժակ»)- քոյր Ալին Օվաննէսեան, Արեւմտեան Մ. Ն.:



Աթլէթի տղոց լաւագոյն մարզիկ («Քիւզանդ Թորիկեան բաժակ»)- եղբ. Սերժ Զոլաքեան, Լիբանան:



Աթլէթի աղջկանց լաւագոյն մարզիկ («Վահան Զերազ բաժակ»)- քոյր Լոռի Թաշճեան, Լիբանան:



Լողի տղոց լաւագոյն մարզիկ («Շաւարշ Քրիսեան բաժակ»)- եղբ. Սեւան Ղարապէտի, Զ.Մ.Ա.Կ.:



Լողի աղջկանց լաւագոյն մարզիկ («Տիգրան Ոսկունի բաժակ»)- քոյր Մարի Սոմաքեան-ճիրճիու, Կիպրոս:



Համա-Հ.Ս.Ը.Մ.ական 10-րդ մարզախաղերու աւարտին ընտրուեցան իւրաքանչիւր մարզածէի լաւագոյն մարզիկն ու մարզիկուհին, որոնք արժանացան վաստակաշատ միութեանականի մը անունը կրող յուշանուէրի՝ տրամադրուած Հ.Ս.Ը.Մ.ի Կերդոնական Վարչութեան



ճախկին անդամ եղբ. Հրաչ Սիսեռեանի կողմէ:

Ստորեւ՝ յուշանուէրներու արժանացած մարզիկ-մարզիկուհիները. -



Ֆութպոլի լաւագոյն մարզիկ («Վիզէն Զաքարեան բաժակ»)- եղբ. Տիրան Պէպերեան, Արեւմտեան Մ. Ն.:



Վոլիպոլի աղջկանց լաւագոյն մարզիկ («Յովհաննէս Պայթարեան բաժակ»)- քոյր Անի Ստեփանեան, Հ.Ս.Ը.Մ.-Հ.Ա.-Ս.Կ.:



Թենիսի լաւագոյն մարզիկ («Վարդան Բախշեան բաժակ»)- եղբ. Էտնոն Այնէճեան, Կիպրոս:



Փինկ-փոնկի լաւագոյն մարզիկ («Յովհաննէս Հինդլեան բաժակ»)- քոյր Լարա Քէչէպաշեան, Լիբանան:



Ճատրակի տղոց լաւագոյն մարզիկ («Գրիգոր Յակոբեան բաժակ»)- եղբ. Հրաչեայ Վարդանեան, Հ.Ս.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.:



Ֆութսալի տղոց լաւագոյն մարզիկ («Նշան Թիսիւզեան բաժակ»)- եղբ. Աւօ Տոնպուրեան, Լիբանան:



Ֆութսալի աղջկանց լաւագոյն մարզիկ («Արմէն Տէրմէնճեան բաժակ»)- քոյր Պայծառ Ասատրեան, Հ.Ս.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.:



Համա-Հ.Ս.Ը.Մ.ական 10-րդ մարզախաղերու տիպար մարզիկ («Սիրան Շիմշիրեան բաժակ»)- եղբ. Քուինթ Քեմնից, Արեւմտեան Մ. Ն.:

ԻՐԵՆՑ ԱՆՈՒՆՈՎ ՄԱՐԶԱԽԱՂԵՐՈՒ ԼԱԻԱԳՈՅՆ  
ՄԱՐԶԻԿ-ՄԱՐԶԻԿՈՒ ՀԻՆԵՐՈՒՆ ԲԱԺԱԿՆԵՐ ՆՈՒԻՐԵԼՈՎ՝

# ՀԱՄԱ-Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ 10-ՐԴ ՄԱՐԶԱԽԱՂԵՐԸ ՎԵՐԱՊՐԵՑՈՒՑԻՆ ԲԱԶՄԱՎԱՍՏԱԿ 16 Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆՆԵՐՈՒ ՅԻՇԱՏԱԿԸ

**Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչության որոշումով եւ Կեդրոնական Վարչության նախկին անդամ եղբ. Հրաչ Մխեռեանի բարերարութեամբ, նախորդ մարզախաղերուն նման, այս մարզախաղերուն եւս յայտուկ բաժակներ նուիրուեցան իւրաքանչիւր մարզաշէի լաւագոյն մարզիկին ու մարզիկուհիին (ցանկը տեսնել էջ 116-117): Բաժակները կրեցին անունները միութեան վաստակաշար 16 անդամներու, որոնք կարեւոր հեղք ու դրոշմ չգած են անցնող 99 տարիներու պատմութեան մէջ: Ստորեւ՝ վաստակաշար եղբայրներու անունները, կենսագրական ամփոփ ծանօթութիւններով:**



## ՇԱԽԱՐԾ ՔՐԻՍԵԱՆ

Շաւարշ Քրիսեան ծնած է Պէշիկթաշ, 22 Յուլիս 1886-ին: Նախնական կրթութիւնը ստացած է նոյն թաղի Մաքրուհեան երկսեռ վարժարանը: 1897 Սեպտեմբեր 6-ին, եղբայրը գինք կ'ուղարկէ Պարտիզակ՝ Ամերիկեան Բարձրագոյն Վարժարան, իբրեւ գիշեր-

օթիկ: Հոնկէ կը փոխադրուի Ռոպէրթ Քոլէճ (Պոլիս), ուր իր մէջ կը ծնի մարզանքի հանդէպ բուռն սէր մը: Այնտեղ կը գտնէ նաեւ Գրիգոր Յակոբեանը, ապագայ յայտնի մարզիկը եւ ուրիշներ, որոնք ոչ միայն կը քաջաբերեն գինք, այլեւ՝ կը թելադրեն մարմնակրթական ասպարէզին նուիրուել ամբողջովին: Քրիսեան Յակոբեանի միջոցով յարաբերութեան մէջ կը մտնէ Փարիզի լիսէ Ժանսոնի անուանի վարիչ փրոֆ. Տեպոնէի հետ, թղթակցութեամբ հետեւելով մարմնակրթանքի անոր դասերուն: 1906-ին կը մեկնի Փարիզ, ուր յիշեալ ուսուցիչին դասընթացքներուն կը հետեւի վեց ամիս: Ապա, ընկերներուն օժանդակութեամբ կ'անցնի Լոնտոն, ուր կը մնայ երկու շաբաթէս տարի, իր ազատ ժամերուն հետեւելով մարզանքի: 1909-ին կը վերադառնայ Պոլիս:

Քրիսեան զանազան վարժարաններու մէջ կը ստանձնէ

մարզանքի ուսուցչութեան պաշտօններ, միաժամանակ աշխատելով որ թաղերու մէջ բացուին մարզարաններ: Ան կը ջանայ մարմնակրթութեան ճաշակը եւ սէրը տարածել հայ ժողովուրդի բոլոր խաւերուն եւ դասակարգերուն մէջ, իրեն խորհրդատու եւ գործակից ունենալով մարմնակրթանքի նուիրուած անձեր: Անոնց շնորհիւ է, որ Քրիսեան կը ձեռնարկէ «Մարմնամարզ»ի հրատարակութեան:

Թերթը կորիզ մըն էր: Ան կ'ըլլայ այդ կորիզին ամէնէն տենդոտ աշխատողներէն մէկը: Շարժումը սկսած էր, պէտք էր կազմակերպել եւ կանոնաւորել գայն: Քրիսեան կը շարունակէ ընթանալ որդեգրուած ճամբէն, առանց ընկրկելու:

Քրիսեան գործի կը ձեռնարկէ այնպիսի ժամանակի մը, երբ իր շուրջ չէին պակսեր բազուկի մարդեր: Գաղափարը կար, ինչպէս եւ գործը, սակայն, կղզիացած ձեւով: Իւրաքանչիւր մարզական խումբ, ինքն իր մէջ, իր խումբին համար էր: Ան կը յաջողի օգտուել գոյութիւն ունեցող ատաղձէն եւ մէկ տեղ հաւաքելով տարբեր ուղղութիւններով ուժերը, կը բերէ եւ իր «Մարմնամարզ» թերթին շուրջ կը համախմբէ գանոնք: Քրիսեան, 1911-ին, պարբերականին միջոցով կը քարոզէ հայ իզական սեռը եւս մարզել, եւ դպրոցներէ ներս մարզանքը պարտադիր դարձնել: Ան կ'առաջադրէ նաեւ մինչ այդ գոյութիւն ունեցող հայ մարզական միութիւններն ու ֆութբոլի խումբերը համադաշնակցութեան մը շուրջ հաւաքել:

1914-ին, Ա. Աշխարհամարտի աղէտալի օրերուն, Շաւարշ Քրիսեան կը դիմէ ֆրանսական հիւպատոսարան, ֆրանսա-





կան բանակին կամաւոր արձանագրուելու կ'ընդունուի, բայց հիւանդութեան մը պատճառով Պոլիսէն մեկնումը կ'ունենայ յապաղում մը, որ աճյաճան ճակատագրական հետեւանք կ'ունենայ: Բազմաթիւ մտաւորականներու հետ ան եւս կ'աքսորուի եւ Այաշի մէջ կը նահատակուի, հայ մարմնակրթական ընդհանուր միութիւն մը ստեղծելու իր երազը առանց իրականացնելու:

### ՅՈՎՀԱՆՆԷՍ ՀԻՆՂԵԱՆ

Պոլսոյ Նոր Դպրոցի հիմնադիր-տնօրէններէն, ծանօթ մանկավարժ Յովհաննէս Հինդլեան Հայոց մէջ մարմնակրթական ու մասնաւորապէս սկստական շարժումի գաղափարախօսներէն եղած է: Ան ծնած է 1866-ին, Սկիւտար: Նախակրթութիւնը կը ստանայ Ներսէսեան-Երմոնեան վարժարանը: Ապա կ'անցնի ժամանակի նշանաւոր մանկավարժ Ռեթէոս Պէրպէրեանի վարժարանը, զոր կ'աւարտէ յաջողութեամբ: Կը դասաւանդէ շարք մը վարժարաններու մէջ: Ըլլալով հմուտ դաստիարակ մը, ան մարմնակրթանքը կ'ըմբռնէ իբրեւ ազգակ մը հայ երիտասարդութեան բարոյական դաստիարակութեան: Ինքն է, որ Շաւարշ Քրիսեանի «Մարմնամարզ»ին մէջ սկստութեան էութիւնը կը պարզէ եւ Ա. Աշխարհամարտէն ետք անոր գաղափարախօսը կ'ըլլայ:



Հինդլեանի գրութիւնները, պրակներու վերածուած, գաւառի մէջ մղիչ ազգակները կ'ըլլան սկստական շարժումներու: 1913-ին, իր վարժարանին մէջ, ան կը կազմէ հայ առաջին սկստական խումբերէն մէկը: Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութենէն ետք, ան կը հանդիսանայ միութեան զլխաւոր գործակիցներէն: Մանկավարժի անվիճելի կարողութիւնը, հանրային դիրքը եւ բարոյական զօրաւոր անհատականութիւնը՝ միացած մարմնակրթական շարժումին ցոյց տուած իր անվերապահ աջակցութեան, ոչ միայն օգտակար կ'ըլլան նախապատերազմեան մարմնակրթական կեանքին, եւ պատերազմէն ետք՝ Հ.Մ.Ը.Մ.ին, այլեւ կը նպաստեն անոնց վայելած հանրային համակրանքին տարածման:

Հինդլեան կը մահանայ 16 Փետրուար 1950-ին: Ան հեղինակ է բազմաթիւ դասագիրքերու, գրքոյկներու եւ մամուլին մէջ ցրուած մանկավարժական յօդուածներու:

ՍԱՐԶԻԿ, 36Դ-ՏԱՐԻ, ԹԻԲ 407

### ԳՐԻԳՈՐ ՅԱԿՈԲԵԱՆ

Այս անունին կապուած է մասնաւորապէս հայ սկստական շարժումը: Յակոբեան եղած է անոնցմէ, որոնք Ա. Աշխարհամարտէն առաջ ուղղութիւն եւ քաջալերանք ցոյց տուած են Շաւարշ Քրիսեանին՝ մինչեւ որ ան մարմնակրթանքը դարձուցած է ասպարէզ ու ամբողջովին նուիրուած է անոր:



Ռոպէրթ Քոլէճի աշակերտ, պատանեկութենէն սէր ունեցած է մարմնակրթանքի հանդէպ: Այնքան, որ կապ կը հաստատէ փրոֆ. Տեպոնէի հետ՝ Փարիզ, եւ թղթակցութեամբ մարզական դասեր կ'առնէ անկէ: Միաժամանակ կը զարգացրնէ իր մարմինը: Յակոբեան օր ըստ օրէ խանդավառուելով՝ կը ջանայ Ռոպէրթ Քոլէճէն դուրս եւս զբաղիլ ֆիզիքական դաստիարակութեան գործով: Պոյսը գիւղին մէջ ան կը կազմէ «Պայթա-Լիման» անունով ֆութպոլի խումբը, որ առաջին հայկական խումբը կ'ըլլայ Պոլսոյ մէջ եւ անուանի կը դառնայ:

Մահամանադրութեան շրջանին, ուրիշ վեթերաններու հետ, Շաւարշ Քրիսեանին կը թելադրէ հրատարակել թերթ մը, ինք եւս յանձն առնելով նիւթական գոհողութիւններ:

Սկիւտարի մէջ, ան կը կազմէ սկստական խումբ մը, ու վարիչը կ'ըլլայ Սկիւտարի Հայ Մարզարանին, երբ Մկրտիչ Մկրեան Եւրոպա կը մեկնի: Զինադադարին, երբ Գրիգոր Յակոբեանի հրակէրով Պոլսոյ մարզական միութիւններու ներկայացուցիչները հիմը կը դնեն Հ.Մ.Ը.Մ.ին, ան կը դառնայ հայ սկստականներու պետը, ներկայացնելով դասախօսութիւններ եւ դեկավարելով մարզական վարժութիւններ:

Յակոբեան կը մահանայ 1938-ին, Փարիզ:

### ՎԱՀԱՆ ԶԵՐԱՉ

Հայ մարմնակրթական շարժումի ամէնէն եռանդուն եւ նուիրեալ գործիչներէն մէկը: Ծնած է 1886-ին: Աշակերտ՝ Պոլսոյ Կեդրոնական Վարժարանին, ինքն է որ նոյն վարժարանի տղոց կը սորվեցնէ ֆութպոլը: Ան կը կազմէ «Մանթրալ» ֆութպոլի խումբը, որ ժամանակագրական կարգով, հայկական ֆութպոլի պատմութեան երկրորդ խումբն է: Զերազ այդ խումբով չի բաւարարուիր եւ կը ստեղծէ նաեւ Փրոթի կղզիի ֆութպոլի համաձայն խումբը եւ զլխաւոր օգին կը հանդիսանայ «Տորք» խումբին:



Պալքանեան պատերազմին կ'անցնի Փարիզ, ուր կը մնայ երկու տարի: Ա. Աշխարհամարտին կ'անցնի Կովկաս, իբրեւ կամաւոր: Կ'արձանագրուի Անդրանիկի հարիւրեակին:

1920-ին, Տիգրան Խոյեանի եւ Օննիկ Եզգմաճեանի հետ մաս կը կազմէ Հ.Մ.Ը.Մ.ի եռանդամ այն մարմնին, որ Հայաստանի կառավարութեան հրակէրով հայրենիք կ'երթայ սկստական եւ մարզական շարժում կազմակերպելու համար:

Հայաստանի մէջ, Չերազ աշխատանքի կեդրոն կ'ընտրէ Կիւմրին, ուր ան կը գբադի ամերիկեան որբանոցներու որբախնամի աշխատանքով: Որբերէն կը պատրաստէ սկաուտներ:

Հայաստանի խորհրդայնացումէն ետք, Չերազ իր աշխատանքները կը շարունակէ իբրեւ ամերիկեան որբանոցներու ուսուցիչ: Քէֆթըն Պրաունի օժանդակութեամբ կը կազմէ սկաուտական խումբեր եւ կը մարզէ որբեր: Կը գործէ դժուարին եւ նոյնիսկ անկարելի պայմաններու մէջ: Իր աշխատանքին բերումով, օր մը վէճ կ'ունենայ չեկիստի մը հետ, ու այդ դէպքը ճակատագրական կ'ըլլայ իրեն համար:

21 Դեկտեմբեր 1927-ին, Թիֆլիսի մէջ ան կը գնդակահարուի չեկիստներու կողմէ:



**ՎԱՐԳԱՆ ԲԱՆՇԵԱՆ**

Նորանկախ Հայաստանի Հ.Մ.-Լ.Մ.ական առաջին սերունդի հաւատաւոր ներկայացուցիչներէն մէկը կը հանդիսանայ եղբ. Վարդան Բախշեան, Հ.Մ.-Լ.Մ.ի Երեւանի մասնաճիւղին առաջին ատենապետը եւ Հ.Մ.-Լ.Մ.ի Կեդրոնական Վարչութեան հայրենի առաջին անդամը:

Եղբ. Վարդան Բախշեան ծնած է 1 Յունիս 1965-ին, Արմաւիր: Եղած է Արցախեան ժողովրդային շարժումի ճՈՒԴ (Հայ Ուսանողութեան Դաշինք) միաւորման հիմնադիրներէն: 2 Դեկտեմբեր 1989-ին, Հայաստանի մէջ Հ.Մ.-Լ.Մ.ի վերընձիւղումէն ետք, եղբ. Վարդան կ'ըլլայ Հ.Մ.-Լ.Մ.ի Երեւանի մասնաճիւղի կազմութեան նախաձեռնողներէն մէկը եւ վարչութեան առաջին ատենապետը: Ապրիլ 1991-ին, ան կը մասնակցի Հ.Մ.-Լ.Մ.ի Ե. Պատգամաւորական Ընդհանուր Ժողովին եւ կ'ընտրուի Հ.Մ.-Լ.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ:

16 Դեկտեմբեր 1991-ին, եղբ. Բախշեան կը նահատակուի Արցախի Հասանապատ գիւղի ազատագրման կռիւներուն:



**ՎԻՊԷՆ ԶԱՔԱՐԵԱՆ**

Շուշիի ազատագրման կռիւներուն զոհուած Հ.Մ.-Լ.Մ.ական նահատակն է եղբ. Վիգէն Զաքարեան:

Ան ծնած է 1969-ին, Պուրճ Համուտ: Փոքր տարիքին անդամակցած է Հ.Մ.-Լ.Մ.ին, նախ իբրեւ տարազաւոր դայիկ ու ապա՝ սկաուտ, երէց: Աւելի ուշ,

ան մաս կազմած է Հ.Մ.-Լ.Մ.ի Լիբանանի հեծելարչաւի խումբին: Միաժամանակ, ան անդամակցած է Հ.Յ.Դ. Լիբանանի Երիտասարդական Միութեան եւ իր մասնակցութիւնը բերած է Լիբանանի քաղաքացիական պատերազմի օրերուն՝ հայահոծ թաղերու ինքնապաշտպանութեան աշխատանքին:

Արցախեան պայքարի կոչին անսարով, Ապրիլ 1992-ին եղբ. Վիգէն կը մեկնի Հայաստան՝ անցնելու համար Արցախ: Կը

մասնակցի Շուշիի ազատագրման հերոսական կռիւներուն եւ կը նահատակուի Լիսազորի բարձունքներուն դիմաց՝ 8 Մայիս 1992-ին: Կը թաղուի Եւաբլուրի նահատակաց պանթէոնը, Երեւան:

Յետ-մահու ան կը պարգեւատրուի Լ.Ղ. Հանրապետութեան «Մարտական խաչ» երկրորդ աստիճանի շքանշանով եւ «Արիութեան համար» մետալով:



**ԲԻԻԶԱՆԳ ԹՈՐԻԿԵԱՆ**

Եղբ. Թորիկեան կը նկատուի Հ.Մ.-Լ.Մ.ի սփիւռքեան գործունէութեան երկրորդ սերունդի ամէնէն կարկառուն դէմքերէն մէկը, որուն վիճակուած էր, հաւատաւոր այլ Հ.Մ.-Լ.Մ.ականներու հետ, Հ.Մ.-Լ.Մ.ը համազարուլթային կազմակերպութեան վերածելու պատասխանատու աշխատանքը: Ան ծնած է Հալիպ, 1931-ին եւ փոքր տարիքէն փոխադրուած է Լիբանան:

Եղբ. Թորիկեան Հ.Մ.-Լ.Մ.ին մաս կը կազմէ 1943-ին, Պէյրուտի Ս. Նշան վարժարանի աշակերտութեան օրերուն, հանրածանօթ Հ.Մ.-Լ.Մ.ական եղբ. Լեւոն Աբգարեանի շնորհիւ: Այնուհետեւ, ընտանեօք ան կը փոխադրուի Ճիւնի, ուր 1951-ին կը հանդիսանայ Հ.Մ.-Լ.Մ.ի Ճիւնիի մասնաճիւղի հիմնադիրներէն: Մինչեւ 1957 ան մաս կը կազմէ Հ.Մ.-Լ.Մ.ի Ճիւնիի մասնաճիւղի յաջորդական վարչութիւններուն, ապա Պէյրուտի հաստատուելով՝ վարչական գործունէութիւնը կը շարունակէ Հ.Մ.-Լ.Մ.ի Պէյրուտի մասնաճիւղին մէջ, 1958-1968 ստանձնելով մասնաճիւղին վարչութեան ատենապետութեան պաշտօնը:

Եղբ. Բիւզանդ Թորիկեանի նախասիրութիւնը եղած է ամփթիթիզմը: Ան տիրացած է ամփթիթիզմի միջազգային իրաւարարի տիտղոսին: Իբրեւ Հ.Մ.-Լ.Մ.ի ներկայացուցիչ, 1965-ին եղած է լիբանանեան ամփթիթիզմի ֆետերասիոնի հիմնադիր անդամներէն մէկը, նաեւ՝ գլխաւոր հիմնադիրներէն ԼԵՎԱՄ-ի մարզախաղերուն:

1969-ին, եղբ. Բիւզանդ Թորիկեան ընտրուած է անդամ Հ.Մ.-Լ.Մ.ի Մերձաւոր Արեւելքի Շրջանային Վարչութեան, որ օրին կը նկատուէր միութեան գերագոյն մարմինը, տրուած ըլլալով որ ան կը ղեկավարէր Հ.Մ.-Լ.Մ.ի Սուրիոյ, Լիբանանի եւ Յորդանանի մասնաճիւղերը: 1969-1974 Մերձաւոր Արեւելքի Շրջանային Վարչութեան մաս կազմէիէ ետք, 1974-ին Հ.Մ.-Լ.Մ.ի Պատգամաւորական առաջին Ընդհանուր Ժողովին, եղբ. Բիւզանդ Թորիկեան կ'ընտրուի Հ.Մ.-Լ.Մ.ի անդամակցող Կեդրոնական Վարչութեան անդամ: Հետագային, ան կը վերընտրուի 1979-ին եւ 1983-ին: Այսպէս, ան Հ.Մ.-Լ.Մ.ի համազարուլթային բարձրագոյն մարմիններուն մաս կը կազմէ 1969-1987՝ 18 տարի անընդմիջաբար: 1999-ին, չորս տարուան համար, ան դարձեալ կ'ընտրուի Հ.Մ.-Լ.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եւ կը վարէ միութեան ատենապետի պաշտօնը:

1990-ականներու սկիզբը, եղբ. Բիւզանդ Թորիկեան կը լծուի Հ.Մ.-Լ.Մ.ի հայանուէր գործունէութեան պատմագրութեան աշխատանքին եւ չորս հատորով կը հրատարակէ միութեան պատմութիւնը՝ նախահիմնադրութեան հանգրուանէն

մինչև 21-րդ դարու սկիզբը: «Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան Պատմութիւն» խորագրեալ իր ստուար աշխատասիրութիւնները լոյս կը տեսնեն 1995-ին, 1999-ին, 2003-ին եւ 2007-ին:

Ան ներկայ գտնուած է Հ.Մ.Ը.Մ.ի առաջին 10 Ընդհանուր Ժողովներուն: Յաճախ հանդէս եկած է բանախօսութիւններով եւ միութեան «Մարզիկ» պաշտօնաթերթին աշխատակցութիւններով: Երկար տարիներ մաս կազմած է «Մարզիկ»ի խմբագրական եւ վարչական կազմերուն: 2004-ին, ան արժանացած է Հ.Մ.Ը.Մ.ի բարձրագոյն՝ «Արժանեաց» շքանշանին:

Եղբ. Իւրզանդ Թորիկեան կը մահանայ 6 Դեկտեմբեր 2016-ին:

### ԳԱՆԻԷԼ ԳԱՆԻԷԼԵԱՆ

Հ.Մ.Ը.Մ.ի ճամբով իր բովանդակ կեանքը հայութեան եւ նորահաս սերունդներու դաստիարակութեան նուիրաբերած անձնագոհներէն մէկն է եղբ. Դանիէլ Դանիէլեան: Ան ծնած է փոքր Ասիոյ Մարզուան քաղաքը, 1909-ին: Հրաշքով կ'ազատի Եղեռնէն ու ընտանեօք կը հաստատուի Պոլիս: Հոն կը յաճախէ տեղւոյն Հինդեան վարժարանը եւ կը մտնէ Հ.Մ.Ը.Մ.ի շարքերը:



1922-ին, յոյն-թրքական պատերազմէն ետք կը փոխադրուի Սեւանի: Տակաւին ուսանող, եղբ. Դանիէլ մարմնամարզի հանդէպ մեծ սէր ունենալով՝ կը դառնայ վարպետ Ֆուլթպոլիստ եւ պասթեթպոլիստ:

1928-ին, ան կ'ընտրուի Հ.Մ.Ը.Մ.ի Սեւանիկի մասնաճիւղի վարչական:

1930-1936, եղբայր Դանիէլ մնայուն կերպով կը մասնակցի Յունաստանի Ֆուլթպոլի ազգային խումբին մրցումներուն, պատիւ բերելով ո՛չ միայն իր անձին, այլեւ՝ հայութեան:

1936-ին, Պերլինի 11-րդ ողիմպիականին, յունական մարզական Ֆետերասիոնին որոշումով, եղբ. Դանիէլ կ'ըլլայ ողիմպիական ջահը պատմական Ողիմպիայէն Պերլին փոխադրող ջահագնաց մարզիկներէն մէկը:

Նոյն տարին, Աթէնք հաստատուելով, ան կ'ընտրուի Հ.Մ.Ը.Մ.ի Յունաստանի Երջանային Վարչութեան անդամ, ստանձնելով ատենադպիրի պաշտօն:

1946-ին, եղբ. Դանիէլ, եղբ. Համօ Մեհրապեանի հետ գործակցաբար, Աթէնքի մէջ կը հրատարակէ Հ.Մ.Ը.Մ.ի «Մարմնամարզ» պարբերաթերթը:

1952-ին, Հ.Մ.Ը.Մ.ի Յունաստանի Երջանային Վարչութեան կազմակերպութեամբ եւ եղբ. Դանիէլի պատասխանատու խմբագրութեամբ, Հ.Մ.Ը.Մ.ի Յունաստանի Ֆուլթպոլի խումբը կ'այցելէ Պէյրութ, Հայէպ եւ Դամասկոս ու տեղական Ա. դասակարգի խումբերու դէմ մրցելով՝ կ'արձանագրէ պատուաբեր արդիւնքներ:

1967-ին, երկար տարիներ Հ.Մ.Ը.Մ.ի Յունաստանի Երջանային Վարչութեան մաս կազմելէ ետք, եղբ. Դանիէլ ընտանեօք կը փոխադրուի Գանատա:

1974-ին, Պէյրութի մէջ գումարուած Հ.Մ.Ը.Մ.ի Առաջին Պատգամաւորական Ժողովին, ան կ'ընտրուի Հ.Մ.Ը.Մ.ի

անդրանիկ Կեդրոնական Վարչութեան անդամ: Ան կը մահանայ 9 Նոյեմբեր 1980-ին, Մոնթրէալ:

### ՄԻՀՐԱՆ ՇԻՄՇԻՐԵԱՆ

Եղբ. Միհրան Շիմշիրեան ծնած է 1942-ին, Պէյրութ: Փոքր տարիքին ընտանիքին հետ փոխադրուած է Դամասկոս, ուր Հ.Մ.Ը.Մ.ին անդամակցած է 1947-ին, իբրեւ գայլիկ: 1963-1965 եղած է Դամասկոսի մասնաճիւղի վարչական: 1965-էն սկսեալ ան մասնակցած է Հ.Մ.Ը.Մ.ի Մերձաւոր Արեւելքի գրեթէ բոլոր Պատգամաւորական Ժողովներուն: 1961-ին եւ 1963-ին մասնակցած է Աւստրիոյ եւ Յունաստանի մէջ տեղի ունեցած սկաուտական միջազգային ճամպորիներուն: 1965-ին վերադարձած է Պէյրութ եւ, այնուհետեւ, մինչև 1974 Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի սկաուտական շարքերուն ծառայած է իբրեւ Աքելլայ, Երջանային Աքելլայ, Երջանային Սկաուտ. Խմբագետ եւ Երջանային Ընդհանուր խմբագետ:



1973-1992 եւ 1995-2002, 26 տարի շարունակ եղբ. Շիմշիրեան մաս կազմած է Լիբանանի սկաուտական Ֆետերասիոնին եւ Լիբանանը ներկայացուցած է արաբական ու միջազգային բազմաթիւ համագումարներու՝ Լիպիա, Օման, Անգլիա, Սենեկալ, Մ. Նահանգներ:

Միաժամանակ, 1974-1976 ան մաս կազմած է Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Երջանային Վարչութեան, իսկ 1983-1999 եւ 2007-2014՝ վեց Կեդրոնական Վարչութիւններու: Այս միջոցին, միութեանական առաքելութեամբ ան գտնուած է Հ.Մ.Ը.Մ.ի կազմակերպական գրեթէ բոլոր շրջանները: Հայաստանի անկախացումէն ետք, սկաուտական միջազգային իր ծանօթութիւններուն բերումով ան կարեւոր դեր ունեցած է Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի միջազգային սկաուտական շարժումի անդամակցութեան նախաքայլերուն մէջ:

2001-ին եղբ. Շիմշիրեան արժանացած է Լիբանանի սկաուտական Ֆետերասիոնի բարձրագոյն շքանշանին: 2006-ին ան պարգևատրուած է լիբանանեան պետութեան երիտասարդութեան եւ մարմնամարզի նախարարութեան կողմէ: Տարի մը ետք, ան արժանացած է միութեան բարձրագոյն՝ «Արժանեաց» շքանշանին:

Եղբ. Շիմշիրեան կը մահանայ 16 Փետրուար 2014-ին:

### ՅՈՎՀԱՆՆԷՍ ՊԱՅԹԱՐԵԱՆ

Յովհաննէս Պայթարեան կը ծնի 1915-ին, հայ ժողովուրդի պատմութեան արհաւիրքի օրերուն, իբրեւ կիւրինցի ծնողքի մը երկրորդ զաւակը: Դժբախտ ճակատագիրը այնպէս մը կը տնօրինէ, որ, նոյն տարին, մանուկ Յովհաննէսին հայրը թրքական վայրագ Յեղասպանութեան զոհ



կ'երթայ, իր այրիին ձգելով գոյգ զաւակներուն հոգածութեան ամբողջ բեռը: Մայրը, ամէն գոհողութիւն յանձն առնելով, կը յաջողի իր զաւակները իրենց ծննդավայրին մէջ խնամել մինչեւ 1925, երբ իր եղբօր՝ Հայկին հետ, Յովհաննէս կը փոխադրուի Պէյրուս:

Պէյրուսի մէջ, պատանի Յովհաննէս, Ազգային Ս. Նշան Վարժարան յաճախելով կ'աւարտէ իր նախնական ուսումը, ապա երկու տարեշրջան բախտը կ'ունենայ յաճախելու Համազգայինի նորաբաց Ճեմարանը, ներշնչուելով Շանթի ու Աղբալեանի գաղափարապաշտ մթնոլորտէն, ինչպէս իր դասընկերներէն Բաբգէն Փափագեանն ու Եղիկ Գոնեալեանը:

Գժբախտաբար, օրուան դժուրակ պայմանները պատճառ կ'ըլլան որ Յովհաննէսը շուտով նետուի կեանքի ասպարէզ, ինքնաշխատութեամբ կատարելագործելու համար ինքնակերտ անհատի տիպարը:

Այդ թուականներուն, Յովհաննէս միաժամանակ կ'անդամակցի Հ.Մ.Ը.Մ-ի Պէյրուսի սկաուտական շարքերուն եւ Հ.Յ.Դ «Բաբգէն Սիւնի» Պատանեկան Միութեան, իբրեւ ազգային գիտակցութեան կերտումի երկու հնոցներ:

Իբրեւ Հ.Մ.Ը.Մ-ի սկաուտական շարքերու անդամ, եղբ. Յովհաննէս կը փոխանցուի մասնաճիւղին մարմնամարզի ճիւղը եւ իր բաժինը կը բերէ հրապարակային հանդիսութեանց: Երիտասարդ Յովհաննէսի աշխատունակ նկարագիրն ու նախաձեռնող ոգին ուշագրաւ կ'ըլլան. մասնաճիւղին դեկավարութիւնը շուտով գինք կը հրաւիրէ ստանձնելու օժանդակ անդամի պարտականութիւններ: Անոր զանազան պաշտօններ կը վստահուին մարզական եւ սկաուտական յանձնախումբերու կազմերէն ներս:

1947-ին, առաջին անգամ ըլլալով, եղբ. Յովհաննէս Պայթարեան կ'ընտրուի Պէյրուսի մասնաճիւղի վարչութեան անդամ, ստանձնելով ատենապետի պատասխանատու պաշտօնը: Այնուհետեւ, կարճ ընդմիջումներով, ան մաս կը կազմէ վարչական զանազան կազմերու, աւելի քան տասնհինգ տարի:


1974-ին, Հ.Մ.Ը.Մ-ի նորագոյն շրջանի Պատգամաւորական անդրանիկ Ընդհանուր Ժողովը եղբ. Յովհաննէս Պայթարեանը կ'ընտրէ Կեդրոնական Վարչութեան անդամ, հաշուապահի պաշտօնով:

Իբրեւ վարչական, եղբ. Պայթարեանի համեստ ու սակաւախօս բնավորութիւնը գինք հեռու կը պահէ արտաքին շռայլ երեւոյթներէ, բայց աշխատունակ եւ հմուտ վարչականի իր փորձառութիւնները, իրատես եւ գործնական մարդու իր կարողութիւնները իրենց կշիռը կ'ունենան վարչական ժողովներու ընթացքին: Կարեւոր ու հիմնական որոշումներու պարագաներուն, եղբ. Պայթարեանի անհասանելի եւ անկողմնակալ միջամտութիւնները եզրակացութիւններու վերջնական ուղղութիւնը կը ճշդեն, գոհ ձգելով իր բոլոր գործակիցները:

1979-ին, Հ.Մ.Ը.Մ-ի Բ. Պատգամաւորական Ընդհանուր Ժողովին, Յովհաննէս Պայթարեան դարձեալ կ'ընտրուի Կեդրոնական Վարչութեան անդամ:

Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի Շրջանային Վարչութիւնը «Մառաշուկեան» շքանշանով եւ Կեդրոնական Վարչութիւնը «Արժանեաց» շքանշանով կը պարգեւատրեն գինք, 1993-ին, զնահատելով իր երկարամեայ գործունէութիւնը՝ շարքերէն ներս:

Եղբ. Յովհաննէս կը մահանայ 21 Յունուար 1993-ին:



## ՆՇԱՆ ԹԻՒՍԻՒՉԵԱՆ

Բազմավաստակ Հ.Մ.Ը.Մ-ական եղբ. Նշան Թիւսիւզեան ծնած է 1911-ին, Տիրքանակերտ:

Փոքր տարիքին, թրքական հալածանքէն փախուստ տալով, ընտանիքին հետ փոխադրուած է Հայկազ, ուր յաճախած է Ազգային Հայկազեան Վարժարանը՝

ստանալով ազգային առողջ դաստիարակութիւն:

Պատանի տարիքէն կ'անդամագրուի Հ.Մ.Ը.Մ-ի սկաուտական շարքերուն: Նշանաւոր դէմքերէն մէկը կ'ըլլայ Հ.Մ.Ը.Մ-ի Հայկազի սկաուտական շարժումի տարածման եւ կազմակերպման: Պարզ սկաուտ, ապա խմբապետ, Սկաուտ. Խորհուրդի անդամ եւ Հայկազի մասնաճիւղի վարչական՝ Նշան Թիւսիւզեան կը դառնայ Հ.Մ.Ը.Մ-ի բոլոր ձեռնարկներու յաջողութեան նպաստող կարեւորագոյն աշխատողներէն մէկը:

Կը մասնակցի Հ.Մ.Ը.Մ-ի Սուրբոյ եւ Լիբանանի բոլոր Շրջանային Ժողովներուն, ինչպէս նաեւ՝ միութեան համագաղութային կառոյցին ստեղծումէն ետք, Ա. եւ Բ. Պատգամաւորական Ժողովներուն: 1974-1980 ան մաս կը կազմէ Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան՝ զանձապահի պատասխանատու պաշտօնով:

Հ.Մ.Ը.Մ-ի գործերուն առընթեր, Նշան Թիւսիւզեան կը տանի նաեւ կուսակցական աշխատանք, ստանձնելով պատասխանատու պաշտօններ:

1961 Օգոստոսին, ան կը փոխադրուի Լիբանան, Պէյրուս, ուր կը շարունակէ ազգային եւ միութենական գործունէութիւնը: Կ'ըլլայ Ազգային իշխանութեան տնտեսական խորհուրդի անդամ եւ կը լծուի Հ.Մ.Ը.Մ-ի սկաուտական շարժումի վերաշխուժացման աշխատանքին:

1973-ին, հայ սկաուտութեան հիմնադրութեան վախճանամեակին, լիբանանեան պետութեան կողմէ ան կը պարգեւատրուի՝ առ ի զնահատանք Սուրբոյ եւ Լիբանանի մարզական եւ սկաուտական կեանքին իր ունեցած ներդրումին:

Կը մահանայ 26 Մայիս 1980-ին:



## ՍԻԱՍԱՆԹՕ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

Եղբ. Սիամանթօ Կարապետեան ծնած է 20 Յուլիս 1939-ին, Թեհրան: Նախնական եւ բարձրագոյն կրթութիւնը ստացած է Թեհրանի մէջ: Փոքր տարիքէն ան մաս կազմած է Իրանի Հայ Մշակութային Արարատ Կազմակերպութեան (Հ.Մ.Ա.Կ.):

1964-ին ան կը պսակուի էլքա Ղահրամանեանի հետ եւ կը բախտաւորուի երկու զաւակով՝ Էմիլ եւ Գարօյին:

1981-ին, եղբ. Սիամանթօ ընտանիքին հետ կը հաստատուի Լոնտոն: Թէ՛ Իրանի եւ թէ՛ Լոնտոնի մէջ ան կը վարէ շինարարական անձնական ընկերութիւն:

1985-ին, երբ Լոնտոնի Հայ Սկաուտական Միութիւնը

Հ.Մ.Լ.Մ-ին կը միանայ եւ Մեկուսի շրջան կը դառնայ, եղբ. Սիւսանթո կ'ընտրուի Հ.Մ.Լ.Մ-ի Լոնտոնի մասնաճիւղի անդրանիկ վարչութեան անդամ եւ ատենապետ: Ան կարեւոր դեր կ'ունենայ Լոնտոնի մէջ կատարուած համա-Հ.Մ.Լ.Մ-ական Գ. ընդհանուր բանակումի կազմակերպման աշխատանքներուն մէջ:

Իր ժրջան գործունէութեան շնորհիւ, եղբ. Սիւսանթո 1987-ին կ'ընտրուի Հ.Մ.Լ.Մ-ի Կեդրոնական Վարչութեան անդամ, իբրեւ Եւրոպայի ներկայացուցիչ:

1988-ին, գլխաւորաբար իր ջանքերով եւ նուիրատուութեամբ կը հիմնուի Լոնտոնի Հայ Կեդրոնը՝ Armenian Community Center-ը (ACC):

Նոյն տարին, Հայաստանը հարուածած երկրաշարժէն անմիջապէս ետք ստեղծուած ACC-ն կը վերածուի աղէտեալներու օժանդակութեան շտապի: Այս առթիւ եղբ. Սիւսանթո կը նուիրէ 20 շարժական տնակներ, որոնք անմիջապէս կ'ուղարկուին Սպիտակ:

Միաժամանակ, եղբ. Սիւսանթո հիմնադրներէն մէկը կը հանդիսանայ Անգլիոյ մէջ կազմակերպուած «Aid Armenia»-ի: Այդ կազմակերպութեան շնորհիւ, 1990 թուականին բացումը կը կատարուի Վանաձորի մանկական հիւանդանոցին:

Իր ջանքերով, 1989 թուականին, կը կազմակերպուի երկրաշարժի հետեւանքով որբացած երեխաներու Լոնտոն երկարատեւ այցելութիւնը, որուն ընթացքին ան եւ գաղութի այլ անդամներ մկրտութեան կնքահայր կը հանդիսանան երախաներուն եւ շարունակաբար կը հովանաւորեն զանոնք:

20 փետրուար 1989-ին, երկրաշարժի աղէտեալ գօտիին վերականգնման գործին իր ունեցած կարեւոր ներդրումին համար, եղբ. Սիւսանթո Ամենայն Հայոց Վազգէն Ա. Կաթողիկոսէն կը ստանայ «Գրիգոր Լուսաւորիչ» շքանշանը:

Լոնտոն հաստատուելէ ետք, 35 տարի շարունակ, եղբ. Սիւսանթո իր աշխոյժ մասնակցութիւնը կը բերէ Լոնտոնի հայ գաղութի կեանքին: 1980-ական տարիներուն ան կ'անդամակցի բրիտանահայ համայնքային ու եկեղեցական խորհուրդին եւ իր կապերը միշտ սերտ կը պահէ հայրենիքին հետ:

Եղբ. Սիւսանթո կը մահանայ 27 Մայիս 2016-ին, խոր վիշտ պատճառելով իր հարազատներուն եւ Հ.Մ.Լ.Մ-ի մեծ ընտանիքին:

**ՎԱՀՐԱՄ ԴԱՆԻԷԼԵԱՆ**

Եղբ. Վահրամ Դանիէլեան ծնած է 1945-ին: Իբրեւ գայլիկ, ան Հ.Մ.Լ.Մ-ի մեծ ընտանիքին կը միանայ փոքր տարիքին, իր ծննդավայր Ֆիքսի մէջ, Յունաստան: Տարիներ շարունակ իր աշխոյժ մասնակցութիւնը կը բերէ Հ.Մ.Լ.Մ-ի տեղոյն մասնաճիւղի աշխատանքներուն եւ իր հօրեղբօր՝ Դանիէլ Դանիէլեանի օրինակին հետեւելով կը դառնայ փայլուն մարզիկ:



1962-ին, եղբ. Վահրամ իր ծնողներուն հետ կը հաստատուի Մոնթրէալ, Գանատա, ուր ան կը շարունակէ միութենական իր աշխատանքը եւ մեծ ներդրում կ'ունենայ Հ.Մ.Լ.Մ-ի «Արմենիա» ֆութպոլի խումբի կազմութեան մէջ: Տարիներ շարունակ ան կը հանդիսանայ այդ խումբին սիւներէն մէկը, միաժամանակ ստանձնելով միութենական զանազան պատասխանատուութիւններ:

1981-ին, եղբ. Վահրամ ընտանիքին հետ կը հաստատուի Միացեալ Նահանգներ, Ֆլորիտա եւ նոյն տարին իր ջանքերով ու ժրջան աշխատանքով կը հիմնուին հարաւային Ֆլորիտայի Հ.Մ.Լ.Մ-ի մասնաճիւղը եւ ազգային այլ կառույցներ: Տարիներ շարունակ իր անվերապահ օժանդակութեամբ ան կը սատարէ Հ.Մ.Լ.Մ-ի Ֆլորիտայի մասնաճիւղին եւ ազգային կառույցներու յարատեւման ու բարգաւաճման:

2003-ին, Հ.Մ.Լ.Մ-ի 8-րդ Պատգամաւորական Ժողովին ան կ'ընտրուի Հ.Մ.Լ.Մ-ի Կեդրոնական Վարչութեան անդամ, որուն մաս կը կազմէ յաջորդական երկու շրջան՝ 2003-2007 եւ 2007-2011:

Եղբ. Վահրամ իր համեստ խառնուածքով եւ նախանձելի նուիրումով կ'ըլլայ օրինակելի Հ.Մ.Լ.Մ-ական եւ ղեկավար: Ան կը մահանայ 1 Յունուար 2014-ին:

Յետ-մահու, Հ.Մ.Լ.Մ-ի Կեդրոնական Վարչութեան որոշումով, ան կը պարգեւատրուի միութեան բարձրագոյն՝ «Արժանեաց» շքանշանով:

Եղբ. Վարդգէս Ալահայտյեան ծնած է 1929-ին, Ղազիր, Լիբանան: Պէյրութի Հայ Աւետ. Քոլէճէն վկայուելէ ետք, ան մուտք կը գործէ դրամատանային գործունէութեան ասպարէզ: Պասքեթպոլ կը խաղայ կանուխէն: 1950-1955 ան մաս կը կազմէ Հ.Մ.Լ.Մ-ի Պէյրութի մասնաճիւղի պասքեթպոլի տղոց խումբին:

**ՎԱՐԳԵՍ ԱԼԱՎՅՏՈՅԵԱՆ**



1955-ին, Ֆլորա Պալեանի հետ ան կը կազմէ ընտանեկան իր բոյնը եւ կը տեղափոխուի Վըրճինիա, Մ. Նահանգներ:

Մ. Նահանգներու մէջ, եղբ. Վարդգէս կը շարունակէ դրամատանային իր գործունէութիւնը եւ 1966-ին կը սկսի գործել Ուաշինկթընի Միջազգային Դրամատան մէջ, որուն իբրեւ ներկայացուցիչ ան կ'ուղարկուի Լիբանան, իբրեւ նորաստեղծ Transorient դրամատան Պէյրութի տնօրէն:

Լիբանան վերադարձին, եղբ. Վարդգէս կը շարունակէ միութենական իր գործունէութիւնը: 1968-1969 ան մաս կը կազմէ Հ.Մ.Լ.Մ-ի Պէյրութի մասնաճիւղի վարչութեան, իսկ 1971-1974՝ Հ.Մ.Լ.Մ-ի Մերձաւոր Արեւելքի Շրջանային Վարչութեան:

1974-ին, միութեան համագաղութային առաջին Պատգամաւորական Ժողովին, եղբ. Վարդգէս կ'ընտրուի Հ.Մ.Լ.Մ-ի անդրանիկ Կեդրոնական Վարչութեան անդամ՝ 1974-1979: Ան կը վերընտրուի նաեւ երկրորդ շրջանի մը համար՝ 1979-1983:

1991-ին, եղբ. Վարդգէս եւ Ֆլորա Ալահայտյեաններ կը ստանձնեն Արեւմտեան Մ. Նահանգներու Նաւասարդեան 16-րդ մարզախաղերուն նախագահութիւնը:

Եղբ. Վարդգէս Ալահայտյեան կը մահանայ Հոկտեմբեր 2016-ին:



### ԱՐԱՄԷՆ ՏԷՅԻՐԱՏՆԵԱՆ

Եղբ. Արամէն Տէյրմէնճեան ծնած է 1937-ին, Պէյրուս, Լեւոն եւ Արաքսի Տէյրմէնճեաններու ընտանեկան յարկին տակ: Ան Հ.Մ.-Լ.Մ.ի Պէյրուսի սկաուտական շարքերուն կ'անդամակցի 1943-ին:

Աւելի ուշ, եղբ. Արամէն կը տեղափոխուի Արեւմտեան Մ. Նահանգներ եւ եւ մաս կը կազմէ Հ.Մ.-Լ.Մ.ի Լոս Անճելըսի մասնաճիւղին, որուն յաջորդական վարչական կազմերուն մաս կը կազմէ 1970-1974:

1974-ին, եղբ. Արամէն կը մասնակցի Հ.Մ.-Լ.Մ.ի Արեւմտեան Մ. Նահանգներու շրջանի հիմնադիր Շրջանային Ներկայացուցչական Ժողովին եւ կ'ընտրուի անդրանիկ Շրջանային Վարչութեան անդամ՝ ատենադպիրի պաշտօնով: Դեկտեմբերին, ան կ'ընտրուի Հ.Մ.-Լ.Մ.ի անդրանիկ Կեդրոնական Վարչութեան անդամ՝ 1974-1979: Երկրորդ շրջանի մը համար ան կը վերընտրուի՝ 1979-1983:

Եղբ. Արամէն իր մասնակցութիւնը կը բերէ Հ.Մ.-Լ.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի Երեւանի կեդրոնի վերանորոգման աշխատանքներուն եւ կ'արժանանայ համապատասխան գնահատագրի:

Եղբ. Արամէն Տէյրմէնճեան կը մահանայ 2015-ին:



### ՏԻԳՐԱՆ ՈՍԿՈՒՆԻ

Տիգրան Ոսկունի, բուն անունով Տիգրան Գուլումճեան, ծնած է Դամասկոս, 1925-ին: Նախնական կրթութիւնը ստացած է տեղւոյն Միացեալ Վարժարանը, իսկ երկրորդականը՝ Դամասկոսի Փրանսական լիսէն:

1945-ին, ընտանեօք ան փոխադրուած է Պէյրուս եւ մուտք գործած է լրագրական ասպարէզ: 1946-1976, երեսուն տարի ան մաս կազմած է «Ազդակ» օրաթերթի խմբագրութեան՝ 1952-1958 վարելով նաեւ «Ազդակ-Մարզական»ի խմբագրութիւնը: Շրջան մը մաս կազմած է նաեւ «Ազդակ Շաբաթօրեակ»ի եւ աւելի ուշ՝ «Բագին»ի խմբագրութիւններուն: Ան Փրանսացի հեղինակներէ թարգմանած է աւելի քան 20 գիրքեր: Գրած է «Այրող մայրիներ» գիրքը:



Ոսկունի գործօն մասնակցութիւն բերած է լիբանանահայ ազգային, մշակութային եւ կուսակցական կեանքին: 1961-1962 ան եղած է Հ.Մ.-Լ.Մ.ի Պէյրուսի մասնաճիւղի վարչութեան անդամ: Բազմիցս մասնակցած է Հ.Մ.-Լ.Մ.ի Մերձաւոր Արեւելքի Շրջանային Վարչութեան Պատգամաւորական Ժողովներուն:

1974-ին, միութեան համագաղութային առաջին Պատգամաւորական Ժողովին, Ոսկունի կ'ընտրուի Հ.Մ.-Լ.Մ.ի անդրանիկ Կեդրոնական Վարչութեան անդամ՝ 1974-1979:

1976-ին, ան կը մեկնի Մ. Նահանգներ եւ կը հաստատուի Սան Ֆրանսիսքօ, ուր կը շարունակէ իր հանրային եւ հրապարակագրական գործը: Կը խմբագրէ «Նոր Կեանք» շաբաթաթերթը: 2003-ին, Ամենայն Հայոց Գարեգին Բ. Կաթողիկոս Ոսկունիի կը շնորհէ «Ս. Մեսրոպ Մաշտոց» շքանշանը:

Ոսկունի կը մահանայ 26 Փետրուար 2005-ին:

# ԻՐԱՒԱՐԱՐՆԵՐ






**ՄԱՐԶԻՉՆԵՐ**



# ՄԱՐԶԻԿՆԵՐ



# ՀԱՄԱԿԻՐՆԵՐ



**ԵՐԻՏԱՍԱՐԴ Զ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆԸ  
ԱԼԵՅԵՐ ՄԱՍԻՍԻ ՇՈՒՔԻՆ ՏԱԿ**



